

3-4 (293-294)
20.02.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուքին եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

«ԵՍ ԵՐՋԱՆԻԿ ԵՄ, ՈՐ ԱՅՂ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԿԻՍԵՑԻ ՁԵՁ ՀԵՏ»

Փետրվարի 7-ին մայրաքաղաքի մշակույթի և երիտասարդության պալատում կայացավ Ցվետանա Պաս-

նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, պետական այ-

տի վերաբերյալ ռեժիսորի յոթ վավերագրական ֆիլմ («Բարձունքներ, հույսեր»-1991թ., «Կրակի», արդյոք, առավուրդ Ղարաբաղում»-1992թ., «Իմ թանկահին ողջեր և մեռածներ»-1993թ., «Ղարաբաղի վերքերը»-1994թ., «Իրենց հողի զինվորները»-1994թ., «Լուսթյուն»-1995թ., «Հավատ ու ոգի»-2001թ.), որոնք ծայրագրվել են վեց լեզվով՝ հայերեն, ռուսերեն, բուլղարերեն, անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն: Արցախի նախագահն ու բոլոր ելույթ ունեցողները բարձր գնահատեցին բուլղարացի կինոգործի նվիրումն ու դերը մեր երկրի համար ծանր ու դժվարին մի ժամանակաշրջանի իրական պատմությունը վավերագրելու, ազգային-ազատագրական պայքարը ճշմարտացի լուսաբանելու և աշխարհին ներկայացնելու գործում: Շնորհանդեսի ընթացքում հեղինակը ֆիլմաշարի հավաստագրված տեսասկավառակները հանձնել է Բ. Սահակյանին, իսկ միջոցառումն ավարտվել է ֆիլմերից երկուսի ցուցադրությամբ:



կալայի «Ղարաբաղյան վերքեր» ֆիլմաշարի շնորհանդեսը: Ներկա էին ԼՂՀ թեր, մշակույթի գործիչներ: Ֆիլմաշարն ընդգրկում է Արցախյան ազատամար-

ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՄԻՋԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ Է ՆԵՐԿԱՅԱՆՐԵԼ

Եվրոպայի հայկական միությունների ֆորումի (նախագահ՝ Աշոտ Գրիգորյան) նախաձեռնությամբ երկօրյա այցով Արցախում էր Սլովակիայի պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված էին Սլովակիայի Ազգային խորհրդի առաջին տեղակալ Ֆրանտիշեկ Միկլոշկոն, Սկալիցա քաղաքի Միջին Եվրոպայի համալսարանի ռեկտոր Դեյդե Շվարցովան, գործարարներ: Այցի շրջանակներում պատվիրակությունը եղավ Արցախի պետական համալսարանում՝ համագործակցություն ծավալելու առաջարկությամբ: ԱրՊՀ-ի հետ ծանոթությունը հյուրերն սկսեցին գոհված ուսանող ազատամարտիկների հուշարձանին հարգանքի տուրք մատուցելով: ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանի մոտ տեղի ունեցած հանդիպմանը ներկա էին բուլի պրոռեկտորները, դեկանները և պա-



տասխանառու այլ աշխատողներ: Արցախի և Սլովակիայի համալսարանների ռեկտորները համառոտ ներկայացրին իրենց բուլիերի գործունեությունը: Սկալիցա քաղաքի Միջին Եվրոպայի համալսարանը յուրահատուկ է նրանով, որ ուսանողներին տալիս է համաեվրոպական դիպլոմ: ԵՀՄՖ նախագահ Աշոտ Գրիգորյանի հավաստմամբ, Եվրոպայում քիչ համալսարաններ ունեն այս իրավունքը, և մեծ նվաճում կարելի է համարել, որ նման համալսարանը ցանկու-



թյուն է հայտնել համագործակցել արցախյան բուլի հետ: Համագործակցության շրջանակներում բուլիերը կկատարեն ուսանողների փոխանակում, դասախոսների փոխադարձ այցեր, կփնանսավորվեն գիտական ծրագրեր: Ուսանողները որոշ եռամսյակ այստեղ սովորելով՝ ավարտելուց հետո ԱրՊՀ-ին զուգահեռ կստանան նաև այս բուլիի դիպլոմը: Ծրագրի ֆինանսավորումը կկատարի «Վիշեգրայան կրթաթոշակ» հիմնադրամը:

ԱրՊՀ ռեկտոր Ս. Դադայանը ողջունեց համագործակցության առաջարկությունը: Բուլիերի ռեկտորներն իրենց ստորագրությամբ վավերացրին համաձայնագիրը:

Սլովակիայի Միջին Եվրոպայի համալսարանը 2009թ. պայմանագիր է կնքել Երևանի ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի հետ և հաջողությամբ համագործակցում է:

Սեփ. Լրավուկյան

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՆՑԵԼ Է ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՓՈՒԼ

Նոր ուսումնական ռազմավարությունը (ՆՈՒՐ), որը մեկնարկել է այս ուսումնական տարեկազմին, մտել է երրորդ փուլ: Ինչպես գիտենք, այն անցկացվում է արգենտինացի մեծ բարերար Էդուարդո Էռնիկյանի հովանավորությամբ և Հայ բարեգործական ընդհանուր միության Արցախի ներկայացուցչության ու ԼՂՀ կառավարության՝ ի դեմս կրթության և գիտության նախարարության, աջակցությամբ: Ծրագիրը համակարգողի օգնական Մարգարիտա Գրիգորյանի տեղեկատվությամբ, փետրվարի 6-ից սկսվել է համակարգչային փորձնական դասերի անցկացումը 1-4-րդ դասարաններում՝ ըստ ժամանակացույցի, որը կտևի մեկ ամիս: Ստեփանակերտի և Շուշիի նշված դասարանների աշակերտները մեկամյա պարապմունք են անցնում համակարգչով: ՆՈՒՐ ծրագրում առայժմ ընդգրկված են նույն այս դպրոցների աշակերտները: Հիշեցնենք, որ առաջին փուլում

մակերպիչների հետ:

Եվ ահա փետրվարի 6-ից, ինչպես ասացինք, սկսվել է ՆՈՒՐ-ի երրորդ փուլը, որտեղ դասավարները փորձում են պարապմունքներ անցկացնել աշակերտների հետ համակարգչի օգնությամբ, այսպես ասած՝ գործնական պարապմունք: Փուլի ավարտից հետո համակարգիչներ կստանան արդեն աշակերտները, ամեն մեկը՝ անհատական. ծրագրի էությունն էլ հենց դա է. մեկ համակարգիչ՝ մեկ երեխայի: Ժամանակացույցով յուրաքանչյուր դպրոցի հատկացված է մեկ կամ երկու օր (նայած դասարանների քանակի): Պարապմունքներին ներկայանում է ծրագրի համակարգողի օգնականը՝ Մարգարիտա Գրիգորյանը, իսկ այդ ամենը վերահսկվում է ՀԲԸՄ Արցախի ներկայացուցչի Սասուն Բաղդասարյանի կողմից:

«Լուսարարը» ներկա եղավ թիվ 2 դպրոցի առաջին օրվա պարապմունքներին: Մ. Գրիգորյանը թեստեր բաժանեց երեխաներին՝ յուրաքանչյուր դասարանի համար համապատասխան առաջադրանքներով: Աշակերտները դրանք լրացնում էին ուսուցչուհու բացատրությանը զուգահեռ: Թեստերը շատ մատչելի են, բոլոր հարցերի պատասխանները վերջում գրված են, երեխան կարող է օգտվել տրված բառերից կամ գծանկարից: Բացի այդ, ուսուցչուհին բացատրում էր, և նրանք արձագանքում էին: Ամենաթույլ աշակերտի համար անգամ դժվար չէր կատարել առաջադրանքը: Մեկը կարող է արագ էր կատարում, մյուսը՝ ուշ, բայց բոլորն էլ ի վիճակի էին լրիվ հարցերին կամ նրանց մի մասին պատասխանել: Մ. Գրիգորյանը բացատրեց, որ դա ծրագրի կազմակերպիչների պահանջն է. ամեն ինչ պետք է լինի պարզ ու մատչելի, որպեսզի երեխաները «չվախենան» համաճարարությունից, հաճույքով կատարեն: Կոնկրետ 4-րդ «բ» դասարանում ուսուցչուհի Անահիտ Մելքումյանը համակարգչի պահպանման, խնամքի, գործողությունների մասին բացատրությունից ու աշակերտների կողմից թեստը լրացնելուց հետո հայոց լեզվի դաս անցկացրեց համակարգչով: Երեխաները գրեցին մի քանի տող թելադրություն, ապա երկու առաջադրանք՝ խոսքի մասերից և տրված բառերով կազմեցին նախադասություններ: Առաջադրանքն ամբողջությամբ կատարեցին 7-8 հոգի, բայց դասարանում չկար մի աշակերտ, որ որևէ բան արած չլիներ: Դասի ավարտին երեխաները համակարգչային խաղ խաղացին: Մ. Գրիգորյանի բացատրությամբ՝ այս մեթոդի առավելությունն այն է, որ հաջողությամբ խմբային՝ ինտերակտիվ պարապմունքներ են անցկացնում:



դպրոցների դասավարները և ինֆորմատիկայի ուսուցիչները մեկամյա վերապատրաստման դասընթացներ են անցել, որոնք վարել են Արգենտինայից ժամանած ուսուցիչները: Դրանից հետո դեկտեմբեր ամսին նրանք մասնակցել են վիրտուալ դասընթացների: Համապատասխան կայքի օգնությամբ ուսուցիչները կատարել են հեռավոր մայրցամաքում գտնվող ծրագրի կազմակերպիչների առաջադրանքները, պատասխանել տրված հարցաշարերին, մասնակցել ֆորումների: Այս փուլն ավարտելուց հետո ուսուցիչները ստացել են անհատական համակարգիչ և շարունակել պարապմունքներն ինքնուրույն, իհարկե, կապը պահելով կազ-

ԸՆԹԱՑՔ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ



Այսօր կրթությանը նորագույն տեխնոլոգիաներով համալրելը դարձել է նույնպիսի անհրաժեշտություն, ինչպես գույքով ապահովելը, քանզի ժամանակակից կրթություն առանց տեխնիկական միջոցների անհնար է: Տարեցտարի հարստացվում ու արդիականացվում են մեր կրթությանը տեխնիկական միջոցները: Կրթական քաղաքականության այս գլխավոր ուղղություններից մեկն իրականացվում է ինչպես պետական միջոցներով, այնպես էլ բարեգործական: Ի՞նչ ունենք այսօր այդ առումով՝ տեղեկություն է տալիս ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար, ոլորտի մասնագետ Երկի ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

կատվական դասարան՝ յուրաքանչյուրը շուրջ 3 մլն դրամ արժողությամբ: Նրա մեջ մտնում են 11 համակարգիչ, հեղուկ-բյուրեղային հեռուստացույց, պրոյեկտոր, որը ծառայում է որպես վիրտուալ գրատախտակ, բազմաֆունկցիոնալ տպող սարք և այլն: Այն, ինչ այսօր ունեն գարգացած երկրների դպրոցները:

- Ինչպե՞ս են բաշխվել դրանք: - Գործընթացը երբ սկսեցինք, առաջնահերթությունը տվեցինք ավագ և հոսքային դպրոցներին: Սկզբում ապահովվեցին Ստեփանակերտում գործող երկու ավագ դպրոցները, Շուշիի առանձնացված ավագ և Ասկերանի հոսքային միջնակարգ դպրոցները, այնուհետև աշակերտների թվաքանակով մեծ՝ մայրաքաղաքի թիվ 1 և 7 հիմնական դպրոցները: Մեր մոտեցումը հետևյալն է. սկզբում ապահովում ենք ավագ, հոսքային, հեմակետային դպրոցները: Բայց դա չի նշանակում, թե մյուսներն անտեսվում են: Աստիճանաբար նրանց էլ կհասնենք: Այս հարցում ամենամեծ օժանդակությունը եղել է Հայաստանի Հանրապետության կառավարությունից: 2011թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության միջոցով համակարգչային 10 կաբինետ է տրամադրվել:

- Իսկ համակարգչային դասարաններ բոլոր դպրոցներն ունեն: - Բոլորն էլ ապահովված են համակարգիչներով: Սակայն խնդիր ունենք նրանց թարմացման, արդիականացման: Չկա դպրոց, որտեղ համակարգիչ չլինի: Ծիշտն այն է, որ կաբինետային ուսուցում լինի, այսինքն՝ համակարգիչները կենտրոնացված լինեն մի տեղ, որպեսզի ուսուցումն արդյունավետ լինի: Այդ ուղղությամբ աշխատանք-

ները շարունակվում են: Օրերս Բեյրութի «Արցախֆոնտ»-ի ներկայացուցիչը զանգեց հերթական նվիրատվության հարցով (տարեկան 1-2 դպրոցի նվիրատվություն են ամում՝ համակարգչային դասարան ստեղծում): Այս հիմնադրամն անցած տարի Քարվաճառի դպրոցին հատկացրեց: Մեր կողմից առաջարկություն է եղել, որպեսզի ապահովեն Բերձորի թիվ 2 դպրոցը, Կովսականի դպրոցին դարձյալ հիմնադրամն է տրամադրել: Իսկ «Փյունիկ» հիմնադրամի կողմից տրամադրված համակարգիչներով նախարարությունը համակարգչային դասարան է ստեղծել նաև Ստեփանակերտի Ֆիզմաթ դպրոցում:

- Իսկ ինչպե՞ս են լուծվում այդ կաբինետների սպասարկման հարցերը:

- Ծախսերը հոգում է մեր նախարարությունը: Բյուջեում կան գումարներ՝ հատկացված այդ նպատակին, նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից կա աջակցություն: Նրանց մասնագետները նույնպես մեզ օժանդակում են: Մասնագետներին հրավիրում ենք հատկապես ծրագրերի հարցերով: Նրանք ամեն անգամ իրենց հետ մեր ծրագրեր են բերում, տրամադրում դպրոցներին: Այսինքն՝ դպրոցներին համակարգչային կաբինետ չենք հատկացրել ու մի կողմ քաշվել, նաև հետևում ենք նրանց գործունեությանը:

- Վստահ եք, որ համակարգիչները սոսկ որպես «անշարժ» գույք չեն ծառայում դպրոցում:

- Պարբերաբար մեզ տեղեկություն է հասնում, որ այս կամ այն դպրոցում կաբինետը չի օգտագործվում (չեն ուղում ասել՝ ի վիճա-

կի չեն): Ամմիջապես ստուգում ենք, կարգավորում հարցը: Ասենք, որ համակարգիչը նաև գիտելիքների լրացուցիչ աղբյուր է ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար: Այսօր շատ ուսուցիչներ իրենց դասերը կազմակերպում են համակարգչի օգնությամբ՝ ցուցադրելով նորագույն տեխնոլոգիաների օգտագործմամբ բաց դասեր: Մենք մեծ հույսեր ենք կապում նաև ՆՈՒԻ ծրագրի հետ, որը կխթանի ուսման արդյունավետության բարձրացմանը:

- Իսկ այժմ ամենակարևորի՝ համացանցի մասին: Համակարգիչն առանց ինտերնետի՝ նույնն է թե չօգտագործել նրա հնարավորությունները: Ի՞նչ է արվում այս ուղղությամբ:

- Այս հարցը միշտ էլ կարևորվել է, բայց անցած տարվա նոյեմբերից արդեն իրատապ է դարձել: Երկու տարի առաջ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, էլեկտրոնային կապի հնարավորություններից, Ստեփանակերտի և շրջանների 38 դպրոցները միացված էին ինտերնետ ցանցին: Այն ժամանակ գործում էր Dail-up կապը՝ 56 կեթ/վրկ արագությամբ, ինչը շատ ցածր էր, երբ համակարգչային բազան նորմալ էր: Ընդ, որում «Ղարաբաղ Տելեկոմ»-ը դա տրամադրում էր անվճար: Մեր կողմից առաջարկություն է եղել վերանայել կապը՝ հաշվի առնելով, որ նախարարության կողմից մեծ աշխատանքներ են տարվում դպրոցները ժամանակակից տեխնոլոգիաներով համալրելու ուղղությամբ: Անցած տարվա նոյեմբերից այդ 38 դպրոցները ինտերնետով ապահովվելու ծրագիրն ընկերության կողմից դադարեցվել է:

Այս տարվա պետական բյուջում յուրաքանչյուր շրջանի դպրոցների կեսի համար գումար է նախատեսված՝ 3 Մեթ/վրկ արագությամբ ինտերնետի համար: Հունվարի սկզբին «Ղարաբաղ Տելեկոմ» պատրաստականություն է հայտնել (ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը ընդունեց համապատասխան որոշում) դպրոցներին 3 Մեթ/վրկ արագությամբ ինտերնետ տրամադրել գործող սակագնի 10 տոկոսի փոխհատուցմամբ, որը կկազմի մոտ 1539 դրամ: Ներկա դրությամբ 27 (Ստեփանակերտի և շրջկենտրոնների բոլոր) դպրոցներ միացված են ինտերնետին: Այս պահի դրությամբ, ըստ «Ղարաբաղ Տելեկոմի» մասնագետների, աշխատանքներ են տարվում, որպեսզի սեղմ ժամկետում նաև ուրիշ դպրոցներ միանան համացանցին: Առաջիկայում ընկերությունը դպրոցների մոր ցանկ կներկայացնի մեզ:

Մեր նպատակն է հեռանկարում ունենալ դպրոցական ցանց, որի միջոցով նախարարությունը կկապվի բաժինների ու դպրոցների հետ: Նախարարության կայքի աշխատանքները նույնպես ավարտման փուլում են:

Շահագրգռված ենք, որ բոլոր դպրոցներում ինտերնետ լինի, անկախ նրանից, թե տեխնիկական ինչ բազա ունեն նրանք, թեկուզ ունենան մեկ համակարգիչ: Կառավարությունն էլ, ինչպես ասացինք, համապատասխան գումարներ է հատկացրել: Խնդիրը «Ղարաբաղ Տելեկոմի» պատրաստվածության մեջ է: Ես էլ խոստացել է կարգավորել այդ հարցերը:

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՆՑԵԼ Է ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՓՈՒԼ

1 Զնայած դեռ համակարգիչները միացված չեն համացանցին, սակայն դասարանում ներքին ցանցի առկայությամբ աշակերտները կարող են մտնել մեկը մյուսի համակարգիչ, շարունակել կամ լրացնել առաջադրանքը: Ուսուցիչն ըստ երեխաների կարողությունների, նրանց բաժանում է խմբերի, համապատասխան մակարդակի առաջադրանքներ տալիս, այսինքն՝ իրականացնում շերտավորված և անհատական ուսուցում, ինչը դժվար է անել սովորական դասին՝ 30 աշակերտների հետ:

Պետք է ասել, որ չնայած առաջին պարապմունքն էր անցկացվում, սակայն երեխաներն ակտիվորեն արծազանքում էին ուսուցչուհու պատմածին՝ գործածելով հայերեն տերմիններ: Դասվար Ա. Մելքունյանը, որը նաև թիվ 2 դպրոցի տարրականի գծով փոխտնօրենն է, պարզաբանեց, որ այս ամիսների ընթացքում, համակարգչային վերապատրաստման դասընթացներն ավարտելուց հետո ինքը և իր գործընկերներից ոմանք համակարգիչը տուն չեն տարել, ամեն դասաժամի երեխաների հետ համակարգչին ծանոթացնելու պահեր են անցացրել: արդյոք, իրենք՝ ուսուցիչները, կարող են սովորածը փոխանցել աշակերտներին, ինչպե՞ս են ընկալում, մի խոսքով՝ համակարգչի օգնությամբ գիտելիքների մատուցման սեփական փորձ ձեռք բերել: Բացի այդ, աշակերտներից շատերը համակարգչային որոշակի գիտելիքներ են ստանում տանը: Երեխաները հաճույքով էին կատարում ուսուցչի հանձնարարությունները և որ կարևոր է՝ ձգտում էին կատարել, անտարբեր չէին դասին:

Ընդմիջմանը, երբ մեթոդկաբինետում դասավարտերը հավաքվել էին մի փոքր համագտանալու և միմյանց հետ խորհրդակցելու, մեզ փոխանցեցին իրենց տպավորու-

թյունները: Անահիտ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.- Երկի մեզ տեսնողը կասի՝ մի՞թե սրանք այն տարակուսած ուսուցիչներն են, որոնց վերապատրաստման դասընթացների առաջին օրերին տեսանք: Որ ինչու են ի՞նչ շուկի մեջ էինք... Այն, ինչ սիրով



է արվում երեխայի կողմից, հեշտ է ստացվում, իսկ երբ հեշտ է՝ ճիշտ է ընկալում: Ես նրանք բացատրում են, որ տվյալ պահին գիրքը, տետրը, մատիտը, քանոնը, ռետինը համակարգիչն է: Դրանով պետք է կազմել, ենթադրենք, երկրաչափական պատկեր: Առանց սեղանը կեղտոտելու ռետինով ջնջում է, երկար չարչարվելու՝ պատկերը գծում, մնում է մտա-

ծել խնդրի լուծման վրա: Եվ անգամ երբ ճիշտ չի լուծում, համակարգիչը զգուշացնում է: Այսինքն՝ առաջադրանքը երեխան է կատարում, իսկ համակարգիչն օգնում է արագ կատարել գործողությունները: Մեր ժամանակի ռիթմը պահանջում է ամեն ինչ արագ տեմպով անել,

այլապես հետ կմնա կյանքից: Անժելա ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.- Սկզբում այնքան էլ ոգևորված չէինք, բայց հետո համոզվեցինք, որ դա անհրաժեշտություն է: Երբ տիրապետեցինք, մենք էլ տարվեցինք համակարգչով: Մեր հոգին երեխաների հետ է, և ինչ կապված է նրանց հետ, մեզ դուր է գալիս: Դասի արդյունավետությունը, իհարկե, կբարձրանա,

երբ երեխաներն էլ համակարգիչ ունենան: Մենք էլ պետք է լավ տիրապետենք: Լեզվական, մաթեմատիկական և մյուս առարկաների առաջադրանքները տրված են խաղի ձևով: Երեխան հաճույքով կսովորի և ավելի կգարգանա:

Անահիտ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ.- Սկզբում մտավախություն ունեինք, բայց ծանոթանալով համակարգչի հնարավորություններին, ծրագրերին, հասկացանք, որ դա ուղղակի անհրաժեշտություն է: Մասնավորապես, 21-րդ դարում հնարավոր չէ իրական կյանքի հետ շփումը պատկերացնել առանց համակարգչի: Երեխաներ կան, որ հնարավորություն չունեն համակարգիչ ձեռք բերել: Սա շատ շնորհակալ գործ է կազմակերպիչների կողմից, անկարող ընտանիքներն էլ տանը համակարգիչ կունենան: Ինչ մնում է դասի արդյունավետությանը, իհարկե, այն կբարձրանա: Բերեն թեկուզ երգերաժշտության օրինակը: Մենք չունենք երաժշտական գործիքներ, բայց աշակերտը հնարավորություն կունենա համակարգչի օգնությամբ տեսնել գործիքը, լսել ձայնը, նվագել: Կամ՝ «Ես և շրջակա աշխարհը» կգարգանա երեխայի աշխարհաճանաչողությունը, համացանցը հնարավորություն կտա ընկրմվել գիտելիքների աշխարհը:

Նարինե ԲԱԲՍՅԱՆ.- Ինչքան աշխատեցինք համակարգչով, որքան հմտացանք, այնքան հասկացանք, որ համակարգչով ավելի հետաքրքիր կանցնեն մեր դասերը: Պետք է քայլել ժամանակի հետ: Եվ եթե մենք անգամ չզնանք, երեխաները մեզ կտանեն իրենց հետևից: Համակարգիչն առանձնապես նպաստում է ստեղծագործական աշխատանքին: Երեխաները սիրով դա կանեն՝ չզգալով անգամ, որ իրենք դրա մեջ են: Նրանք անհամբեր սպասում են, թե երբ կստանան համակարգիչները:

Վերջում ասենք, որ կազմակերպիչների հավաստմամբ, համակարգիչները երեխաներին կբաշխվեն մարտ ամսին:

ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐ

ՄԱՍԿՆԵՐԻՑ ՊԵՏՔ Ե ՎԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԵԼ

ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության հանձնաժողովը տեսչության պետ Սոս Արզումանյանի գլխավորությամբ, հունվարի 24-31-ը ժամակառնական ստուգումներ է անցկացրել Ասկերանի եր. Բարսեղյանի անվան հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցում: Ստուգումներն ավարտվելուց հետո հրավիրվել է մասնավարժական խորհրդի նիստ, որին մասնակցում էր ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Սլավա Ասրյանը: Ստուգումների մասին հաշվետվությամբ հանդես եկավ Ս. Արզումանյանը: Ներկայացնենք որոշ տվյալներ:

Դպրոցի շենքը տիպային է, նորակառույց (կառուցվել է 2009թ.), քառահարկ, ունի մարզադահլիճ, ակումբ, հարմարավետ գրադարան, դպրոցական բուֆետ, ուսումնական կաբինետներ՝ ՆՁՊ-ի գծերի պահպանման սենյակով, ժամանակակից համակարգչային կաբինետ՝ էլեկտրոնային էկրանով: Կաբինետների մեծ մասի կահավորվածությունն աղքատիկ է, դրանց կահավորման ու հարստացման ուղղությամբ լուրջ անելիքներ կան:

Վերջին տարիներին դպրոցի ուսումնականության բազան անշեղորեն հարստացել է: Դպրոցը շահագործման հանձնելու պահից լրիվությամբ ապահովված էր առաջին անհրաժեշտության դպրոցական գույքով, կահույքով, հետագայում ձեռք են բերվել նաև մի շարք առարկաների գծով՝ ֆիզիկա, մաթեմատիկա, հայոց լեզու, ՆՁՊ, աշխարհագրություն, պատմություն, 1-4-րդ դասարանների համար ուսումնական պատաստներ, քարտեզներ, գլոբուսներ և այլն: Ժամանակակից համակարգչային կաբինետը որպես նվիրատվություն ստացվել է ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի միջնորդությամբ: ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից դպրոցի ֆիզիկայի կաբինետը համալրվել է փորձասարքերով, ուսումնալաբորատոր պարագաներով, «Մեխանիկա», «Էլեկտրականություն» և «Մագնիսականություն» բաժինների հավաքածուով: Դպրոցն ունի ռադիոհանգույց:

Դասարան-կոմպլեկտների ընդհանուր քանակը 18 է՝ 279 աշակերտի ընդգրկմամբ: Դպրոցն ունի 2 մասնաճյուղ՝ Ակնայի և Տիգրանակերտի:

Ստուգման պահին սովորողների փաստացի թվաքանակը 273 էր, ինչը համապատասխանում է շարժին: Սակայն, ինչպես ցույց են տվել ստուգումները, այդ աշխատանքներում նախորդ տարիներին լուրջ վրիպումներ են թույլ տրվել:

Դպրոցում աշխատում է 82 մարդ, որից 62-ը՝ մասնավարժական աշխատողներ: Կոլեկտիվը 1996-1997 ուստարվանից ղեկավարում է 30 տարվա մասնավարժական փորձով Ռոմելա Գրիգորյանը:

Դպրոցում ոչ միայն լուծված է կարդային հարցը, այլ նաև մի շարք առարկաների գծով կադրերի ավելցուկ կա, ինչը պայմանավորված է նրանով, որ տնօրինությունը չի առաջնորդվել ԼՂՀ պետական համակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում ուսումնական ծանրաբեռնվածության մասին կարգի 3-րդ կետի պահանջով, այն է՝ հաստատության տնօրենին իրավունք ունի աշխատանքի ընդունել նոր մասնավարժի, եթե տվյալ մասնագիտությամբ արդեն աշխատող մասնագետներն ապահովված են առնվազն մեկ դույր քաշակով:

Կոլեկտիվը հիմնականում երիտասարդ է, թոշակառու և սկսնակ ուսուցիչներ չկան, քիչ չեն նաև փորձառու մասնագետները: Միջին ծանրաբեռնվածությունը 16 ժամ է: Լրիվությամբ բաշխվել է նաև խմբակներին տրվող 22 ժամը, սակայն ինչպես պարզվել է ստուգումների ընթացքում, ոչ միշտ՝ նպատակային:

Տարիֆիկացիոն ցուցակում թույլ են տրվել շեղումներ գործող կարգից: Պարզվել է, որ նման խախտումներ թույլ են տրվել նաև նախորդ՝ 2009-2010, 2010-2011 ուստարիների ընթացքում:

Հայտնի է, որ ուսումնադաստիարակչական աշխատանքներում ձեռք բերած հաջողությունները և տեղ գտած բացթողումներն ու սխալները պայմանավորված են ներդրողական վերահսկողության մակարդակով: Եթե այն պատշաճ մակարդակի վրա է, ապա ամեն ինչ կարգին վիճակում է, եթե ոչ՝ հակառակն է: Ստուգումները ցույց են տվել, որ վերջին տարիներին տնօրինության կողմից որոշակի քայլեր արվել են ներդրողական վերահսկողության ուժեղացման ուղղությամբ:

Վերջին երեք տարիների ընթացքում դպրոցի ղեկավարներն սկսել են ավելի լուրջ ուշադրություն դարձնել դասալսուծներին, առանց որի անհնար է իրականացնել ներդրողական վերահսկողությունը: Այսպես, 2009-2010, 2010-2011 և ընթացիկ՝ 2011-2012 ուստարիներին տնօրեն Ռ. Գրիգորյանը լսել է, համապատասխանաբար, 100, 150, 81, ուսումնական գծով տեղակալ Մ. Ավանեսյանը՝ 135, 201, 112, իսկ ՄԿԱԳՏՍ Ա. Գյանցումյանը նախորդ ուստարում՝ 78, իսկ այս ուսումնականում՝ 36 դասաժամ: Նկատի ունենալով, որ նախարարության կողմից սահմանված նորման տարեկան 170 ժամ է, լրիվ հաստիքով ուսումնական գծով տեղակալինը՝ 250 ժամ, ՄԿԱԳՏՏ-ը՝ 60 ժամ, ապա պատկերը պարզ է դառնում: Տեսչապետն արձանագրել է, որ դասալսուծները հիմնականում իրականացվում են անպլանային ձևով:

Դպրոցում բավարար հիմքերի վրա են դրված մեթոդական աշխատանքները:

Մեթոդիկավորումների նախագահները լուրջ ուշադրություն են դարձնում համակարգչային դասերի անցկացմանը տարբեր թեմաներից: Բավական է ասել, որ միայն առաջին կիսամյակում կազմակերպվել է նման կարգի 44 դաս:

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց են տվել համակողմանի ստուգումները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների դրվածքը գտնվում է լավ հիմքերի վրա:

2010թ. և 2011թ. դպրոցը «Տարվա լավագույն դպրոց» մրցույթում «Դաստիարակչական աշխատանքների լավագույն դրվածք» անվանակարգում հաղթող է ճանաչվել ու երկու անգամ պարգևատրվել ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից՝ 150 հազ. դրամ գումարով ու պատվոգրով:

Ս. Արզումանյանը մանրամասն՝ ըստ առարկաների և դասարանների ներկայացրեց տեսչական գրավորների արդյունքները: Դրանք գրեթե ընդհանրական են մյուս դպրոցների արդյունքների համեմատությամբ: Ինչպես միշտ, տեսչական ստուգումների և տնօրինության կողմից տրված ստուգողականների ու կիսամյակային արդյունքների միջև այստեղ էլ տարբերությունը մեծ է,

ինչը խոսում է այն մասին, որ դեռևս առկա է ձևական մոտեցումը, գնահատման նոր համակարգի հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում: Ուրախալի է, որ գոնե տարրականում համեմատաբար բարձր արդյունքներ են գրանցվել: Ավագ դպրոցի մասով, որտեղ հոսքային ուսուցում է իրականացվում, այլ կերպ չէր էլ կարելի պատկերացնել, քանի որ հիմնական դպրոցց մավարտած աշակերտների 90 տոկոսը գտնվում է այստեղ:

Օժտված երեխաների վերահաման լավագույն միջոցներից է առարկայական օլիմպիադաների տարբեր մրցույթների և մրցումների անցկացումը: Այս առումով դպրոցի հաջողությունները շատ համեստ են: Այսպես, 2010-2011 ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադայի շրջանային փուլին մասնակցած 31 աշակերտից միայն 6-ին է հաջողվել (3-ը՝ քիմիայից, 1-ը՝ հայոց և օտար լեզուներից, ևս 1 հոգի՝ հայոց լեզվից և 1-ը՝ ռուսաց լեզվից) իրավունք ստանալ մասնակցելու հանրապետական փուլին: Նրանցից միայն 1 հոգի՝ 11-րդ դասարանցի Մարինե Գաբրիելյանը, պարգևատրվել է ակտիվ մասնակցության համար պատվոգրով՝ հայոց լեզու առարկայից: «Ռուսական խոսքի շաբաթ Արցախում» միջոցառման շրջանակներում ԼՂՀ ԿԳ նախարարության և շրջանային կրթության բաժնի կողմից դպրոցում կազմակերպվեցին ընդօրինակման դասեր ռուսաց լեզվից: Դպրոցի սաները ռուսերենի իմացությամբ զարմանք պատճառեցին ՌԴ-ից ժամանած հյուրերին: Բաց դասը կազմակերպվել էր ռուսաց լեզվի ուսուցչուհի Լիանա Կարապետյանի մոտ: Այդ միջոցառումը բարձր մակարդակով կազմակերպելու համար դպրոցը պարգևատրվել է ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրով: Դպրոցը, մասնակցելով «Հայ գրողները հայերեն» հանրապետական միջոցառմանը, գրավել է առաջին տեղը և արժանացել առաջին կարգի դիպլոմի:

Դպրոցական առօրյան հագեցած է եղել նաև մարզական և ռազմահայրենասիրական միջոցառումներով: Ստելլա Թամարյանը (11-րդ դասարան) թեթև աթլետիկայի մրցումներում 3 անհատական մրցածներում միանգամից ստացել է 3 մեդալ՝ ՀՀ-ում դառնալով Հայաստանի Հանրապետության չեմպիոն:

Դպրոցում առկա են հանրակրթական դպրոցներում պարտադիր գործածության երաշխավորված բոլոր կարևորագույն փաստաթղթերը: Նրանց մեծ մասը հիմնականում բարկոթ վիճակում է: Ամմիսթաբ վիճակում են հրամանագրերը:

ԿՊ տեսչության կողմից իրականացված դպրոցի համակողմանի ստուգումների ժամանակահատվածը համընկել էր ԼՂՀ ոստիկանության ՏՊՀԿՊ բաժնի կողմից անցկացվող ստուգումների հետ: Համաձայն ԼՂՀ ԿԳ նախարար Վ. Խաչատրյանի հանձնարարականի, այդ ստուգումներին մասնակցելու իրավունք վերապահված է եղել ԿՊ տեսչության պետ Ս. Արզումանյանին:

Ցավոք, այս երկու ստուգումների արդյունքում, բացի տեղեկանքում բերված՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներում տեղ գտած թերություններից, բացթողումներից ու սխալներից, դպրոցի տնօրինության՝ մասնավորապես տնօրեն Ռ. Գրիգորյանի և ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ս. Ա-

վանեսյանի աշխատանքներում վեր են հանվել բազմաթիվ անօրինական երևույթներ, որոնք որակվում են որպես աշխտանական դիրքի չարաշահումներ:

Անօրինություններ են վերահանվել տնօրենի՝ 2009-2010, 2010-2011, 2011-2012 ուստարիների աշխատանքներում: Այսօրինություններն արտահայտվել են խմբակային պարապմունքների բաշխման ու մատյանների լրացման, խմբակավարների նշանակման, Ակնայի և Տիգրանակերտի մասնաճյուղերում դասարան-կոմպլեկտների սխալ ձևավորման ու ներկայացման, դրանցում ուսումնական գործընթացի ոչ ճիշտ կազմակերպման, տարբեր մարդկանց անուններով անօրինական աշխատավարձերի, արձակուրդային ու ֆիզարձակուրդային դուրսգրման ու վճարման, ինչպես նաև սխալ հրամանների արձակման գործողություններում:

Մանկխորհում մանկավարժներից արտահայտվեց միայն ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սիլվա Ջիանգիրյանը: Նա մտահոգություն հայտնեց այն բանի առթիվ, որ կյանքի չի կոչվում ի սկզբանե ընդունած գաղափարը, ըստ որի, շրջակա գյուղերի՝ հիմնական դպրոցն ավարտած աշակերտները պիտի գային և ուսումը շարունակեին Ասկերանի միջնակարգում: Այդ դեպքում արդեն պատկերն այլ կլիներ, իհարկե, դրական առումով: Ուսուցչուհու կարծիքով, հայոց լեզվից ցածր արդյունքների պատճառն այն է, հատկապես բարձր դասարաններում, որ իրենց կողմից թեստային աշխատանքներ են տրվում, և կիսամյակն էլ զննատվում է դրանց արդյունքներով, իսկ տեսչական ստուգումներն իրականացվում են թելադրությամբ, որին իրենց այնքան էլ ուշադրություն չեն դարձնում: Ի դեպ, Ս. Ջիանգիրյանի դասարանների արդյունքները տեսչապետը գոհացուցիչ է համարել:

Շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Արվիդ Ավանեսյանը տեղեկանքի ոչ բարձր արդյունքները բացատրեց դպրոցում ստեղծված լարված վիճակով՝ կապված այդ օրերին նաև ոստիկանության կողմից անցկացվող ստուգումների հետ: Նա, իհարկե, ավելի էր սպասում արդյունքներից: Արձանագրված թերությունների մի մասը Ս. Ավանեսյանը նաև բաժնին վերագրեց՝ նկատի առնելով, որ ավելի վաղ նմանատիպ ահազանգ է եղել շրջանի մեկ ուրիշ կրթօջախում, իրենք եղել են ավելի քան երկու տասնյակ դպրոցներում, կանխարգելել հնարավոր սխալները, սակայն Ասկերանի դպրոցը դուրս է մնացել:

ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Սլավա Ասրյանի ելույթը որքան կոռեկտ, նույնքան էլ խիստ էր: Ամեն անգամ դպրոցներում տեսչական ստուգումների քննարկմանը հնարավորինս մասնակցելով՝ համապատասխան ցուցումներ ու հրահանգներ են տալիս բաժնին, որպեսզի մի դպրոցի օրինակով, եղած դրականի և բացասականի վրա, մյուս դպրոցներն իրականացնեն իրենց աշխատանքները: Ակնհայտ է, որ թերությունները յուրահատուկ են համարյա բոլոր դպրոցներին, ուստի բաժնից պետք է ուշադրության կենտրոնում պահի այդ հարցը: Տեսչությունը տարեկան 40-45 դպրոց է ստուգում, և նույն դպրոց մտնում է 5 տարին մեկ: Դա չի նշանակում, իհարկե, թե

դպրոցները կարող են թերացումներով աշխատել՝ մինչև որ ստուգելու հերթը կհասնի իրենց: Ամեն տարի օգոստոսյան խորհրդակցություններին և՛ մանկավարժների, և՛ առանձին տնօրենների հետ անցկացվող խորհրդակցությունների ժամանակ այս հարցերը բացեիքաց քննարկվում են, բացի այդ՝ «Լուսարար»-ում լուսաբանվում է համակարգի քաղաքականությունը, թերթի էջերում մանկավարժներն իրենց հուզող հարցերն են բարձրացնում: Եվ երբ մի դպրոցի թերությունը վեր է հանվում, նշանակում է՝ դա պետք է դաս լինի մյուսների համար, ասաց փոխնախարարը:

Ուսումնական պլանը պետական փաստաթուղթ է՝ պարտադիր բոլոր դպրոցների համար: Սահմանված են տիպային հաստիքներ, որոնցով պարտավոր են առաջնորդվել: Առկա են բազմաթիվ մեթոդական ցուցումներ ուսուցչի ծանրաբեռնվածության, համատեղությամբ աշխատողների մասին: Այդ բոլորը նրա համար են, որ դպրոցում դրանցով առաջնորդվեն, այլ ոչ թե կամայական վերաբերմունք ցուցաբերեն ու վաղ թե ուշ՝ համապատասխան մարմինների կողմից բացահայտված փաստի առաջ կանգնեն: «Ընդհանրապես, մեր ոլորտը կոչված է ազնիվ և արդար աշխատելու: Մեր մանկավարժներին գործունեության ամենավաղ ստուգողը հասարակությունն է: Ամեն ընտանիքից ներկայացուցիչ կա դպրոցում: Եվ ամեն մի ներկայացուցիչ ինֆորմացիա է տանում դպրոցից, ու ամեն ուսուցչի մասին հասարակությունը պատկերացում կազմում է»,- ասաց Ս. Ասրյանը:

Ասկերանի միջնակարգ դպրոցը մեր ընկալումներում լավագույն դպրոցներից մեկն է: Փոխնախարարի գնահատմամբ, այսօր էլ այն կարծիքին են, որ այստեղ կա կայուն մասնավարժական կոլեկտիվ, որը կարող է լավ աշխատել: Սակայն նախորդ տարիների համեմատ, ինչպես նշվեց տեղեկանքում, առարկայական օլիմպիադաների, ուսման առաջադիմության ու որակի առումով, ինչպես նաև արտադասարանական միջոցառումների գծով դպրոցը նախկին դիրքերը զիջում է: Այնինչ՝ պետք է հակառակը լիներ դպրոցի այսօրվա պայմաններում կառուցվելու համար: Նշանակում է՝ դպրոցի ղեկավարությունը մեծ անելիքներ ունի: Իզուր չէ պարտադիր պայման դրվում, որ տնօրենը, փոխտնօրենը տարեկան սահմանված ժամաքանակով դաս լսեն: Ուսման առաջնաբացի հիմնական ապահովողը մասնավարժական կոլեկտիվն է՝ դպրոցի ղեկավարության գլխավորությամբ: Պետք է այս ամենից ճիշտ հետևություններ անել ու թերությունների վերացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել, շեշտեց փոխնախարարը:

Տեսչական հանձնաժողովը հանդես եկավ համապատասխան եզրակացություններով ու առաջարկություններով:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Հ.Գ. Ասկերանի միջնակարգ դպրոցի ղեկավար Ս. Գրիգորյանի հրամանով փետրվարի 14-ին Ասկերանի եր. Բարսեղյանի անվան հոսքային ուսուցմամբ միջնակարգ դպրոցի տնօրեն Ռ. Գրիգորյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից պաշտոնական դիրքի չարաշահման համար:

ԿՐԹԱՂԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ՀԱՄԵՐԳ ԶԻՆԿՈՐՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Մեր հաղթական բանակը, որ կազմավորվեց երկրապահ կամավորական ջոկատներից, անցավ հաղթանակներով լի փառավոր ուղի, դարձավ 20 տարեկան և մեր գոյության գլխավոր երաշխավորը է: Հայոց բանակի օրվա առթիվ հունվարի 28-ին Ն գործառնայն այցելեցինք: զինվորների համար համերգով հանդես եկան Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի սաները: Պատահական չէր այդ գործառնայն ընտրությունը: Քաշաթաղի շրջա-

պահպանում: Կովսականի մասնաճյուղի սաներն իրենց ուսուցիչ, ազատամարտիկ Կարեն Մարտիրոսյանի ղեկավարությամբ ազգագրական ու ռազմահայրենասիրական պարեր էին կատարում, երգում: Մեծ ոգևորությամբ ընդունվեցին փոքրիկ Անահիտի և Ռոմանի կատարած «Ֆլամինգո» լատինաամերիկյան պարը, 4-7 տարեկանների խմբի «Փոքրերի աշխարհ» և այլ պարերը, պարուսույց Վարուժան Գրիգորյանի սաների



միջ շատ տղաներ այսօր հայրենիքի պաշտպանության կրեմը պարտքը հենց այստեղ են կատարում: Կրթօջախը մասնաճյուղեր ունի շրջանի տարբեր բնակավայրերում: Բացի բերձորցիներից, զինվորների հյուրերն էին Կովսականի մասնաճյուղի պարի խմբակի սաները՝ Կովսականից, Միջնավանից, Մուշից, Վանից, Ալաշկերտից: Չնայած եղանակի՝ ոչ այնքան բարենպաստ լինելուն՝ առավելույան շարժվում ենք Բերձորից: Դպրոցի սաներից բացի մեկ այլ ավտոբուսով, որը Բերձորի քաղաքապետարանը հատկացրել էր իրենց զավակներին, եղբայրներին են այցելում շրջանից զինվոր տղաների ծնողները, քույր ու եղբայրները: Ճանապարհին շարայանը միանում է Կովսականից եկած ավտոբուսը: Ձորամասի մուտքի մոտ հյուրերին դիմավորում և ուղեկցում է գործառնային հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Է. Փաթյանը: Նախօրոք որոշված էր, որ մանկական համերգը կայանար շարահրապարակում, սակայն ծյան տեղալու պատճառով փոքրիկ պարողներն ու երգիչներն իրենց պահպան զինվորների, եղբայրների համար հանդես եկան ճաշարանում: Մոտ մեկուկես ժամ փոքրիկները ռազմահայրենասիրական ու ժամանակակից երգերով, առավելապես պարերով ոգևորեցին զինվորներին: Նրանցից շատերը հաճախ միանում էին մանուկներին ու նրանց հետ պարում, երկի մի պահ մտքով տուն տեղափոխվում: Ու պատահական չէր նաև, որ գործառնայն լին լցված հատկապես ավելի փոքրիկների նկատմամբ: Երանց նման հարազատներ ունեն: Դրանում ծյուն էր մաղում, իսկ զինվորական ճաշարանում աշակերտները համերգ էին տալիս իրենց եղբայր-զինվորների համար, որոնց ընկերներից շատերը նույն պահին, նույն ծյան տակ խրամատներում նրանց ուրախությունն ու անվտանգությունն էին

ազգագրական ու ռազմահայրենասիրական պարերը: Երեխաների ելույթից հետո Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի տնօրեն Գոռ Մանուկյանը շնորհակալություն հայտնեց ԼԴՀ մշակույթի և պաշտպանության նախարարություններին, գործառնային հրամանատարությանը, Քաշաթաղի շրջվարչակազմին, Բերձորի ու Կովսականի քաղաքապետարաններին՝ աջակցության համար, որ կայացավ հիրավի մեծ միջոցառում, և գործառնային նվիրեց դպրոցի դիզայնի խմբի սաների կտավներից: Գոհունակություն հայտնեցին նաև այն ծնողները, ովքեր իրենց զինվոր զավակների ներկայությունը և մանուկների ելույթները վայելեցին: Ձորամասի հրամանատարի տեղակալ Է. Փաթյանը զինվորների, հրամանատարության ու սպայական անձնակազմի անունից շնորհակալություն հայտնեց՝ նման միջոցառման համար և գործառնային պատվոգրեր հանձնեց Բերձորի, Կովսականի քաղաքապետարաններին ու դպրոցի տնօրինությանը: Միջոցառմանը ներկա էին Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուր Մխիթարյանը և աշխատակազմի մշակույթի բաժնի վարիչ Էդուարդ Չուխաչյանը: Համերգից հետո գործառնային ճաշարանում վայելեցինք զինվորական ճաշ, որը ներկաների հավաստմամբ, շատ համեղ էր: Բոլոր զինվորներն էլ, ում հետ գրուցեցի, վկայեցին, որ մատուցվածը ցուցադրական չէր, այլ իրենց մշտական ճաշատեսակներն էին: Չորույցի ընթացքում գործառնային հրամանատարի տեղակալը մշեց, որ իրենց գործառնային կազմավորվել է չորս ջոկատների հիման վրա: Օրն արդեն մթնում էր, ու մանր ծյուն էր տեղում, երբ հրաժեշտ տվեցինք մեզ հյուրընկալող Հայոց բանակի զինվորներին, որոնցից շատերը պատրաստվում էին դիրքեր բարձրանալ:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱԼ

ՀԱՅՐԵՆՅԱՆ ԴԱՍԵՐ ԸՈՒՇԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԴՐՈՅՈՒՄ

Ցնծա՛, բյուրվիշապ Հայաստան աշխարհ, Փրկության արև Կահագնիդ տեսար: Գ. Գրիգորյան

Հայրենի երկրիս կրթօջախների այս ջերմին անկյունը, որի մի թևուն վերանորոգողական աշխատանքներն են շարունակվում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից, իսկ մյուսում՝ ուսումնական պարասպանները, Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու վեհաշուք հովանու ներքո նոր շնչով համակված Շուշիի հաշատուր Աբովյանի անվան դպրոցն է: Դպրոց, որ Հայոց Հանրապետության անկախության 20-ամյա հովանավորությունն առած իր ուսերին՝ որպես արքայական ծիրանի, կրթում է իր սաներին ջերմագորով նվիրումով: Այդ են վկայում մանկավարժ ուսուցիչների խորը նվիրվածությունն ու սրտացավ վերաբերմունքը այն ամենի հանդեպ, որն առնչվում է կրթական պահանջներին ու դպրոցական առօրյային: Հստակ գիտակցելով, որ դպրոցի գերակա նպատակն աշակերտներին գիտելիքներով զինելն է, յուրաքանչյուր մանկավարժ իր մտեցումներով իրականացնում է այդ վեհ նպատակը:

Ուսումնական գործընթացն ուղեկցվում է դպրոցի տնօրեն Նազիկ Նալբանդյանի մոտ օգտաշահ խորհրդակցություններով, Լիդա Մկրտչյանի՝ նորանշանակ փոխտնօրենի, համակողմանի աշխատանքներով, ուսուցիչների, մեկը մյուսին հաջորդող փորձուսուցման (բաց) դասերի, միջոցառումների առատությամբ:

Ուշագրավ մի քանի միջոցառումներ վավերական հնչողություն են ստացել. տնօրեն Ն. Նալբանդյանի մանկավարժական ուշագրավ և ուղղորդիչ գրույցները, փոխտնօրենի ծավալային աշխատանքները, դասվարների, միջին օղակի մասնագետ ուսուցիչների արդյունավետ աշխատանքը:

Ուշագրավ էր դասվար Գոհար Ասրյանի «Հայրենիք» թեմայի ամփոփիչ փորձարարական դասաժամը, որի ընթացքում սաները մեծ գործակնքով ներկայացնում են այն ամենը, ինչ հայրենիքն է՝ իր բնանկար-պեղծանքներով, ուշագրավ գունանկարներով, որոնցով գարդարված էր ամբողջ դասարանը:

Մենք սիրում ենք մեր երկիրը,- հիացմունքով պատմում են դասվարի 4-րդ «ա» դասարանի սանիկները,- այստեղ կռվել են մեր պապերն ու հայրերը,- և ապա ավելացնում,- այս երկիրը, այս կրթօջախը մեզ համար է վերակառուցվում:

Նախնական (գրոյական) դասարանի դաստիարակ Նարինե Գրիգորյանը միջոցառումների լավագույն կազմակերպիչ է, և ուսուարվա ընթացքում շարունակ կյանքի են կոչվում այնպիսի նախաձեռնումներ, որ գնահատանքի են արժանանում շրջանային, զինվորական և հանրապետական կառույցներում:

Հոբելյանական 20-ամյակների տարին արժանավայել դիմավորելու համար առանձնահատուկ էին անգամ ամանորյա համեղիությունները, որոնք կազմակերպվել էին դպրոցի բոլոր դասարանների ակտիվ մասնակցությամբ: Այս շարքում առանձնանում է 7-րդ դասարանի դասուհի Էլենոնրա հաշատուրյանը, որը հայտնի է իր նորարարությամբ:

Կազմակերպչական աշխատանքներում նոր որակ են ստանում Գայանե Սարգսյանի ձեռնարկումները՝ «Հմուտ ձեռքեր», «Մրգերի տոնահանդես», «Լուսաշող Ամանոր»:

Հայրենասիրական մթնոլորտը ոգևորիչ է և առիթնոր, մանավանդ, երբ լսում ենք պատմության ոգեշունչ դասեր: Այդպիսին էր օրերս 8-րդ դասարանում Հերիքնազ Ղաբուլյանի կազմակերպած բաց դասը հայրուկային շարժման և Սասունի ինքնապաշտպանության մասին, որը գուցահեռվեց Արցախի հերոսական ազատագրական հաղթանակած շարժմանը և ոգևորության ալիք առաջացրեց՝ դպրոցում լայն արձագանք գտնելով: Պատմության հանձնաժողովի նախագահ Գեղանուշ Նարինյանը, որ սեպտեմբերին հայրենագիտությունից ուշագրավ դաս էր կազմակերպել 5-րդ դասարանում՝ նվիրված Արցախի անկախության հոբելյանական երկրորդ տասնամյակին, շարունակեց հաղթարշավը՝ բաց դասեր կազմակերպելով իր կողմից դասավանդող դասարաններում: Օրերս լսում էինք հերթական բաց դասը 6-րդ դասարանում՝ Տիգրան Մեծի գահակալության մասին, ու խիզախության, հայրենասիրության ոգին թևածուծ էր աշակերտների հոգիներում: Ծովից ծով Հայաստանի հերոսականությունը թափանցում է նրանց հոգին, և դասալսողները հունվարի 25-ին լսում էին ամենը հայոց մեծագոր արքայի՝ Ալեքսանդր Մակեդոնացուն համագոր Տիգրան Մեծի արշավանքների և բազմաթիվ Տիգրանակերտներ կառուցած գործը արքայի՝ Արցախի Տիգրանակերտ կատարած էքսկուրսիայի մասին:



Հաջորդ օրը հունվարի 26-ն էր՝ Քարին տակի հերոսամարտի 20-ամյակը, որի դասերն ընդմիջտ կկրթեն սերունդներին: Հայրենասիրական մղումներով համակված 9-րդ «բ» դասարանի լավագույն աշակերտուհի Տաթևիկ Օհանջանյանը (ուսուցչուհի՝ Վարդիթեր Հակոբյան) օլիմպիադայում շարադրության մեջ գրել է. «Ես իմ երկրի արյունաճերմակ հողից ծլած մի ծիլն եմ: Դժվար է ասել, թե քանի ծիլ է ծել մեր հայրենի հողում իրենց արյունը թափած քաջորդիների արյունից: ...Մեր հայրենիքը եկել է դարերի խորքից և երբեք անհետ չի կորել պատմության դժվարին քառուղիներում: Ու թեկուզ հիմա պատմական Հայաստանից մնացել է մի բուռ հայրենիք, պետք չէ վիատվել: Պետք է առաջ մայել և կառուցել մեր պայծառ ապագան, որ հայրենիքը դառնա հզոր ու բարգավաճ»:

Այս ոգով ողջ դպրոցը պատրաստվում էր արժանավայել դիմավորելու Հայոց բանակի կազմավորման 20-ամյա հոբելյանը, բանակ, որ փառավոր ուղի է անցել՝ կոփվելով մարտերում և հաղթանակ հաղթանակի հետևից տանելով, ամրակուռ է իր սահմաններում: Բոլոր դասարանները բյուրվեստ են էին սարքել Հայոց պանծալի բանակի 20-ամյակի առթիվ: Եվ ահա հունվարի 28-ին տոնական հաղթարշավ՝ բաղձալի անկախության հասած Հայոց Հանրապետության մարտունակ բանակի 20-ամյա հոբելյանի պատվին: Այն գերազանցեց բոլոր սպասելիքները:

Տոնականորեն զարդարված սրահում հրավիրված էին Շուշիի գործառնային ներկայացուցիչներ, հոգևոր հովիվ տեր Անդրեասը, ներկա էին ուսուցիչներն ու աշակերտները: Երկայնքով կանգնած էին հանդիսության մասնակիցները՝ տոնական հանդերձանքով: Մտնում են դպրոցի՝ մահապարտներին հիշեցնող երեք աշակերտներ Արամ Բալայանը, Հրանտ և Նարեկ Ավանեսյանները՝ երեքն էլ ԳԳ և Արցախի չեմպիոններ և ցուցադրում ուշագրավ ռազմավարական: Սրան հաջորդում է հուզիչ սանունքը և մարտաշունչ երգեր՝

Տոնականորեն զարդարված սրահում հրավիրված էին Շուշիի գործառնային ներկայացուցիչներ, հոգևոր հովիվ տեր Անդրեասը, ներկա էին ուսուցիչներն ու աշակերտները: Երկայնքով կանգնած էին հանդիսության մասնակիցները՝ տոնական հանդերձանքով: Մտնում են դպրոցի՝ մահապարտներին հիշեցնող երեք աշակերտներ Արամ Բալայանը, Հրանտ և Նարեկ Ավանեսյանները՝ երեքն էլ ԳԳ և Արցախի չեմպիոններ և ցուցադրում ուշագրավ ռազմավարական: Սրան հաջորդում է հուզիչ սանունքը և մարտաշունչ երգեր՝

Տոնականորեն զարդարված սրահում հրավիրված էին Շուշիի գործառնային ներկայացուցիչներ, հոգևոր հովիվ տեր Անդրեասը, ներկա էին ուսուցիչներն ու աշակերտները: Երկայնքով կանգնած էին հանդիսության մասնակիցները՝ տոնական հանդերձանքով: Մտնում են դպրոցի՝ մահապարտներին հիշեցնող երեք աշակերտներ Արամ Բալայանը, Հրանտ և Նարեկ Ավանեսյանները՝ երեքն էլ ԳԳ և Արցախի չեմպիոններ և ցուցադրում ուշագրավ ռազմավարական: Սրան հաջորդում է հուզիչ սանունքը և մարտաշունչ երգեր՝

Տոնականորեն զարդարված սրահում հրավիրված էին Շուշիի գործառնային ներկայացուցիչներ, հոգևոր հովիվ տեր Անդրեասը, ներկա էին ուսուցիչներն ու աշակերտները: Երկայնքով կանգնած էին հանդիսության մասնակիցները՝ տոնական հանդերձանքով: Մտնում են դպրոցի՝ մահապարտներին հիշեցնող երեք աշակերտներ Արամ Բալայանը, Հրանտ և Նարեկ Ավանեսյանները՝ երեքն էլ ԳԳ և Արցախի չեմպիոններ և ցուցադրում ուշագրավ ռազմավարական: Սրան հաջորդում է հուզիչ սանունքը և մարտաշունչ երգեր՝

Տոնականորեն զարդարված սրահում հրավիրված էին Շուշիի գործառնային ներկայացուցիչներ, հոգևոր հովիվ տեր Անդրեասը, ներկա էին ուսուցիչներն ու աշակերտները: Երկայնքով կանգնած էին հանդիսության մասնակիցները՝ տոնական հանդերձանքով: Մտնում են դպրոցի՝ մահապարտներին հիշեցնող երեք աշակերտներ Արամ Բալայանը, Հրանտ և Նարեկ Ավանեսյանները՝ երեքն էլ ԳԳ և Արցախի չեմպիոններ և ցուցադրում ուշագրավ ռազմավարական: Սրան հաջորդում է հուզիչ սանունքը և մարտաշունչ երգեր՝

Տոնականորեն զարդարված սրահում հրավիրված էին Շուշիի գործառնային ներկայացուցիչներ, հոգևոր հովիվ տեր Անդրեասը, ներկա էին ուսուցիչներն ու աշակերտները: Երկայնքով կանգնած էին հանդիսության մասնակիցները՝ տոնական հանդերձանքով: Մտնում են դպրոցի՝ մահապարտներին հիշեցնող երեք աշակերտներ Արամ Բալայանը, Հրանտ և Նարեկ Ավանեսյանները՝ երեքն էլ ԳԳ և Արցախի չեմպիոններ և ցուցադրում ուշագրավ ռազմավարական: Սրան հաջորդում է հուզիչ սանունքը և մարտաշունչ երգեր՝

Տոնականորեն զարդարված սրահում հրավիրված էին Շուշիի գործառնային ներկայացուցիչներ, հոգևոր հովիվ տեր Անդրեասը, ներկա էին ուսուցիչներն ու աշակերտները: Երկայնքով կանգնած էին հանդիսության մասնակիցները՝ տոնական հանդերձանքով: Մտնում են դպրոցի՝ մահապարտներին հիշեցնող երեք աշակերտներ Արամ Բալայանը, Հրանտ և Նարեկ Ավանեսյանները՝ երեքն էլ ԳԳ և Արցախի չեմպիոններ և ցուցադրում ուշագրավ ռազմավարական: Սրան հաջորդում է հուզիչ սանունքը և մարտաշունչ երգեր՝

Վարդիթեր ՀԱԿՈՅԱՆ Շուշիի Խ. Աբովյանի անվ.

ՓՈՐՁԻ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄ

ԲԱՅ ԴԱՍ՝ ՆԿԻՐՎԱԾ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՄԵՑ ՏԱՂԵՐԳՈՒԻՆ

Օրերս Ստեփանակերտի Ավետիք Իսահակյանի անվան 10 հիմնական դպրոցի 9-րդ «բ» դասարանում կայացավ ընթացիկական դաս գրականությունից: Այն կազմակերպել էր կրթօջախի հայրը լեզվի և գրականության մեթոդավորման նախագահ, շնորհաշատ ուսուցչուհի Լիլյա Սարգսյանը: Մասնակցում էին քաղաքապետարանի կրթության բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանը, քաղաքային մեթոդավորման նախագահ Ռոմելա Թովմասյանը, դպրոցի տնօրինությունը, հանրակրթական դպրոցների ուսուցիչներ:

Թեման Սայաթ-Նովայի քննարկությունն էր: Դասասենյակը կահավորված էր հավոր պատշաճի պատի թերթեր՝ նվիրված միջնադարի վերջին երգչին, ծաղիկների նկարներ, որոնք թվարկել էր գուսան-բանաստեղծ իր տաղերում՝ հիլ, մեխակ, դարչին, վարդ ու մանուշակ, անկյուն՝ Սայաթ-Նովայի տաղաշարով, գրքերով, ծայրասկավառակներով, դիմապատկերներով... Իսկ գրատախտակից գունավոր կադրերի օգնությամբ մեզ էին ժպտում կենսագրական տվյալներն ու նշանավոր տարեթվերը:

Մտնելով դասարան՝ ալմաստից հիանում ու զարմանում էիր՝ ինչքան շնորհակալ աշխատանք էր կատարել աշխատանքի ու համեստ ուսուցչուհին, ինչքան եռանդ ու ավյուն ներդրել մայրենիի ազնիվ սերմնացանը... Դասի մուտքը հուզիչ էր, որ նախաշեն էր այն գերող պահերի, որ ապրեց յուրաքանչյուր աշակերտ ու մանկավարժ: Հնչեցին Վալերի

Բրյուսովի բառերը. «Սայաթ-Նովայի նման բանաստեղծներով կարող է և պետք է պարծենա ամբողջ ժողովուրդը. դրանք երկնքից մեծ պարգևներ են, որ ուղարկվում են ոչ բոլորին և ոչ հաճախ»:

Աշակերտները թվարկեցին շրջապատները, մեկնեցին աշուղ-բանաստեղծի գրական անվան ստուգաբանությունը:

Արտասանվեցին Թումանյանի, Իսահակյանի, Չառենցի, Կապուտիկյանի, Ջիվանու և այլոց գնահատանքի ու մեծարանքի խոսքերը:

Այնքան մաքուր ու ճիշտ շեշտադրումով էին երեխաներն արտասանում ու ասումընթացին թիֆլիսյան բարբառով գրված տաղերը, որ թվում էր, թիֆլիսում էինք՝ Հավաքարում կամ Սուլղակում և ըմբռնվում էինք թիֆլիսահայերի բարբառի համն ու հոտը:

Աշակերտների շուրթերով Սայաթ-Նովայի գովերգած տառապած ու կարոտ սերը նորովի էր հնչում ու իմաստավորվում: Մանկական անմեղ շուրթերին սայաթնույան սերը երեք հարյուր տարվա հեռավորությունից բալասան էր ու սպեղանի, ցավ ու մորմոք, հմայք ու առիթներում: Ընթացքում ուսուցչուհուն օգնությամբ բացատրվում էին բառերն ու պաշտպանակցվում դարաբաղյան բարբառի հետ:

Բազմավաստակ ուսուցչուհին ներկայացրեց Պ. Սևակի բառերը, որին հաջորդեց Անգելինայի արտաբուխ երգը՝ «Դու ես հուրին ես», որն իր թևերին առած՝ ներկաներին տարավ ուրիշ մի աշխարհ՝ խլրտուն երազների ու անմնացորդ սիրո աշխարհը...

Լիլյա Սարգսյանն արտասանում էր, իր խոսքով հուզում ու հմայում ներկաներին, կարևորում գեղեցիկ խոսքի արժեքն ու դերը խոսքի մեջ:

Խոհափիլիսոփայական տաղերին հաջորդեց Լևոնի՝ «Ես քու դիմեթն չիմ գիդի» երգի անկրկնելի կատարումը:

Ուսուցչուհին ապահովեց կապը գեղարվեստի զարմանահարաշ աշխարհի հետ. խոսվեց նկարիչ Հրաչյա Ռուֆիկյանի ստեղծած Սայաթ-Նովայի երևակայական նկարի մասին, որին նախորդել էր հիշեցումը Հովի. Թումանյանի՝ Գևորգ Բաշին՝ Վարդատոն կոչվող սայաթնույան համազգային ամենամյա տոնի անցկացման և մեծ երգչի գերեզմանի վրա մահաբժանի կանգնեցման գործում: Դասի վերջում հնչեց աշուղ-բանաստեղծի պատգամը. «Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե»:

Դասն ամփոփվեց շնորհալի մանկավարժի հոգեպարար խոսքով. «Սայաթ-Նովան քայլող ազնվություն էր և շրջող անկեղծություն: Այսօր էլ մենք նրանից սովորում ենք ամենադժվար գիտությունը՝ ազնվորեն ապրելը և դժվարագույն արվեստը՝ բոլորամեղ սիրելը»:

Լիլյա Սարգսյանը հասավ իր նպատակին՝ յուրաքանչյուր աշակերտի հնարավորինս մոտեցնելով գուսան-բանաստեղծի տաղարվեստին ու քննարկությանը և իր տքնաջան ու շնորհակալ աշխատանքով բոլորին ընծայելով մի-մի պատառիկ միջնադարի մեծ տաղերգուի բանարվեստից:

Նուբար ՊՈՐՈՍՅԱՆ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Դարերի խորքից եկող, հարուստ բառապաշար ունեցող մեր լեզուն ունի գրության և արտասանության լուրջ դժվարություններ: Փոխվել է զգալի թվով բառերի արտասանությունը՝ պահպանելով ավանդական կամ պատմական գրությունը:

«Ուղղագրություն և ուղղախոսություն» բաժինն ուսուցանվում է 5-րդ դասարանում, սակայն շարունակվում է ողջ ուսումնական համակարգի ընթացքում:

Ես անհրաժեշտ եմ գտնում, որ հինգերորդ դասարանցիներն ավանդական գրություն ունեցող բոլոր բառերն անգիր սովորեն: Որպեսզի հեշտ սովորեն, աշակերտների հետ կազմում եմ նախադասություններ կամ փոքրիկ սյուժե: Օրինակ՝ *Իբր աբխազ Գաբրիելը շաբաթ օրը խաբել է Հակոբին, Սերոբին, Քերոբին*: Այս նախադասության մեջ ընդգրկված են այն բոլոր բառերը, որոնց մեջ ծայրավորից հետո լավոր է հնչյունը գրվում է **թ** տառով: Կամ՝ *Սարգիսը երգը թարգմանեց կարգին*: *Դրա համար որպես պարգև Սարգսից ստացավ մի զրո ու մարգարիտ*:

Այստեղ ուղղագրական բառաշարքից դուրս է մնացել միայն *մարգարե* բառը:

Մեծ է ուղղագրական վարժությունների դերը: Կատարել են տալիս դասագրքում տրված համարյա բոլոր վարժությունները, իսկ սխալները վերլուծում ենք կոլեկտիվ կերպով: Աշակերտները սիրում են գրատախտակից գրել ուսուցչի կամ ընկերների թեկադրած՝ դժվար գրություն ունեցող բառերը: Այս դեպքում էլ սխալների կոլեկտիվ վերլուծությունը տալիս է ցանկալի արդյունք, քանի որ երբեմն անհրաժեշտ է լինում կատարել բառակազմական վերլու-

ծություն, կամ եթե հնչյունափոխված բառ կա, բացատրել հնչյունափոխության կանոնը:

Օրինակ, աշակերտը գրատախտակից գրում է *լուսընկա*: Պահանջում եմ կատարել բառակազմական վերլուծություն, ցույց տալ արմատները: Աշակերտն ասում է՝ *լուսին և ընկնել*: Հարցնում եմ. «Լուսինը երկնքից ո՞ւր է ընկնում»: Աշակերտն զգում է իր սխալը: Բացատրում եմ, որ *լուսնկա* բառը կազմված է *լուսին և կա* արմատներից, դրա համար էլ գրվում է առանց **ը**-ի: Կամ սխալ է թույլ տվել *հոգեվարք* բառում: Պահանջում եմ բացատրել, թե ինչու պետք է գրել *եվ*-ով (*հոգի+ա+վարք, ի+ա=ե*): Առաջարկում եմ ասել նման օրինակներ:

Ուղղագրության ուսուցման ժամանակ անգնահատելի է խաղերի դերը: Աշակերտներին նախօրոք հայտարարում եմ, որ խաղը կազմակերպելու ենք, օրինակ, **բ-պ-փ** կամ **գ-կ-ք** բաղաձայնների ուղղագրության շուրջ: Ըստ իմացական մակարդակի, դասարանը բաժանում եմ զույգերի: Մրցում են զույգերով: Հարցնում եմ, թե որ արմատներում և դրանցից կազմված բառերում է, որ **ի-ք** հետո լավոր **փ** հնչյունը գրվում է **բ**: Հերթով թվարկում են բառերը: Եթե մրցողներից մեկը կանգնում է, հաջորդը շարունակում է: Հաղթում է նա, ով ավելի շատ բառեր է թվարկում:

Ուղղագրության ուսուցման առումով ցանկալի արդյունք է տալիս հետևյալ փորձը: Աշակերտներին նախօրոք թելադրում եմ ավանդական գրություն ունեցող՝ ուղղագրական տարբեր կանոնների վերաբերյալ 20-30 բառ: Հետո ասում եմ, որ այդ բառերից լինելու են թելադրության տեքստում: Նրանք տանը սովորում են դրանց գրությունը, և աշխատանքը տալիս է դրական

արդյունք: Հետագայում էլ այդ բառերը հազվադեպ են սխալ գրում:

Աշխատանքին կարելի է տալ խաղի բնույթ: Այս անգամ թելադրում եմ ավելի շատ բառեր: Դասարանը բաժանում եմ երկու խմբի: Զույգացնում եմ, որ հաջորդ ժամին այդ բառերը նորից են թելադրելու: Աշակերտները տանը սովորում են դրանց գրությունը: Հաղթում է այն խումբը, որը համեմատաբար քիչ սխալ է թույլ տվել: Հիշեցնում եմ, որ նույն բառերը թելադրելու են երրորդ անգամ: Լավ սովորողներն իրենց խմբի թույլ սովորողներին թելադրում են այդ բառերը, սովորեցնում ճիշտ գրել: Հաջորդ ժամին սխալների թիվն զգալի չափով նվազում է:

Աշակերտները շատ են սիրում խաղալ ուղղագրական լուտո: Խաղաքարտերի վրա գրում եմ ավանդական գրություն ունեցող բառերը՝ բաց թողնելով համապատասխան տառը: Նույն բառերը կտրուտած թղթերի վրա գրում եմ, լցնում տոպրակի մեջ, իսկ աշակերտներին բաժանում փոքրիկ թղթերի վրա գրած բաց թողնված տառերը՝ **բ, փ, դ, թ** և այլն: Տոպրակից մեկ-մեկ հանում եմ բառերը և ընթերցում, իսկ աշակերտները համապատասխան տառը դնում են այդ բառի վրա: Հաղթում է նա, ով առաջինն է լրացնում որևէ շարք: Միասին ստուգում ենք: Եթե աշակերտը տվյալ շարքում որևէ բառի ուղղագրություն սխալ է նշել, ուրեմն չի հաղթել, և խաղը շարունակվում է:

Ուղղագրության ուսուցումը մայրենիի ուսուցիչներից պահանջում է ամենօրյա հետևողական աշխատանք:

Սվետլանա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Մարիամաձորի միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԴԱՍԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Ե

Ավելի դիպուկ և խոսուն արտահայտություն գտնել հնարավոր չէ: Իրոք, դասի կառուցվածքը, նյութի բովանդակության շարադրանքի ձևն ու ոճը, ուսուցչին և աշակերտներին հատկացվող «դերերը» դասարան է բերում ուսուցիչը, ուստի որոշիչ դեր է խաղում ուսուցչի մանկավարժական վարպետությունը, գիտելիքների խորությունն ու ծավալը, նրա կեցվածքն ու վարվելակերպը:

Պարզ է, որ ամենակարող ուսուցիչն անգամ չի կարող ապահովել ուսման բարձր մակարդակ, եթե ուսուցման գործընթացի հիմքում չունենա յուրաքանչյուր դասի համար կառուցված մանկավարժական համակարգ, այսինքն՝ տարրերի որոշակի ընդհանրություն, որը գործում է իրեն հատուկ ներքին գոյատևման օրենքով:

Դասավանդման ընթացքում համակարգատեղծ տարրը պետք է ուղղված լինի ուսուցման գործընթացի կատարելագործման հիմնահարցին, մյուս տարրերի ձևավորումն ընթանա այդ տարրերի հետ համաձայնեցված: Հենց մանկավարժական համակարգի հատկություններով և առանձնահատկու-

թյուններով են բացատրվում նրանում ընթացող ուսուցման գործընթացի հաջողություններն ու անհաջողությունները:

Ժամանակակից մանկավարժական համակարգի կազմում կարելի է առանձնացնել մի քանի բաղադրիչ տարրեր.

- ուսուցման և դաստիարակության նպատակները,
- ուսուցման և դաստիարակության բովանդակությունը,
- իմացական ակտիվ գործընթացների կազմակերպումը, մանկավարժական գործունեության կազմակերպչական ձևերը, ուսուցչի ներգործությունը,
- աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը:

Դպրոցում որպես ուսուցման գերխնդիր, ելնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունից, պետք է ընտրել առարկայի նկատմամբ իմացական հետաքրքրությունների ձևավորման գործընթաց և ղեկավարվել այն պարզ տրամաբանությամբ, որ իմացական հետաքրքրությունների միջուկը կազմի մտավոր աշխատանքը, ինչը համա-

պատասխանեցված պետք է լինի աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին:

Դասավանդման գործընթացում որոշ տեղեկությունների, հասկացությունների ու երևույթների հետ աշակերտներն արդեն ծանոթ են անցած նյութերից, սակայն հանրամատչելի մակարդակով այդ նյութերին անդրադառնալ անհրաժեշտ է ներառարկայական կապերի բացահայտման ու օգտագործման տեսանկյունից: Աշակերտների՝ արդեն ծանոթ նյութերին անդրադառնալը ներառական կապերի տեսանկյունից մանկավարժության մեջ դիտվում է որպես գիտելիքների նորացում, դրանք ավելի բարձր մակարդակով և այլ տեսանկյունից ներկայացնելու հնարավորություն:

Մանկավարժական համակարգի առանձին և կարևոր տարր է համարվում աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելը: Որպես կանոն՝ ավագ դպրոցականի վրա էապես ազդում է ուղղվածությունը դեպի ապագան: Նրա անձի կայացումը բնութագրվում է

բարոյական սկզբունքների կայացմամբ, ինչը նպաստում է աշակերտի ինքնագիտակցման մակարդակի բարձրացմանը: Իմացական շարժառիթներում արտացոլվում է նրա հետաքրքրությունը ոչ միայն գիտելիքների բովանդակության, այլ նաև դրանց կառուցվածքի և ձեռքբերման եղանակների մասին սեփական կարծիք կազմելու պահանջները: Այս առանձնահատկությունները նկատի ունենալով, ուսումնական գործընթացում նախապատվությունը պետք է տրվի աշակերտների ինքնուրույն մտածողությունը խթանելուն, վերլուծական աշխատանքի նկատմամբ ունեցած հակումները բավարարելուն: Այս ամենը հուշում է, որ ուսուցման գործընթացը պետք է հակված լինի այնպիսի առաջադրանքների, որոնք բավարարեն դպրոցականի՝ ամեն ինչի մասին սեփական կարծիք ունենալու պահանջը, ինչպես նաև ապահովեն ծրագրային նյութի գիտակցված յուրացումը և զարգացնեն իմացական հետաքրքրությունները:

Գ. ՄՏԵՓՈՒՅԱՆ
ԿԼԻ մասնագետ

ԳՆԱՐԱՏԱՆՔ

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Ազգի գավակը լինել բավական չէ, պետք է նաև նրա հավատարիմ ծառան լինել:

Ուսուցիչ, դաստիարակ, ՀՕՍ-ուհի, մայր, իր երկրին ու իր աշխատանքին նվիրված անձնավորություն: Մրանք ընկեր Բաղդասարյանին նկարագրող բառադարանից են:

Սմեղա Բաղդասարյանը ծնվել է 1946թ., Մարտակերտի շրջանի Վանք գյուղում, բանվորի ընտանիքում: Գողտրիկ այս գյուղում նա ունեցել է անհոգ մանկություն: Միջնակարգ ավարտելուց հետո 1967թ. ընդունվել է Բաքվի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի հեռակա բաժինը: Ավարտել է 1972թ.: Մինչ այդ, 1969թ. նա սկսել է իր աշխատանքային գործունեությունը՝ աշխատանքի անցնելով Վանքի մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի: 1970թ. Մարտակերտի շրջժողկրթբաժնի հրամանով աշխատանքի է անցել Կոճողոտի 8-ամյա դպրոցում՝ որպես լեզվի և գրականության ուսուցչուհի: Աշխատանքին զուգահեռ ընտանիք է կազմել, ունեցել 2 զավակ:

1978թ. ընտանիքով տեղափոխվում է Ստեփանակերտ: 1980թ. սկսած, ժամանակավոր աշխատել է Ստեփանակերտի թիվ 3, թիվ 2 մանկապարտեզներում՝ դաստիարակչուհի, թիվ 1 և թիվ 7 դպրոցներում՝ ուսուցչուհի:

1982թ. աշխատանքի է անցել քաղաքի թիվ 8 մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի, միաժամանակ կատարել է հասարակական հիմունքներով արհևոմի մախագահի պաշտոնը:

1998թ. ապրիլի 1-ից աշխատանքի է անցնում ՀՕՍ-ի «Սոսե» մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի:

Իր աշխատանքային, ընկերասիրության, անկողմնակալության, մարդկային անբասիր, շքայլ խառնվածքի համար վայելում է գործընկերների

և փոքրիկների սերն ու հարգանքը: Ընկեր Բաղդասարյանը, ինչպես նրան կոչում են և՛ երեխաները, և՛ կոլեկտիվը, երկարամյա իր աշխատանքում միշտ էլ



ցուցաբերել է յուրահատուկ հաջողություն: Նա մի անհատ է, ում կյանքի իմաստը եղել է մասնագիտությունը, գիշերուզօր աշխատել է մասնագիտական կատարելության հասնելու համար:

Նա միշտ էլ մտքով, հոգով, սրտով ամուր կապված է եղել իր սանիկներին: Զնայած այն փաստին, որ վերջին ժամանակներս առողջության հետ կապված խնդիրները սրվել էին, փոքրիկների հետ միասին պարում էր, երգում, խաղում, վազում: Աշխատել է ամեն կերպ երեխաներին տալ կատարյալ դաստիարակություն և գիտելիքներ:

Ցավոք, առողջական վիճակը թույլ չտվեց, որ շարունակեր իր սկսած աշխատանքը: Մեծ ափսոսանքով և սրտի ցավով այդ փաստն ընդունեցին նաև ծնողները:

- Մի՞թե հնարավոր է այդքան բարի ու լավը լինել: Նրա բարի դեմքին ու

ժպտացող աչքերին նայելով, հանգստանում ես ու ասում. «Իմ երեխան հուսալի ձեռքերում է» (ծնող՝ Նվարդ Գևորգյան):



- Մանկապարտեզ հաճախելու օրվանից ընկեր Բաղդասարյանը մեծ հոգատարությամբ է վերաբերվել մեր փոքրիկին և վստահություն ներշնչել: Նա մոր նման է եղել բոլոր երեխաների համար (ծնող՝ Կարինե Հարությունյան):

ՀՕՍ-ի Ստեփանակերտի մեկուսի մասնաճյուղի կազմը և «Սոսե» մանկապարտեզի կոլեկտիվը՝ տնօրեն Նելլի Դուլյանի գլխավորությամբ, հայտնում են իրենց շնորհակալական խոսքն այն բանի համար, որ բազմավաստակ մանկավարժ, դաստիարակչուհի Սմեղա Բաղդասարյանը երկար տարիներ նվիրված աշխատել է, չխնայելով ուժ ու եռանդ:

Առողջություն և երկար տարիների կյանք Ձեզ՝ ընկեր Բաղդասարյան:

Ընկեր ՄՈՎԱՍԻՅԱՆ Դաստիարակչուհի

ՆՐԱԺԵՑՑ ԴՊՐՈՑԻՆ

Պարույր Սևակի հանճարեղ տողերից մեկը, թերևս, պատեհ է այստեղ մեքերել՝ «Ինչ լինում է, թող որ լինի միանգամից»: Սակայն տողի նշանակությունն այս անգամ չունեցավ իր փիլիսոփայական խորիմաստ ազդեցությունը մեր դպրոցի ուսուցչական կոլեկտիվի անդամների վրա, երբ լսեցինք բոլորիս կողմից շատ սիրված ու հարգված մաթեմատիկայի վաստակաշատ ուսուցչուհի Ռիմա Ալբունյանի թոշակի անցնելու լուրը: Տեղյակ էինք, որ ուսուցչուհին արդեն պատրաստվում է վաստակած հանգստի անցնելու, բայց որ ուսումնական տարվա շեմին՝ անակնկալ էր:

Ռ. Ալբունյանը ինձ դասավանդած ուսուցիչներից մեկն է, և դասավանդած լինելով բարձր դասարաններում՝ ավելի շատ տեղ է զբաղեցնում իմ աշակերտական հիշողություններում, որոնք կապված են սիրելի դպրոցի հետ: Կյանքի հանգամանքներն այնպես են դասավորվել, որ ես, ուսումնա ավարտելով, արդեն շուրջ 10 տարի է՝ աշխատում եմ հարազատ դպրոցի հյուրընկալ հարկի ներքո ու, նրա ամեն մի անկյան հետ կապված, շատ հուշեր ունեմ: Աշխատում եմ ինձ դասավանդած շատ ուսուցիչների հետ նույն կոլեկտիվում ու ինձ երբեմն էլի աշակերտ եմ զգում: Իսկ տողերիս ներշնչանքի աղբյուրը փաստացի իրողությունն է: Մի պահ ցավ ենք զգում, որ դեռևս գիտելիքների կայուն պաշարով և աշխատանքի ավյունով լեցուն թոշակի են անցնում տակավին եռանդուն շատ մանկավարժներ: Բայց ի՞նչ կարող ես անել: Ինչպես ասում են՝ այդ օրը բոլորիս է սպասվում:

Սիրելի ընկեր Ալբունյան, Ձեզ աշակերտած լինելու իրավունքով եմ գրում այս տողերը և ուզում եմ ասել՝ Դուք չեք մոռացվում: Ձեզ հիշում և գնահատում են Ձեր գործընկերները, աշակերտները, դպրոցը հիշում է Ձեզ՝ ինչպես մյուս բոլոր թոշակառու ուսուցիչներին: Ձեր երկարամյա աշխատանքի ընթացքում ունեցել եք սաներ, ովքեր կյանքում գտել են իրենց տեղն ու դերը, և դրանում է Ձեր հպարտությունը: Ինչպես ասում են՝ ավելորդ համեստությունը ևս թերություն է, և թող դրան զոհ չգնա Ձեր աշխատանքի հավերժ պատշաճի գնահատանքը: Թող Աստված Ձեզ տա քաջառողջություն, երկար տարիների կյանք և վաստակած հանգստի վայելման բերկրանք:

Կարինե ՓԱԹՅԱՆ Մեծ Թաղերի միջև, դպրոցի օդար լեզվի ուսուցչուհի

ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ՁԵՋ ՆԻՇԵԼԻՍ...

Բարև, սիրելի «Լուսարար»: Ես գիմնորական սպա եմ: Այժմ թոշակի եմ անցել: Միշտ կարդում եմ ձեր համարները՝ ծանոթանալու համակարգում կատարվող փոփոխություններին ու նորություններին: Նայում եմ Արցախի վաստակաշատ ուսուցիչների նկարներին, կարդում նրանց մասին գրված երախտագիտության և շնորհակալանքի խոսքերը: Այսօր ես էլ ուզում եմ երախտագիտության խոսք ասել իմ դասուհի, հայրց լեզվի մասնագետ ընկեր Արզումանյանին:

Նրա հետ ծանոթացել եմ առաջին դասարանում: Տասը երկար տարիների ընթացքում նա եղել է մեզ հետ: Ծանթացրել է մեզ շրջակա բնության հետ: Մենք սիրել ենք մեր բնությունը, հատկապես շատ ենք սիրել մեր գետակը: Գնացել ենք շատ տեսարժան վայրեր: Ուղևորություն ենք կատարել նաև Ռուսաստանի տարբեր քաղաքներ: Ուսուցանել է մայրենի լեզու և մեր մեջ դաստիարակել է հայրենասիրություն: Հայրենասիրության և մայրենիի հանդեպ սիրո արմատներն այնքան խորն են նստել մեր մեջ, որ աշխարհի տարբեր անկյուններում իրենց կյանքը դասավորած նրա աշակերտներից շատերը, դրանց թվում և ես, եկանք հայրենիքի կանչով: Մասնակցեցինք մեր Գոյամարտին, կռվեցինք ու հաղթեցինք: Մեր դասընկեր Խաչիկ Լալայանը, որը եկել էր

Ռուսաստանից (աշխատանքի բերումով Սովետական Միության օրոք նա եղել է Ալժիրում), զոհվեց Կյավաք լեռան համար մղվող



մարտերում (նկարում՝ ձախից երրորդը): Ծանր պայմաններ ապրեցինք, սակայն պայքարելով հաղթեցինք, քանի որ քաջ գիտակցում էինք, որ ամեն ինչ անում ենք հանուն մեր երկրի ամբողջականության և պետականության պահպանման:

ցում էինք, որ ամեն ինչ անում ենք հանուն մեր երկրի ամբողջականության և պետականության պահպանման:



Իմ դասուհի, իմ ուսուցիչն իմ հոգևոր մայրն է: Այժմ նա վաստակած թոշակի է անցել: Կցանկանալի, որ իմ խոսքերի հետ գրեիք

նաև Ալեք Խաչունցի այս տողերը, քանի որ այն իմ հոգում շատ համահունչ է:

Լինեն, ինչ-որ հրաշք լինեն, Դպրոց գայի նորից, Նստեի նույն մտաբանին, Ուր կարոտով խորին, Իմ առաջին դասն եմ սերտել, Հայացքիդ տակ բարի Իմ առաջին գիրքն եմ թերթել Կյանքիս ճանապարհին... Ինձ եք տվել դուք մայրական Քնքանքները ձեր տաք, Ինձ եք տվել ինչ-որ ունեք Այնպես ազնիվ ու թանկ: Բաժանել եք մա՛ս-մաս, Ամեն անգամ բաժանելիս՝ ճերմակել է մի մազ... Ամեն փոքր մեր երազին Ինչ-որ ձև եք տվել, Ամեն անգամ մեր թռիչքին Մի նոր թև եք տվել...

Նարեկ ԳՅՈՋԱԼՅԱՆ Թոշակառու սպա (նկարում՝ ձախից առաջինը) գ. Մեծ Թաղեր

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Կ Ա Ր Գ

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿԱՂԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի
N 1036 - Ն որոշման

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույն կարգի գործողությունը տա-
րածվում է Լեռնային Ղարաբաղի շահագրգիռ
տարածքային ռազմաքաղաքական հաս-
տատությունների (այսուհետ՝ բուհեր) և հետ-
բուհական կրթական ծրագրեր իրականաց-
նող կազմակերպությունների վրա (այսուհետ՝
ուսումնական հաստատություններ)՝ անկախ
ուսուցման ձևից (առկա, հեռակա, հեռավար),
իրականացվող հիմնական կրթական ծրագ-
րերից (բակալավր, մագիստրոս և հետազո-
տող) և մասնագիտություններից:

2. Ակադեմիական շարժունությունն ու-
սանելու, հետազոտություններ կատարելու
կամ որակավորումը բարձրացնելու նպատա-
կով մեկ այլ ուսումնական հաստատությու-
նում սովորողի կրթության շարունակումն է:

3. Ըստ ուսման նպատակի կամ ժամա-
նակահատվածի, սովորողների՝ բակալավրի,
մագիստրոսի և հետազոտողի կրթական
ծրագրերով ուսումնառող, ակադեմիական
շարժունությունը կարող է լինել որոշակի ժամ-
կետով (այսուհետ՝ շարժունություն) կամ հիմ-
նական (այսուհետ՝ տեղափոխություն):

II. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Սովորողների շարժունությունը չի
հանգեցնում ուսման սահմանված ժամկետի
ավելացմանը:

5. Ուսումնական հաստատությունների
սովորողների շարժունության իրականացման
եղանակներից է գործընկեր ուսումնական
հաստատություններ, ինչպես նաև, սովորողի
անհատական նախաձեռնությամբ, նրանց ու-
ղարկելը՝

- 1) կրկնակի աստիճանաշնորհման կր-
թական ծրագրերի (երկու ավարտական փաս-
տաթուղթ) շրջանակներում ուսանելու.
- 2) համատեղ աստիճանաշնորհման կր-
թական ծրագրերով (մեկ վկայականով) ուսա-
նելու.
- 3) միջբուհական համագործակցու-
թյան, այդ թվում՝ ակադեմիական փոխանակ-
ման ծրագրերի շրջանակներում ուսանելու.
- 4) վերապատրաստում (այդ թվում՝ լեզ-
վական) անցնելու.
- 5) ուսումնական (հետազոտական, ար-
տադրական) պրակտիկա անցնելու:
- 6. Հավակնորդների ընտրությունը կա-
տարվում է մրցույթային եղանակով՝ հաշվի
առնելով նաև նրանց ակադեմիական առաջա-
դիմությունը և ընդունող կողմի լեզվի (կամ
օտար լեզվի) իմացությունը:
- 7. Շարժունության ծրագրին մասնակ-
ցելու նպատակով՝ սովորողի և ուղարկող ու
ընդունող ուսումնական հաստատությունների
միջև կնքվում է եռակողմ կրթական համաձայ-
նագիր: Համաձայնագրում նշվում են այն ա-
ռարկաները, որոնք սովորողները պետք է ու-
սանեն ընդունող ուսումնական հաստատու-
թյունում: Միաժամանակ նշվում են ակադե-
միական տարբերությունների մարման ժամ-
կետների վերաբերյալ սովորողի պարտավո-
րությունները:

8. Շարժունության արդյունքում կրե-
դիտներով արտահայտված կրթական ար-
դյունքները չպետք է գերազանցեն համապա-
տասխան որակավորում ստանալու համար
անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծան-
րաբեռնվածության բակալավրի կրթական
ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական
ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական
ծրագրի 30 տոկոսը:

9. Ընդունող բուհում ուսուցման ժամկե-
տի ավարտից հետո ուսանողն իր ուսումնա-
փորձ առարկաների և պարապմունքների
ցանկը, ինչպես նաև ստացած կրեդիտներն ու
զննատարականները հաստատող ակադեմիա-
կան տեղեկանքը պետք է ներկայացնի բուհ՝

ակադեմիական ճանաչման մասին փաստա-
թուղթը նախապատրաստելու համար:

III. ՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10. Տեղափոխության մասին ուսանող-
ների դիմումներն ընդունվում են համապա-
տասխան ձևով ուսուցման կիսամյակների ու-
սումնական պարապմունքներին նախորդող և
հաջորդող 2 շաբաթվա ընթացքում: Ուսանողը
տեղափոխման մասին դիմումը ներկայաց-
նում է իր ուսումնառության բուհի ղեկավարին՝
ստուգման գրքույկի պատճենը ստանալու
համար: Բուհի կողմից ստուգման գրքույկի
պատճենը տրամադրվում է 7 աշխատանքա-
յին օրվա ընթացքում:

11. Ուսանողի տեղափոխությունը թույ-
լատրվում է, եթե տեղափոխման պահին ու-
սումնառած ծրագրի և ընդունող ծրագրի բո-
վանդակությունների տարբերությամբ պայ-
մանավորված՝ առարկայական տարբերու-
թյունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը:
Հակառակ պարագայում ուսանողին առա-
ջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսա-
մյակում կամ այլ հարակից մասնագիտու-
թյամբ սովորելու, որի դեպքում առարկայա-
կան անհամապատասխանությունների նշված
պահանջը բավարարվում է: Ձինվորական ծա-
ռայությունից տարկետման իրավունքով բուհ
ընդունված ուսանողների տեղափոխության
դեպքում տրամադրված տարկետման իրա-
վունքի փոփոխություն չի կատարվում:

12. Չի թույլատրվում բակալավրի կրթա-
կան ծրագրով առաջին և ավարտական կուր-
սերում ուսանողի տեղափոխությունը: Մա-
գիստրոսի կրթական ծրագրով ուսումնառող-
ների տեղափոխությունը թույլատրվում է ա-
ռաջին կիսամյակի ավարտից հետո:

Բուհերի հեռակա (առկա) բաժիններից
առկա (հեռակա) բաժիններ տեղափոխումը
թույլատրվում է առանց պարտադիր ժամկե-
տային զինվորական ծառայության տարկետ-
ման իրավունքի, բուհի կողմից սահմանված
կարգով:

13. Չի թույլատրվում նպատակային տե-
ղերում ընդունված ուսանողների տեղափո-
խումն այլ բուհ կամ այլ մասնագիտությամբ
ուսումնառությամբ:

14. Լեռնային Ղարաբաղի շահագրգիռ
տարածքային ռազմական բուհերում սովորող
կուրսանտները, որոնց ուսումնառությունը
դադարեցվել է զինվորական ծառայությունից
առողջական վիճակով կամ ընտանեկան դրու-
թյամբ պայմանավորված՝ վաղաժամկետ ար-
ձակվելու պատճառով, ամբողջ ուսումնական
տարվա ընթացքում կարող են հրամանագր-
վել՝ բուհերի համապատասխան կուրսերում
ուսանելու համար:

15. Ուսանողի տեղափոխությունը թույ-
լատրվում է տվյալ մասնագիտության գծով լի-
ցենզիայով հատկացված ընդունելության
սահմանային տեղերի (ըստ ուսուցման ձևերի
և որակավորման աստիճանների) շրջանա-
կում:

16. Օտարերկրյա բուհերից ուսանողնե-
րի տեղափոխության դեպքում հանձնման են-
թակա ստուգաքննության և քննությունների թվի
մեջ չեն ներառվում հայագիտական առարկա-
ները: Բացառություն են կազմում այն դեպքե-
րը, երբ սովորողն օտարերկրյա բուհում, որ-
պես մասնագիտական, ուսումնասիրել է հա-
յագիտական առարկաներ, ինչպես նաև տե-
ղափոխվող բուհում ընտրել է հայագիտական
մասնագիտություններ:

17. Կրեդիտներով պայմանավորված ա-
ռարկայական տարբերությունների ցանկը ո-
րոշում է ընդունող բուհը: Ուսանողը պետք է
ուսումնառի և հանձնի գոյացած տարբերու-
թյունները՝ ընդունող բուհի կողմից սահման-
ված անհատական ժամանակացույցով, բայց

ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշր-
ջանի սկիզբը:

18. Չի թույլատրվում ըստ մասնագիտու-
թյունների հավատարմագրված՝ կրթական
ծրագրեր չունեցող ոչ պետական բուհերից ու-
սանողի տեղափոխությունը պետական կամ
ըստ մասնագիտությունների հավատարմագր-
ված՝ կրթական ծրագրեր ունեցող ոչ պետա-
կան բուհեր:

19. Պետական և ըստ մասնագիտու-
թյունների հավատարմագրված՝ կրթական
ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձ-
րագույն ուսումնական հաստատությունները-
յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում
Լեռնային Ղարաբաղի շահագրգիռության կր-
թության կազմակերպության (այ-
սուհետ՝ նախարարություն) են ներկայացնում
ուսանողների շարժունության բոլոր ձևերի
մասին տեղեկատվություն՝ ըստ կրթական
ծրագրի, ուսուցման ձևի, մասնագիտության և
ուսուցման կուրսի տեղափոխման:

IV. ՆԵՐՐՈՒՅՎԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐ

20. Ուսանողի՝ բուհի ներսում տեղափո-
խությունը, որի ընթացքում կարող է անցում
կատարվել մեկ մասնագիտությունից մյուսը
կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա,
հեռավար), իրականացվում է բուհի ղեկավարի
հրամանով, ուսանողի անձնական դիմումի
համաձայն:

21. Ներբուհական տեղափոխություննե-
րը կատարվում են սույն կարգով սահման-
ված՝ ուսանողների տեղափոխության ընդհա-
նուր պահանջներին համապատասխան:

V. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆ ԲՈՒՅԻՑ ԲՈՒՅ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Ուսանողի՝ բուհից բուհ տեղափո-
խությունը, որի ընթացքում կարող է անցում
կատարվել մույն մասնագիտությամբ, մեկ
մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ու-
սուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար), ի-
րականացվում է ընդունող բուհի ղեկավարին
հասցեագրված՝ ուսանողի անձնական դիմու-
մի համաձայն, որին կցվում է նաև սովորած-
բուհի կողմից տրամադրված ստուգման գր-
քույկի պատճենը:

23. Եթե ընդունող բուհում տվյալ մաս-
նագիտությամբ և կուրսում ազատ տեղերի
թիվն ավելի քիչ է, քան տեղափոխվել ցանկա-
ցողների թիվը, ապա կազմակերպվում է ա-
տաստովորում, և անցկացվում է մրցույթ, որի
արդյունքում ընտրվում են այն ուսանողները,
ովքեր շարունակելու են ուսումնառությունը:
Ատեստավորման և մրցույթի անցկացման
կարգն ու պայմանները սահմանում է ընդու-
նող բուհը: Մինչև տեղափոխվողների կողմից
առարկայական տարբերությունների հանձ-
նումը՝ ընդունող բուհի ղեկավարն իրավասու է
ուսանողին ժամանակավորապես հրամա-
նագրելու համապատասխան ակադեմիական
խմբում և նրան թույլատրել մասնակցելու ու-
սումնական պարապմունքներին: Հրամանում
նշվում են նաև ակադեմիական առարկայա-
կան տարբերությունների ցանկը, դրանց մար-
ման անհատական ժամանակացույցը, որի ա-
վարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում տր-
վում է հրաման:

24. Տեղափոխվող ուսանողին ընդունող
բուհը տալիս է սահմանված մույն տեղե-
կանք՝ համաձայն ձևի: Ուսանողը նշված տե-
ղեկանքը ներկայացնում է իր սովորած բուհ,
որի ղեկավարը եռօրյա ժամկետում տալիս է ա-
զատման մասին հրաման՝ հետևյալ ձևակերպ-
մամբ՝ «Ուսանող _____ ը ազատ-
ված է՝ _____ բուհ տեղա-
փոխման կապակցությամբ»: Ուսանողին առ-
ձեռն տրվում կամ փոստով առաքվում են ա-
զատման մասին հրամանի պատճենը, սահ-

մանված մույն տեղեկանքը, միջնակարգ կրթության ավարտական վկայա-
կանը, անձնական գործի փաստաթղթերը և
ընդունելության քննություններին առնչ-
վող փաստաթղթերը: Ուսանողի անձնական
գործում մնում են ազատման մասին հրամանի
և բուհի կողմից հաստատված միջնակարգ կր-
թության ավարտական վկայականի պատճեն-
ները, ուսանողական տոմսը, ստուգման գր-
քույկը և ուղարկված փաստաթղթերի ցանկը:

25. Տեղափոխվող ուսանողի հրամա-
նագրումը կատարում է ընդունող բուհի ղեկ-
ավարը՝ ուսանողի դիմումը, միջնակարգ կրթու-
թյան ավարտական վկայականը և ակադե-
միական տեղեկանքն ստանալուց հետո
(մինչև այդ ստուգվում է ակադեմիական տե-
ղեկանքի և ստուգման գրքույկի պատճենի
համապատասխանությունը): Տեղափոխու-
թյան մասին հրամանում կատարվում է
հետևյալ գրառումը՝

« _____ -ին
_____ բուհից տեղափոխ-
ման կարգով ընդունել
_____ ֆա-
կուլտետի _____ մասնագի-
տության _____ կուրս՝
_____ ուսուցման

ձևով, վճարովի (անվճար) սկզբունքով»: Ըն-
դունող բուհում կազմվում է ուսանողի նոր
անձնական գործ: Ուսանողին տրվում են նոր
ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:

26. Հեռակա ուսուցումից առկա ուսուց-
ման տեղափոխությունները կատարվում են
սույն կարգի պահանջներին և կարգի 10-13-
րդ կետերով սահմանված դրույթներին համա-
պատասխան: Առարկայական տարբերու-
թյունները հանձնելու համար սահմանվում է
անհատական ժամանակացույց, որի ժամկե-
տը չպետք է գերազանցի տվյալ կիսամյակի
առկա ուսուցման համար սահմանված ժամ-
կետը:

VI. ՕՏԱՐԵՐԿՐԻՅԱ ԲՈՒՅԵՐԻՑ ՏԵՂԱՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՅԵՐ

27. Օտարերկրյա պետական և ըստ
մասնագիտությունների հավատարմագրված՝
կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետա-
կան բարձրագույն ուսումնական հաստատու-
թյուններից Լեռնային Ղարաբաղի շահագրգիռ
տարածքային բուհեր ուսանողների տեղափոխու-
թյուն իրականացվում է վճարովի ուսուցման
սկզբունքով: Օտարերկրյա բուհ միջպետա-
կան համաձայնագրերով ուսման գործողված
և առողջական վիճակի կամ ուսման գործըն-
թացը խոչընդոտող այլ անհարգապահելի
հանգամանքների պատճառով Լեռնային Ղա-
րաբաղի շահագրգիռության վերադարձող ու-
սանողները, ընդունող բուհի ղեկավարի առա-
ջարկությամբ, ուսուցումը կարող են շարունակել
անվճար սկզբունքով:

28. Ընդունող բուհը դրական կարծիքի
դեպքում նախարարություն է ներկայացնում
ուսանողի ակադեմիական տեղեկանքը: Տե-
ղափոխության մասին որոշումն ընդունում է
Լեռնային Ղարաբաղի շահագրգիռության կր-
թության և գիտության նախարարը՝ համապա-
տասխան օտարերկրյա բուհից գրավոր
հարցման դրական պատասխան ստանալուց
հետո:

29. Ուսանողի տեղափոխությունն իրա-
կանացվում է սույն կարգի 10-12-րդ, 23-26-րդ
և 28-րդ կետերով սահմանված դրույթներին
համապատասխան: Եթե ուսանողի անձնա-
կան գործն առաքման ենթակա չէ, ապա դրա
մասին ընդունող բուհին հղվում է համապա-
տասխան փաստաթուղթ, իսկ ուսանողի հրա-
մանագրումը կատարվում է նրա դիմումի և ա-
կադեմիական տեղեկանքի հիման վրա:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ձև
Ընդունող բուհի անկյունային կնիքը,
ամսաթիվը, գրանցման համարը
(կամ բուհի ձևաթուղթը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է _____ -ին՝ այն մասին, որ
(անունը, հայրանունը, ազգանունը՝ լրիվ)

Որան _____ կողմից տրված _____
(բուհի լրիվ անվանումը) (ստուգման գրքույկի գրանցման
ստուգման գրքույկի պատճենի և դիմումի համաձայն
թիվը և ամսաթիվը)

թույլատրվել էր մասնակցել ատեստավորման գործընթացին, որը նա հաջողությամբ անցել է:

_____ -ը կիրամանագրվի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

ուսուցման

(ընդունող բուհի և ֆակուլտետի լրիվ անվանումները, առկա, հեռակա, հեռավար)

_____ կուրս՝ _____ մասնագիտության
գծով, _____
(մասնագիտության լրիվ անվանումը)

_____ սկզբունքով, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ
(անվճար, վճարովի)

կրթության ավարտական վկայականը ներկայացնելուց հետո:

Ունեւոր _____
(ստորագրությունը)(անունը, ազգանունը)

Կ. Տ. _____ 20 թ.

Հավելված
ԼՂԳ կրթության և գիտության նախարարի
2012 թվականի փետրվարի 7-ի
N 10-Ն հրամանի

Կ Ա Ր Գ
ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՅՄԱՆ (ԱԶՏԱՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Յանտարության բարձրագույն ուսումնական հաստատություններում և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր (բակալավրի և մագիստրոսի) իրականացնող հաստատություններում (այսուհետ՝ Բուհեր) ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման ընդհանուր պայմանները:

2. Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր, որոնք ուսանողը պետք է հանձնի ձեկտորի հրամանով հաստատված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

3. Առարկայական տարբերություն է համարվում ուսումնառած պլանում բացակայող առարկան կամ որևէ առարկայից 25 տոկոս և ավելի կրեդիտների տարբերությունը:

4. Ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում քննաշրջանում երեք և ավելի առարկաներից կամ մեկ առարկայից երեք անգամ «անբավարար» գնահատական ստանալը:

5. Բուհի ձեկտորը վերականգնվող ուսանողին ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է, ըստ տվյալ Բուհում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի:

II. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՐԱՅՄԱՆ, ԱԶՏԱՄԱՆ

6. Ուսանողը հեռացվում է Բուհից.

1) ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում (բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքերի):

2) Բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքերում:

3) Բուհի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:

7. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքով ընդունված, սակայն Բուհից հեռացված ուսանողները զրկվում են տարկետման իրավունքից:

8. Ուսանողը ազատվում է Բուհից.

1) իր դիմումի համաձայն.

2) այլ Բուհ տեղափոխվելու դեպքում:

9. Բուհից ուսանողի ազատման հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման համաձայն սույն կարգի 6-րդ կետով նախատեսված դեպքերի:

10. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.

1) ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում:

2) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում:

3) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

11. Քննաշրջանի ընթացքում քննություններին չներկայացած ուսանողներին թույլատրվում է մինչև տվյալ կիսամյակի երրորդ շաբաթվա ավարտը անհատական ժամանակացույցով հանձնել ակադեմիական պարտքերը:

12. Ակադեմիական պարտքերի անվճար հիմունքներով մարումը իրականացվում է ձեկտորի հրամանով ձևավորված քննական հանձնաժողովներում: Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա վերջը:

13. Սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում, Բուհից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի, ակադեմիական պարտքերի մարման արդյունքների ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:

14. Բուհից հեռացված (ազատված) արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են համապատասխան զինկոմիսարիատներ:

15. Բուհից հեռացման (ազատման) դեպքում ուսանողի դիմումի համաձայն, 3 աշխատանքային օրվա ընթացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը: Բուհի կողմից հաստատված ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:

16. Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը, վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

17. Սույն կարգի 10-րդ կետի համաձայն ուսումնառությունն ընդհատած ուսանողները շարունակում են ուսանողական իրավունքները մինչև ուսումնառության ընդհատումը ունեցած կարգավիճակի պահպանմամբ:

III. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

18. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:

19. Ուսանողական իրավունքների վերականգնման դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում: Վերականգնման դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը:

20. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են ընդունող Բուհի ձեկտորի հրամանով՝ ուսուցման բոլոր ձևերում:

21. Բուհը քննարկում է ուսանողի վերականգնման դիմումը և որոշում նրա ուսումնառության շարունակման կուրսը և մյուս պայմանները, կամ հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը:

22. Առաջացած առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի մարման համար Բուհի ձեկտորի կողմից սահմանվում է ժամկետ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

23. Առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի հանձնումից հետո կցագրման հրամանը փոխարինվում է ուսանողի հրամանագրումով:

24. Ձրարկոչվելու կապակցությամբ և առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ ուսումնառությունը ընդհատած ուսանողները ուսումնառությունը շարունակում են այն պահից, որից այն ընդհատել են՝ անկախ առաջացած ծրագրային տարբերություններից:

25. Վճարովի ուսուցման համակարգում ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:

26. Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել (ազատվել) են, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված կրեդիտների գումարային քանակը չի գերազանցում 20 կրեդիտը: 20 կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր կիսամյակում, որի համար առարկայական անհամապատասխանությունների սույն կետում

նշված պահանջը բավարարվում է, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակի:

27. Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են տվյալ մասնագիտության համար լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի սահմաններում:

28. Սույն կարգի 14-րդ կետով ուսումնառությունն ընդհատած ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքներն այն պահից, երբ ընդհատել են այն, անկախ լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի քանակից և առաջացած ծրագրային տարբերություններից:

29. Բուհից հեռացված ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքները առնվազն 1 կիսամյակ հետո:

30. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են վճարովի սկզբունքով: Վճարովի սկզբունքով վերականգնված ուսանողները կարող են Լեռնային Ղարաբաղի Յանտարության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի N 81 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Յանտարության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի» համաձայն մասնակցել փոխատեղման գործընթացին՝ առնվազն մեկ ուսումնական տարի ուսանելուց հետո:

31. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները կարող են վերականգնել ուսանողական իրավունքները պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

32. Ըստ մասնագիտությունների չհավատարմագրված Բուհերից հեռացված (ազատված) ուսանողների վերականգնումն ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող հավատարմագրված Բուհերում չի թույլատրվում:

33. Վերականգնված ուսանողի անձնական գործում պահվում են ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգնման մասին հրամանի պատճենը, Բուհի հետ կնքած պայմանագիրը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը, ուսման վարձի վճարման անդորրագիրը:

34. Անվճար սկզբունքով ուսումը կարող են շարունակել Լեռնային Ղարաբաղի Յանտարության օրենքով սահմանված իրավունքներից օգտվող անձինք:

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ - 500

ԴՐԱԳՆԵՐ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմության այս կամ այն ժամանակաշրջանը, լինի դա տասնամյակ, դար թե հազարամյակ, նախ և առաջ, մարդկության հիշողության մեջ դառնում է պատմական կարևոր իրադարձություններով: Վերցնենք թեկուզ 15-րդ դարը: Այն նշանավորվեց երեք կարևոր իրադարձություններով: 1451թ. թուրք բարբարոսները գրավեցին Կոստանդուպոլիսը: Պատմության ասպարեզից վերացավ Բյուզանդական կայսրությունը, որը խոշոր դերակատարում ուներ մշակույթի, ընդհանրապես, քաղաքակրթության զարգացման պատմության մեջ: 1455թ. գերմանացի Յոհան Գուտենբերգը լույս ընծայեց առաջին տպագիր գիրքը, և սկսվեց գրատպության դարը: 1492թ. Քրիստափոր Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան, ու սկսվեց նոր հայտնագործությունների ժամանակաշրջանը: Բայց քանի որ այս տարի լրանում է հայերեն առաջին գրքի տպագրության 500-ամյակը, դառնանք հայ գրատպության զարգացման պատմությանը:

Գուտենբերգից հետո եվրոպական որոշ երկրներում բացվում են տպարաններ, ու գրատպությունը որոշակի աշխուժացում է ապրում: Բայց ահա ասիական ժողովուրդների մեջ հայերեն առաջինը ձեռնամուխ եղան գրատպությանը և 1512թ. տպագրեցին առաջին հայերեն գիրքը: Հայերեն այդ գործում առաջ անցան եվրոպական շատ ժողովուրդներից, այդ թվում՝ ռուսներից, որտեղ առաջին գիրքը տպագրվեց 1564թ., իսկ ամերիկացիներն առաջին գիրքը տպագրեցին 1640թ.:

Հայերեն մյուս ազգերից տարբերվեցին նրանով, որ առաջին գիրքը տպագրեցին Հայաստանի սահմաններից բավականին հեռու՝ Իտալական Վենետիկ քաղաքում: Բայց ինչո՞ւ հենց Վենետիկում: Բանն այն է, որ այստեղ առաջին տպարանը հիմնվել էր 1469թ., և հազիվ 25 տարի անց գործում էր 150 տպարան, ու 25 տարվա ընթացքում տպագրված գրքերի թիվը հասավ 2 միլիոնի: Վենետիկում (հակառակ մյուս երկրների, որտեղ տպագրում էին հիմնականում կրոնական գրքեր) սկսեցին տպագրել հին դասականների ձեռագրերը՝ Պլատոն, Արիստոտել: Կիլիկյան Հայաստանի Ռուբինյան տոհմի սերունդները առևտրական սերտ հարաբերությունների մեջ էին ծովային առևտրով հռչակված Վենետիկի հետ: Վենետիկցի Մարկո Շիանու կտակի համաձայն, այնտեղ գործում էր «Հայոց տուն»-ը, որը դարձավ այն հավաքատեղի, որտեղ հանդիպում էին Կիլիկիայից և այլ վայրերից եկած շատ հայեր, ու հենց նրանց օգնությամբ էլ ծուլվեցին առաջին հայերեն տառերը:

Հայ առաջին տպագրիչը, հայկական տպագրության սկզբնավորողն ու հիմնադիրը Հակոբ Մեղապարտն էր: Ծննդյան և մահվան թվերը հայտնի չեն: Հակոբն ապրել և ստեղծագործել է Վենետիկում: Նա տեղի գրածուկով վարպետների մոտ պատրաստել տվեց հայերեն մի տեսակ բուրդագիր և գլխագիր տպատառեր, ինչպես և գարդագրերի, պատկերների, չորս քառանկյունի գարդերի և 24

վերնախորագրային զարդան շրջանակների տպատախտակներ: Մեղապարտի սարքավորած առաջին հայկական տպարանն աշխատել է 1512-1513թթ.՝ լույս ընծայելով 5 գիրք (որոշ աղբյուրներում՝ 6): Այդ 5 գրքերն էլ պահպանվում են: Դրանք են, ըստ տպագրման հերթականության՝ «Ուրբաթագիրք», «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատունար», «Տաղարան»: Այս գրքերից միայն «Պատարագատետրն» ունի հրատարակության թվականը, վայրն ու տպագրիչի անունը նշող հիշատակարան: «Գրեցավ սուրբ տառս ի օրս (1513) ի աստուածապահ քաղաքս ի Վենետ, որ է Վենետիկ՝ Ֆրանկստեան, ով որ կարդայք մեղաց թողութիւն խնդրեցեք Աստուծոյ»: Հ. Մեղապարտի տպագրած գրքերի վերջում կա տպարանահիշ, որ խաչակիր շրջանակ է երկգիծ քառակուսու մեջ: Շրջանակը բաժանվում է 4 մասի, յուրաքանչյուրում կա լատինական մի սկզբնատառ՝ D, I, Z, A: Տառերի վերձայնական շատ փորձերից անհավանականը Կ. Բազմաջանիին է Dei servus (Աստծո ծառայ), Iakobus (Հակոբ), Zanni (Ծանցի) Հովհաննես(յան), Armenius (հայ): Հ. Մեղապարտը ջանացել է իր տպագրած գրքերը նմանեցնել ձեռագրերի, քանի որ այն ժամանակ տպագիր գիրքն անսովոր էր հայոց մեջ: Մեղապարտի տպագրական արվեստի ավանդները (տպատառերի, գարդագրերի ու գարդերի ձևերը, տպագիր էջի չափը) օգտագործել են հաջորդ հայ տպագրիչները՝ Աբգար Թխաթեցին, Սուլթան-շահի և ուրիշներ: Ըստ ԽՍՀՄ ԳՎ թղթակից-անդամ Ալեքսեյ Սիդորովի, Հ. Մեղապարտի տպագրական արվեստից, հատկապես գարդաններից օգտվել են ռուս առաջին տպագրիչ Իվան Ֆեոդորովը և եվրոպացի տպագրիչները:

«Ուրբաթագիրքը» հայ առաջին տպագիր գիրքն է: Գրքի տառատեսակն է բուրդագիր, տպագրությունը երկգույն՝ սև ու կարմիր, գրադաշտի չափերը՝ 6,5 x 13 սմ, պրակները՝ 8, էջերը՝ 124, ունի 4 պատկեր և էջախորագրային ժապավենաձև ճակատագրող տիտղոսաթերթի վրա՝ «Անուն գրոցս սուրբ ուրբաթագիրք», 123-րդ էջում՝ լատիներեն D, I, Z, A սկզբնատառերը: «Ուրբաթագրքի» եզակի օրինակներ պահվում են Հայաստանի և արտասահմանյան մի քանի գրադարաններում: «Ուրբաթագրքում» ամփոփված են առասպելախառն պատմություններ, չափածո աղոթքներ, պահպանական գրքեր: Հ. Մեղապարտը գրքերը տպագրել է 300-ական օրինակով: Գրքերից մեկը՝ «Տաղարանը», երգերի ժողովածու էր և մեծամասամբ՝ Հովհաննես Թվկուրանցու գրածներից: Դրանց մեծ մասը սիրո երգեր են:

Հ. Մեղապարտից հետո շուրջ կես դար հայերեն գրքեր չեն տպագրվել, և միայն 1565թ. Աբգար դպիրը Վենետիկում հրատարակում է «Սաղմոս» եկեղեցական գիրքը: Երկու տարի հետո Աբգարը տպարան է հիմնում Կ. Պոլսում: Այն շատ թեքիչ ավելի մոտ էր Հայաստանին և ավելի շատ գաղթօջախներով էր շրջապատված:

Այստեղ Աբգարը տպագրում է «Տոնացույց», «Ժամագիրք», «Պատարագատետր» և եկեղեցուն նվիրված այլ գրքեր: Ինչպես վկայում են փաստերը, հայ գրատպությանը դյուրին ճանապարհ չէր բաժին հասել: Աբգար դպիրի տպագրած գրքերից հետո 1633թ. Փարիզի արքայական տպարանում լույս է տեսնում հայ-լատինական բառարան, որի հրատարակիչը Եղալ Ֆրանցիսկո Ռիվոլան:

1640թ. Խաչատուր վարդապետը Ջուղայում (Պարսկաստան) հիմնեց տպարան և հրատարակեց «Հարանց վարք» անունով գիրքը: Այս տպարանը շինված էր տնային միջոցներով՝ փորագրեցին տառեր, շինեցին մանուկ, պատրաստեցին թուղթ և տպագրեցին գիրքը: Այն բավականին կապիտ էր, անվարժ, բայց հուսալից չարեց տպագրիչին, և նա 1642թ. տպագրեց «Ժամագիրք»-ը՝ բավականին որակյալ տեսքով:

Խաչատուր Կեսարացու աշակերտ Հովհաննես վարդապետը Հռոմում ուսումնասիրելով տպագրական գործը, հայերեն մոր տառերով վերադառնում է Ջուղա և 1643թ. 80 օրվա ընթացքում տպագրում «Սաղմոս» գիրքը (1050 օրինակ), իսկ 1647թ. հրատարակում է «Պարզատունար Ազարիայի» գիրքը: Նա նույնիսկ ձեռնարկել էր Աստվածաշնչի տպագրությունը, որը, սակայն, կիսատ մնաց վարդապետի դեմ հակառակությունը սաստկանալու հետևանքով:

17-րդ դարի կեսերից հայ գրքի տպագրության կենտրոն է դառնում Ամստերդամ քաղաքը (Հոլանդիա): Այստեղ արդյունավետ աշխատանք է կատարում Ռսկան վարդապետը, որը նախ տպագրում է «Այբբենարան»՝ որպես գրագիտության ձեռնարկ, իսկ հետո սկսում է Աստվածաշնչի տպագրությունը, և այն տպագրվում է 2 տարվա ընթացքում՝ 1666-1668թթ.: Ռսկանը Ամստերդամում մնում է 4 տարի և տպագրում 17 գիրք: Սա բացառիկ բեղմնավոր գործունեություն էր՝ զումարած, որ այդ գրքերը նորություններ էին բովանդակության և արժանիքների տեսանկյունից: Նա առաջին անգամ տպագրեց «Սաշտոց», «Նոր կտակարան», 1666թ.՝ իր թարգմանած և խմբագրած «Քերականությունը», իսկ 1669-ին հրատարակեց 17-րդ դարի հայտնի հեղինակություն Առաքել վարդապետ Դավիթեցու «Պատմագրությունը», որը կարևոր պատմական աշխատություն էր պատմագրության բնագավառում:

1686թ. տպարան է բացվում Վենետիկում՝ Թադևոս Համազասպյանի ջանքերով, հետո՝ Սահրատյանի կողմից, որոնք, սակայն, գրատպության մեջ եական հաջողություններ չէին արձանագրում: Սակայն նույն այդ ժամանակաշրջանում Վենետիկի օտարալեզու տպարաններում գործում էին նաև հայերեն բաժիններ՝ Բարբոնիի, Մորետիի տպարանները: 1691-1701թթ. Լիվոռնո քաղաքում գործում էր հայկական տպարան: Առաջին գիրքը, որ տպագրվում է, Խաչատուր Առաքելյանի «Քերականություն» էր: Այստեղ է տպագրվել նաև «Եսաթն իմաստասիրաց» վեպը, 11

Նոր գիրք

ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՆԱԽԱԳՊՐՈՋԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոգեբանների, մանկավարժների, ուսուցիչների համար, հիրավի, մեծ անակնկալ է Արցախի պետական համալսարանի պրոֆեսոր, մ. գ. թ. Արկարի Թովմասյանի «Մանկան հոգեբանության մի քանի հարցեր կամ ինչպես են «փիլիսոփայուն» երեխաները» գիրքը:

Գրքի առանցքում նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի և մտածողության զարգացման հարցերն են: Հեղինակը մանրամասնել է նախադպրոցական տարիքում երեխայի զարգացման հոգեբանական առանձնահատկությունները: Ըստ որում, այստեղ հոգեբանամանկավարժական գիտական հիմնավորումներով է ներկայացվել նախադպրոցականի գործունեության հիմնական տեսակը՝ խաղը, վերջինիս բովանդակության որակական ու աստիճանական փոփոխությունները:

Ուշագրավ օրինակներով և յուրատիպ վերլուծություններով է ներկայացված նախադպրոցականների մտավոր զարգացման, նրանց հոգեկան-կամային ոլորտի և հատկանիշների, դպրոցական ուսուցման համար նրանց պատրաստակամության ձևավորման հոգեբանամանկավարժական ընթացքը: Հեղինակն անդրադարձել է նաև նախադպրոցականի բարձրագույն իմացական գործընթացների՝ զգայությունների, ըմբռնում ու դիտողականության, ուշադրության, հիշողության ու երևակայության ձևավորման ու զարգացման օրինաչափություններին: Ուշադրության արժանի են հատկապես երևակայության զարգացման մասին հեղինակի դիտարկումները: Երևակայության զարգացման ընթացքն իսկապես կարող է ընթանալ տարբերաբար, եթե մենք ճիշտ մոտեցում չենք ցուցաբերում: Այս առումով հեղինակն առաջադրում է երեխաների գործունեության հաջողական բարդացման հաշվառման և խնդրի լուծման իր տեսակետները:

Խորհրդատվական արժեքավոր նյութ են պարունակում հատկապես նախադպրոցականի մտապահման ու մոռացման առանձնահատկությունների վերաբերող դիտարկումները, ըստ որում, մատնանշվում են մտապահման բուրդի հնարները: Գիտական մանկավարժը հստակ ներկայացրել է նաև նախադպրոցական երեխայի մտածողական գործունեության և դրա զարգացման առանձնահատկությունները, մի բան, որի իմացությունն էապես կարևոր է նախադպրոցական հիմնարկների դաստիարակների ու հոգեբանների համար:


Գիտական ուշագրավ մեկնություններով է ներկայացված նախադպրոցականի խոսքի զարգացման ընթացքը: Ըստ որում, անդրադարձ է արվել նաև նախաթրթվանքի կամ «աղավանջման» թրթվանքի փուլերին, պահիվ խոսքի, ակտիվ արտաքին խոսքի, իրադրական խոսքի ենթափուլին, գերզգայուն փուլին և այլն: Իսկ կապակցված կոնտեքստային խոսքի փուլի բնութագրման համատեքստում հեղինակը դիտարկել է նաև եսակենտրոն խոսքի հիմնախնդիրը:

Հոգեբանամանկավարժական դիպուկ նկարագրումներով են ամբողջացված նախադպրոցականի «Ի՞նչ է սա» և «Ի՞նչ ո՞ւ» հարցերի, բարդ նախադասությունների ու լեզվի քերականության յուրացման փուլերը: Սեփական դիտարկումներն ու խնդրի ուսումնասիրման բնագավառում հայտնի տեսաբանների տեսությունների զուգակցումները մատուցած նյութը դարձրել են առավել ընդգրկուն և ամբողջական:

Նախադպրոցականի զգացմունքների դաստիարակությամբ մենք ձևավորում ենք հասարակության վաղվա անդամին:

Եվ նախադպրոցական տարիքում զգացմունքների ձևավորման ու զարգացման մասին գրագետ պատկերացումն է, որ զերծ կպահի դաստիարակվող երեխային ապագայում հոգեկան խնդիրներից ու խաթարումներից: Հեղինակը մատնանշում է դաստիարակության ու զարգացման դժվարությունների միջուկը կազմող արտանշանները՝ ընդգծելով մեծերի ճիշտ վերաբերմունքի կարևորությունը:

Հարուստ նյութ է պարունակում նաև գրքի «Զգացմունքների ձևավորումը և կան առանձնահատկությունները» բաժինը, որտեղ մատնանշվում են հուզազգացմունքային ու լուրտին առնչվող բոլոր այն հարցերի լուծումները, որոնք ուղեմիջ են դաստիարակի, ծնողի և երեխաների հետ աշխատող հոգեբանի համար: Իսկ «Երեխայի կամքի զարգացումն ու դաստիարակումը» բաժինը տալիս է նախադպրոցականի կամակորության ու քնահաճությունների հետ կապված բոլոր այն հարցերի պատասխանները:



որոնք համախ փակուղու մեջ են դնում ծնողներին ու դաստիարակներին: Իսկ երեխաների խառնվածքի և բնավորության ձևավորման ու զարգացման մասին պատկերացումները դյուրին կդարձնեն դաստիարակության ընթացքում անհատական մոտեցում ցուցաբերելու մանկավարժական աշխատանքը:

Այսօր մանկավարժական գործունեության ընթացքում ծագող դժվարությունները պայմանավորված են նաև երեխայի ընդունակությունների ձևավորման մասին աղճատված կամ թյուր կարծիքի առկայությամբ: Եվ այստեղ է, որ շրջանցվում է գնահատականների բարոյական և իրավական կողմը: Գրքում հստակ ներկայացվում է ոչ միայն ընդունակությունների զարգացման դիմամիկում, այլև բոլոր այն պայմանները, որոնցով ապահովվում է երեխայի հավանությունների մակարդակի և ընդունակությունների ներդաշնակ զարգացումը:

«Փիլիսոփայուն են» երեխաները խորագիրը կրող բաժինն ընթերցողին հասիտակում է: Դա նախադպրոցական տարիքի երեխաների յուրատեսակ մոլորակն է՝ ուշագրավ հարցադրումներով «Ինչուիկ»-ներով ու հետաքրքրաշարժ պատմություններով, որոնք իսկապես երեխաների «փիլիսոփայությունն» են: Երեխայի «փիլիսոփայությունները» Արկարի Թովմասյանի մանկավարժական երկար տարիների ու անձնական փորձի արդյունքում հավաքագրված նյութեր են, որոնք հոգեբանամանկավարժական կենդանի այն նյութ են, որ կրկին ամբողջացնում են նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական և հուզազգացմունքային ոլորտի մասին պատկերացումները:

Ամտարակույս, հեղինակը կատարել է շնորհակալ աշխատանք, որովհետև հետխորհրդային շրջանում մենք գրեթե չունենք նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակությանն առնչվող գիտամեթոդական ձեռնարկներ ու գրքեր: Գիրքը մեթոդական ու մանկավարժահոգեբանական մեծ օգնություն է ծնողների, դաստիարակների, մանկավարժների և հոգեբանների համար, քանի որ դպրոցին երեխայի նախապատրաստվածությունը որոշվում է ոչ միայն գիտելիքների քանակով, գրելու, կարդալու և խնդիրներ լուծելու կարողությամբ, այլև անհատական, մասնավորապես հոգեկան որակների զարգացմամբ:

Լուսինե ՂԱՐԱՆԱՆՅԱՆ
ԿԳՆ մանկագիտական կրթության եւ գիտության բաժնի գլխավոր մասնագետ, հ. գ. թ.

ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ - 500

ԳԻՐԱ ՄԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՂ

Այս տարի նշվում է հայ գրատպության 500-ամյակը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ երևանը հայտարարվել է գրքի համաշխարհային մայրաքաղաք: Արշավի մեկնարկը տրվել է Վենետիկից, որտեղ Հակոբ Մեղապարտը տպագրել է հայերեն առաջին գիրքը: Հունվարին այստեղ բացվել էր մեծ ցուցահանդես՝ «Հայաստան՝ քաղաքակրթության դրոշմներ» վերտառությամբ:

Արցախում գրատպության հոբելյանին նվիրված միջոցառումները սկսվել են անցած տարվանից՝ Հայաստանի տպագրիչների միության և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության միջև կնքված համաձայնագրով, որի շրջանակներում Հայաստանի առաջնակարգ տպարաններն իրենց հրատարակած գեղարվեստական, մասնագիտական գրքերն ու դասագրքերը ներկայացրել են Ստեփանակերտում ու շրջաններում, որը շարունակական կլինի:

Տոնի կապակցությամբ օրերս իր հերթական բովանդակալից միջոցառումը կազմակերպեց Ստեփանակերտի Մուրացյանի անվան քաղաքային գրադարանը: Անտեսելով ուժեղ սառնամանիքը՝ գրքի սիրահար մայրաքաղաքի մի խումբ մտավորականներ ու սովորողներ գրադարանի տնօրինության հրավերով իրենց երեկոն անցկացրին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի փոքր դահլիճում՝ մեծարելու հայ գրատպության երախտավոր Հակոբ Մեղապարտին, նրա գյուտի արժանիք՝ քաղաքակրթության կռված գիրքն ու առհասարակ տպագիր խոսքը, ինչպես նաև ահագնազելու հոգևոր արժեքներից ամենամեծը՝ համարվող՝ նույն այդ գրքից օրեցօր հեռանալու իրողության մասին:

Երեկոն ներածական խոսքով բացեց գրադարանի տնօրեն Մարիա Խաչատրյանը: Նախքան բուն միջոցառման անցնելը՝ ներկայացրեց դիտեցիան՝ փոքրիկ ֆիլմ հայ գրատպության երախտավորներ Հակոբ Մեղապարտի և Մխիթար Մեբաստացու մասին: Երեկոն վարող՝ գրադարանի հավատարիմ բարեկամ, երիտասարդ ընթերցող Անետա Համբարձումյանը կամառուտ ներկայացրեց գրատպության պատմությունը Հակոբ Մեղապարտից մինչև նախահեղափոխական շրջան:

1512թ. Հ. Մեղապարտը, հետևելով գերմանացի արհեստավոր 23

Յոհան Գուտենբերգի գյուտին, ազգերի մեջ առաջիններից մեկը գիրք տպագրեց: «Ուրբաքաղաքի» էր կոչվում հայերեն առաջին գիրքը: Մեղապարտը տպագրեց հինգ գիրք, որոնք բոլորն էլ այսօր պահպանվում են: Իրավամբ, նրան դասում են Մեծն Մաշտոցի և Սահակ Պարթևի շարքը: Ճիշտ է, հայերը մինչև տպագրության գյուտը գրքեր ստեղծում էին հայոց այս կամ այն ծագում (դրանք ձեռագիր գրքերն էին), սակայն մեծ տարածում ստացան տպագրության շնորհիվ: Տպագրական գործի պատվանդանին մեծ եվրոպացիների կողքին հայը ևս իր արժանավոր տեղը գրավեց:

Մեղապարտից հետո տպագրության գործով զբաղվել են շատ տպագրիչներ: 1666-1668թթ. Ոսկան Երևանցին տպագրեց հայերեն առաջին Աստվածաշունչը: Նա հրատարակեց շուրջ 40 անուն հայերեն գրքեր:

Պոլիգրաֆիան կարճ ժամանակում թռչեց՝ գրքեր տպագրելու: Գուտենբերգի պարզ գրամեքենան իր տեղը զիջում է արագատիպ բարդ մեքենային: Հնարում են լինոտիպը,

տպագրական այլ մեքենաներ: Հենց այդ դարում էլ ծաղկեց հայ տպագրությունը աշխարհի խոշոր քաղաքներում՝ Վենետիկում, Վիեննայում, ինչպես նաև Թիֆլիսում (Ներսես Աշտարակեցի), Էջմիածնում (Գևորգ 4-րդ կաթողիկոս) և այլուր: Հայտնի գրատպիչ էր Կոնստանդնուպոլսում Պողոս Սարապյանը, որը տպագրել է Թուրքիայում առաջին հայերեն լրագիրը՝ «Լրագիր Սեծի տերութեան Օսմանեան»: Հովհաննես Մյունենդլայանը՝ Հ. Պարոնյանի «Ազգային ջոջեր»-ից մեկը, հիմնադրել էր տպարան Թուրքիայում, և նրան անվա-



նում էին թուրքերի Գուտենբերգ:

Չի կարելի անտեսել Մխիթարյան միաբանության ավանդը թե՛ Վիեննայում և թե՛ Սբ. Դավար կղզում: Իր մեծուհուն էր Մխիթարյանների տպարանն առաջինը էր և ամենրայկիցը: Այստեղ է տպագրվել հայ տպագրության փառքն ու պարծանքը՝ «Նոր բառգիրք Հայկազեան բառարանի» գիրքը:

Հիշատակության արժանի է Թիֆլիսի տպագրական գործը, որն առաջինը սկսեց կաթողիկոս Ներսես Աշտարակեցիին: 1824թ. նա բացեց և Ներսիսյան դպրոցը, և տպարանը: Այստեղ է տպագրվել կովկասահայոց առաջին լրագիրը՝ «Կովկասը»:

Թիֆլիսում գործել են նաև ուրիշ տպարաններ, որտեղ տպագրվել են «Կուռնկ», «Մշակ», «Հայոց աշխարհ», «Գարուն» և այլ թերթեր:

Հայ գրքի տպագրությունը սկզբնավորվելով օտար ավերում, Էջմիածին հասավ 1771թ., իսկ Շուշի՝ 1828թ.: Այստեղ առաջինը տպագրական գործը սկսել են գերմանական միսիոներները: Մեսրոպյան առաջին գիրքը Շուշիում «Պատմություն սուրբ գրոց»-ն էր: Շուշիից բողոքականների հեռանալուց հետո տպարանական գործն իր ձեռքն առավ Դավաթաղի թեմի առաջնորդ Բաղդասար Մխուրդլիսը: 1884թ. Շուշիում բացվեց մի նոր՝ Միգրաչյան Մահուեսի Հակոբյանի տպարանը: Իր գոյության 25 տարիների ընթացքում այստեղ հրատարակվեցին գեղարվեստական գրքեր, թերթեր, դպրոցական ձեռնարկներ: Ուշագրավն այն է, որ Շուշիում այդ տարիներին տպագրվում էին ոչ միայն հոգևոր գրքեր, այլև հայ և համաշխարհային դասականների գործեր: Բաֆֆու «Խենթը», Բայրոնի «Շիլլոնի կալանավորը», Պուշկինի, Գոգոլի, Ֆիրդուսու,

Լեոնի, Ս. Աբեյյանի ստեղծագործությունները: 1905-1920 թթ. Շուշիում գործել են Բագրատ Տեր-Սահակյանի և Մելքոն Բաբաջանյանի տպարանները: Նախախորհրդային տարիներին Շուշիում գործել է 5 տպարան, տպագրվել 171 անուն գիրք: Այդ տարիներից սկսած՝ լույս տեսան նաև 21 անուն թերթեր ու ամսագրեր, որոնց դերն ու նշանակությունը դժվար է գերազանհատել հայ հասարակական մտքի, լեզվի, գրականության ու արվեստի զարգացման բնագավառում:

Հետխորհրդային շրջանում տպարան բացվեց Ստեփանակերտում: «Պոլիգրաֆ» ձեռնարկության նախկին տնօրեն և նրա երկարամյա աշխատակից Հրաչյա Ավանեսյանի տեղեկությամբ՝ Ստեփանակերտում տպարան գործել է 1923 թվականից: Այն տեղակայված էր ներկայիս սպորտկոմիտեի շենքում, գործագործական ֆաբրիկայի հարևանությամբ: Սկզբնական շրջանում աշխատում էր 20 հոգի: Տպարանը ստեղծվել էր, որպեսզի լույս տեսնի «Սովետական Դարաբաղ» թերթը՝ շաբաթական մեկ անգամ: Այն ժամանակ լինոտիպ, տպագրական մեքենաներ չկային, աշխատանքները կատարվում էին ձեռքով: 1956թ. կառուցվեց տվյալ ժամանակի համար արդիական սարքավորումներով տպարան (ներկայիս «Պոլիգրաֆ» շենքը): Աշխատողների թվաքանակը հասավ 86-ի: Հիմնական մասը թերթի վրա աշխատողներն էին, որոնցից հետագայում չորսը դարձան ԽՍՀՄ վաստակավոր պոլիգրաֆիստներ: Հիշենք նրանց. Լևոն Գասպարյան, Վոլոդյա Չաբարյան, Արկադի Աբրահամյան, Հենրիխ Մխիթարյան: Նրանց շնորհիվ ԽՍՀՄ փոխանցիկ դրոշմ տարիներ շարունակ գտնվում էր «Պոլիգրաֆ»-ում: Թերթի տպաքանակն աստիճանաբար ավելացավ, իսկ Դարաբաղյան շարժման ժամանակ հասավ մինչև 110 հազարի: Հ. Ավանեսյանը հետաքրքիր հուշեր պատմեց այդ շրջանում, հատկապես Պոլյանիչկո-Սաֆոնովիչի մայի օրոք, թերթի լրագրողների հետ մեկտեղ, տպարանի աշխատողների գործունեության մասին՝ սխրագործություն անվանելով այն: Նա գրադարանին նվիրեց այդ տարիներին իրենց հրատարակած, այդ թվում և՛ գաղտնի, գրքեր:

Հաջորդ ելույթներում մտահոգություն կար գրքի և ընթերցանության նկատմամբ ներկա սերնդի նվազող հետաքրքրության առթիվ:

ԼՂՀ գրողների միության նախագահ Կարոն Հակոբյանը ցավ հայտնեց, որ մեր բազմաթիվ գրադարաններ կամ կողպեքի տակ են, չեն գործում, կամ էլ անմխիթար վիճակում են: Այնինչ՝ հայ իրականության մեջ գիրքը միշտ եղել է ոգուն գործընթաց տվող ուժ: 88-ին Վերածննդի հրապարակում ժողովուրդը դարձել էր անունընդ. այդ ոգին է նրան ռազմի դաշտ տարել և հարթանակ պարգևել: «Եվ Աստված չանի, ոգին այդ հանկարծ լքի մեզ: Մենք մեր հողի վրա անգամ ուժեղ զենքով պարտություն կկրենք, եթե այդ ոգին բացակայի», - ասաց նա: Իսկ գիրքը հենց ինքը ոգին է: Գիրք չընթերցող մարդուն որքան էլ բացատրեն գրքի էությունը մասին, դատարկ զբաղմունք կլինի, կարծում է գրողը: Դժբախտաբար, այսօր մեր իրականության մեջ քիչ չեն մնամները և նրանք թվում՝ ցավոք, նաև իշխանավորներ: Վ. Հակոբյանը չի հակադրում սովորական և համացանցային, էլեկտրոնային գրքերը՝ համարելով, որ այդ գարգացումը կարելի է համեմատել տպագիր և ձեռագիր գրքերի հետ: Ճիշտ է, տպագիր գրքից ստացած հաճույքը չես կա-

րող համեմատել համակարգչայինի հետ, բայց փույթ չէ, միայն թե կարդան:

Գրող, լրագրող Եվադր Ավագյանը, ով եղել է «Ազատ Արցախ» թերթի երկարամյա աշխատող, անդրադարձ կատարեց թերթի գործունեությանը Արցախյան շարժման ժամանակ՝ տեղեկացնելով, որ գրել է «Կենսապատում» գիրքը: Այն շուտով կիրատարակվի: Նրա Ելույթի մեխը դարձյալ գրքից ընթերցողների հեռանալու մասին էր: Նա այսօր թիվ 1 հարցն է համարում դա՝ մտահոգվելով, թե գալիք սերունդն ինչ բարոյականության կրող պետք է լինի, երբ գիրք չի ընթերցում: Չէ՞ որ հոգևոր նյութի պաշարով ոչինչ այնքան բարոյականությամբ չի ներծծված, որքան՝ գիրքը: Հայրենական մեծ պատերազմում զոհվածների պատվին «Ինչպես էր կոփվում պողպատը» գիրքն էր, որը սերունդներ է դաստիարակել: Մեր ազատամարտում մեր կռվող տղաներին մի՞թե չի դաստիարակել Նժդեհի ուսմունքը, հայրենիքի համար մեռնելու պատրաստ բարոյականությունը: «Հիմա ես մտածում եմ՝ էսպես գնալով, գրքից օտարվելով, մեր գալիք սերունդներն ի՞նչ բարոյականության կրող պետք է լինեն՝ եսակենտրոնությամբ», - բարձրաձայնում է գրողը: Այսօր շուկան հեղեղված է ոչինչ չասող, թույլ գրքերով, բայց մի՞թե լավ գրքեր չեն ստեղծվում: Պետք է մտածել՝ ինչ անել, որ լավ գիրքն անպայման ընթերցողին հասնի: Եվ դրա համար ինչ-որ բան պետք է ձեռնարկել, որպեսզի և՛ մամուլի, և՛ գրքի մասին ոչ միայն պաթետիկ տոնով փառաբանենք տոն օրվա կապակցությամբ, այլև ի գործն գիրքը նորից թագավորի հայոց հոգու մեջ, - այս ասելով՝ նա լավատեսորեն է տրամադրված, որ այս փուլն էլ կանցնի: Եվ այս լավատեսության հիմքը միջոցառմանն արտասանող դպրոցականներն էին, որոնք երեկոյի գարդն էին: Շնորհակալություն այն ուսուցիչներին, ովքեր նրանց սովորեցրել են այդքան ճիշտ և գեղեցիկ արտասանել:

Բանաստեղծ Սոկրատ Խանյանի գնահատմամբ, Մեղապարտը թերտ տվեց մեր գրքերին: Գիրք ունենալը հարստություն է, հենց այդպիսին է ինքը, որի հարստությունից օգտվում է երիտասարդ սերունդը, և ինքը բարձր կարծիքի է նրա մասին: Նա կարդաց Հ. Մեղապարտին նվիրած իր նոր բանաստեղծությունը:

Երեկոյին մեծ լիցք հաղորդեցին ԱրՊՀ դասախոս Սիրուն Բաղդասարյանի ասումները ու երգը:

ԼՂՀ վաստակավոր մանկավարժ, թռչակառու ուսուցիչ Նաիրա Թամարյանը կիսեց մյուսների տազնապար գրքից հեռանալու առնչությամբ: Մեր գոյության ամենամեծ կռվաններից մեկը եղել է գիրքը: Ուսուցչուհին իր քառամասնյա գործունեության ընթացքում դա է քարոզել իր աշակերտներին: Եվ դրա արդյունքը նրանք ցույց են տվել Արցախյան պատերազմում:

Գրավոր խոսքի արժեքի գիտակցումը գալիս է դարերի խորքից: Անգամ մեր գրիչներն են ասել. «Ձեռք գնա, դառնա ի հող, գիրք մնա հիշատակող»: Իսկ միջնադարի մեր հանճարեղ բանաստեղծ Նարեկացին գրել է, որ եթե որպես մահկանացու մահանա, «Մատյանի» հարակալությամբ կմնա անմեռ:

Հավատում ենք մեր ժողովրդի ողջախոհությանը, քանզի պատմում ունենք՝ «Գիր սիրել, դալամ սիրել, դավթար սիրել»:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10 Ս. Խորենացու «Աշխարհագրությունը», «Տաղաբանը»:

1685թ. վերսկսվում է տպագրությունը Ամստերդամում: Թովմաս Վանանդեցին 1695թ. հրատարակեց «Համատարած աշխարհացույց» քարտեզը, իսկ հաջորդ տարի քարտեզի բացատրությունը՝ «Բանալին»: Դա նուրբ ու ճաշակով պատրաստած մի հոյակապ գործ էր. պղնձե տախտակների վրա փորագրված մեծ քարտեզ էր՝ առաջին հայերեն մեծ քարտեզը: Թովմաս Վարդապետ Նուրիջանյանի (Թ. Վանանդեցու բարեկամը) ջանքերով տպագրվում է Ս. Խորենացու

«Պատմությունը»: Այն հայ ժողովրդին եվրոպացիներին ներկայացնելու բացառիկ գործ էր: Գիրքը՝ որպես հետազոտությունների արքյուր, գրավեց եվրոպայի շատ գիտնականների ուշադրությունը: Հայ հասարակական, գիտական, լուսավորչական մտքի զարգացման գործում ակնառու դեր խաղացին Մխիթար Մեբաստացին և նրա ջանքերով ստեղծված միաբանությունը Սուրբ Դավար կղզում: Միաբանությունը ձեռնարկել էր նաև բեղմնավոր տպագրական, հրատարակչական գործ: Միաբանության տպարանում տպագրվել են բազմաթիվ գրքեր՝ կրոնական և հասարակական կյան-

քի տարբեր բնագավառների վերաբերող բառարաններ, քերականության գրքեր: Միաբանությունը ձեռնարկել էր նաև ձեռագրերի ձեռքբերման և պահպանման դժվարին աշխատանքը: Մխիթարյան միաբանների հրատարակությունների մեջ նշանավոր էր նաև Չամչյանի «Հայոց պատմություն» երեք հատորյակը: 18-րդ դարի երկրորդ կեսից մեր գրականությունը մտնում է մի շրջան, որ իրավամբ կարելի է անվանել «Մխիթարյան դար»: Միայն 18-րդ դարում այստեղ հրատարակվեց շուրջ 100 անուն գիրք: Իսկ «Բազմավեպը», որ տպագրվում է մինչև օրս, ամենաերկարակյաց

պարբերականն է: 18-րդ դարում բոլոր այն վայրերում, որտեղ կային հայկական գաղթաբաղներ, բուն կերպով զարգանում էր գիտությունը, մշակույթը, կրթությունը, ինչպես նաև գրատպությունը: Առավել բեղմնավոր էին գործում Հնդկաստանի Մադրաս, Կալկաթա քաղաքների, Պոլսի, Չմյունխայի, Թիֆլիսի, Պետերբուրգի և այլ գաղթաբաղների տպարանները, որտեղ տպագրվում էին տասնյակ անուն պարբերականներ, որոնք լայն կերպով արտադրում էին հայկական գաղթաբաղների հասարակական-քաղաքական կյանքը: Եվ միայն 1771թ. Սիմեոն Երևանցին եջ-

միածնում հիմնեց Հայաստանի առաջին տպարանը, իսկ 5 տարի անց կառուցվեց Էջմիածնի թղթի գործարանը: Հայկական տպագրական գործն ավելի զարգացում ապրեց 19-րդ և 20-րդ դարերում: Բավական է նշել, որ 19-րդ դարի առաջին կեսում հրատարակվող 30 անուն թերթերի ու ամսագրերի թիվը հասավ 246-ի: Բայց այդ մասին ավելի մանրամասն տեղեկությունների կարելի է հանդիպել պատմության և այլ դասագրքերում: Ինչպես երևում է վերը նշվածից, հայ տպագրական գործն անցել է դժվարին, բայց պատվավոր ուղի:

Լեւոն ԱՍՊԵՆՏՆ

ՄԱՅՐԵՆԻ ԲԱՐՔԱՈ

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՎԱՅԵՐԵՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երեխայի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը մայրենի լեզվին տիրապետելն է: Եթե մայրենի լեզվի տիրապետման որոշակի մակարդակ ձեռք չբերվի մինչև 5-6 տարեկան դառնալը, ապա այդ ուղին հնարավոր չի լինի հաջողությամբ անցնել տարիքային ավելի ուշ փուլերում: ԼՂՀ պետական լեզուն հայերենն է, պաշտոնական լեզուն՝ գրական հայերենը: Կրթական համակարգում դասավանդման և դաստիարակության լեզվի՝ գրական հայերենի գործածության պահանջի կատարման նպատակով վերջին տարիներին Արցախում տարբեր միջոցառումներով արժևորվում և փառաբանվում է պետականորեն ամրագրված մեր մայրենին: Արցախի բոլոր մանկապարտեզներում ուսուցումն ու դաստիարակությունը պետք է պարտադիր իրականացվի գրական հայերենով: Դաստիարակների ուշադրության կենտրոնում պիտի պահվի մայրենիի անադարտության հարցը: Նրանք պետք է աճող սերնդի մեջ էլ ավելի ամրապնդեն սերը մայրենի լեզվի նկատմամբ, արմատավորեն նրանց մեջ գիտելիքները մայրենի լեզվից և հրաբորբ պահեն նրանց սրտերում մայրենիի անմար կարգը: Որքան լավ ու խոր ուսումնասիրեն մայրենի լեզուն, այնքան դյուրին ու մատչելի կլինի նրանց համար. ավելի կքաղցրանա, ավելի հեշտ կհաղորդակցվեն միմյանց հետ, և արդյունքում կգարգանան նրանց ինքնուրույն մտածողությունը, հոգևոր աշխարհն ու կարգային մտածելակերպը: Մայրենին կարիք ունի յուրաքանչյուրի ամենօրյա հոգածության: Դրանում, անկասկած, մեծ է դաստիարակների և ուսուցիչների դերը: Յուրաքանչյուր նախադրոցական տարիքի երեխա ունի անասունական կարողություններ, նրա մանկական գիտակցությունը և ունակությունը թույլ են տալիս արագ ընկալել շրջապատի մարդկանց, հատկապես ծնողների կողմից օգտագործվող բաներն ու արտահայտությունները: Ուստի նախադրոցական հաստատությունների աշխատողների, մասնագետների, ինչպես նաև ծնողների ուշադրությունը իրավիճակում ենք այս կարևոր հարցին: Դաստիարակության հետ մեկտեղ ծնողները պետք է երեխային ջերմությամբ սովորեցնեն խոսել մաքուր հայերենով, այն մայրենիով, որ պատգամել են մեզ մեր մասնիները՝ որպես սրբազան մատուց: Մայրն առաջին բաներն արտասանողն է, մայրենիի ուսուցման առաջին ուսուցիչը: Նա զգույշ պետք է լինի մայրենի լեզվի գործածման հարցում: Փոքր տարիքի երեխաները սովորում են նախ ծնողներից, հետո դաստիարակի, ուսուցչի և մարդկանց հետ շփման փորձի արդյունքում: Այդ շփումը պետք է համապատասխանի երեխայի զարգացման ունակություններին և միաժամանակ խթանի երեխայի հետաքրքրություններն ու ընկալումը: Լեզվի աստիճանական զարգացումը երեխաներին հնարավորություն է տալիս ընկալել առավել վերացական կամ խորհրդանշական ինֆորմացիա: Երկու տարեկաններն արագ լեզու են սովորում, նրանց հարկավոր են պարզ գրքեր, նկարներ, հանելուկ-պատկերներ և խոսելու ու պարզ պատմություններ լսելու հնարավորություն: Պետք է նաև բավարարել այն երեխաների կարիքները, որոնք դրսևորում են սովորական զարգացման շրջանակից դուրս արտասովոր հետաքրքրություններ ու հմտություններ: Շատ կարևոր է երեխայի կյանքի ամեն մի օրը լավագույն ձևով կազմակերպելը: Դաստիարակներն անհատական շատ զրույցներ են վարում երեխաների հետ: Նրանք համբերությամբ նկարագրում և զգաց-

րությունների հաղթահարմանը, հաղորդակցական հմտությունների զարգացմանը: Լեզվական խաղերը լրացնում են լեզվական վարժությունների համակարգը: Որպես խաղային միջոց՝ դրանք ունեն սրամիտ ու զվարճալի բնույթ և հնարավորություն են տալիս գրավել երեխաների ուշադրությունը: Խաղերի ճիշտ օգտագործմամբ հնարավոր է հասնել պարապմունքի արդյունավետության բարձրացման: Լեզվական դիդակտիկ խաղերի միջոցով ոչ միայն կարելի է նպաստել երեխաների գիտելիքների ամրապնդմանը, այլև նրանց նոր գիտելիքներ հաղորդել: Լեզվական խաղեր կազմակերպելիս լուրջ դեր պետք է հատկացնել նաև խաղի ընթացքում թույլ տված սխալների վերլուծությանն ու մեկնաբանմանը՝ ինչպես կատարած սխալի էությունը, այնպես էլ խաղի մեջ թույլ տրվելիք նոր սխալները կանխելու նպատակով: Խոսքային հաղորդակցումը հնարավորություն է ստեղծում վերացնել երեխաների լարվածությունը, ինքնամոփոփածությունը, վախի զգացումը: Հաճելի է, երբ երեխան գրական հայերենով է պատասխանում մի շարք հարցադրումների. հասցեն լրիվությամբ, կենսագրություն, տեղեկություններ ընտանիքի անդամների, շրջակա բուսական և կենդանական աշխարհի մասին, առանձնացնում ընտանի և վայրի կենդանիները, մրգերն ու բանջարեղենը: Երեխայի խոսքի զարգացման գործում մեծահասակի դերը հսկայական է: Այն համարվում է երեխայի կողմից շրջապատող աշխարհի ճանաչման աղբյուր և օրինակ է ծառայում քերականական ընդհանրացումների ու ճիշտ խոսքի ձևավորման առումով: Խոսքի զարգացման միջոց են համարվում կյանքը, բնությունը, շրջապատը, մանկական ստեղծագործությունները, պատմվածքները, առարկաները, հեքիաթները: Այդ բոլորը նպաստում են մայրենի լեզվի գրագետ մտածեցմանը, խոսքի պատշաճ յուրացմանը: Ցավոք, այսօր հաճախակի ենք հանդիպում մայրենի լեզվի աղավաղումների ու խաթարումների, ներխուժած օտարաբան բառերի, որոնց կողքով անարժանազան անցնել՝ անհնարին է: Մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալների ապահովումն անհրաժեշտ է, բայց արքայական մեր լեզվին խառնել կիսառուսերենը, բարբառում օգտագործվող որոշ օտար բառեր մտահոգություն են առաջ բերում: Լեզվական այդպիսի թերությունների վերացման գործում մեծ անելիքներ ունեն մայրենի լեզվի անադարտության հարցով զբաղվող համապատասխան մարմինները: Պակաս աշխատանքներ չեն կատարվում և ճիշտ-սխալ, աշխատասեր-ուսուցիչներն ուսումնասիրում են այն գործող մեթոդներն ու սկզբունքները, որոնք առկա են խոսքի զարգացման, գրաճանաչության բարդ ու պատասխանատու աշխատանքը կազմակերպելու համար: Դրանք ապահովում են դպրոցի առջև դրված կարևոր խնդիրներից կարևորագույնի՝ բանավոր խոսքի զարգացման հիմքեր, ձևավորում գեղեցիկ և ճիշտ խոսք կառուցելու կարողությունը, նպաստում կրթության համակարգում դաստիարակության և դասավանդման լեզվի՝ գրական հայերենի գործածության պահանջի կատարմանը:

Կարինե ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԿՐԸ ԿԱԻ ԼՂՀ
մասնաճյուղի նախադպրոցական կրթության մասնագետ

ԱՐՃԱՆՏԻՆ ԲԱՌԱՍՏԵՂՑ

Դարերի ընթացքում Արցախի բարբառի բառապաշարը հարստացել է ինչպես փոխառյալ, այնպես էլ արցախցու ստեղծած բառերով: Ներկայացնում ենք նախ արցախցու ստեղծած բառերն ու բառակապակցությունները: Դրանք ձևով, հնչյունական կազմով տարբերվում են և՛ փոխառություններից, և՛ գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից հայերենի բառերից: Դրանք են.

- ԱԽՏԱ -1.Կորիզահան հոն, սալոր: 2.Ամուլ տղամարդ:
- ԱԾԻ - 1..Մայրիկ: 2.Չամուռնացած, տանը մնացած աղջիկ: 3.Կանանց դիմելու կոչական բառ:
- ԱՆԱԽԱԹՈՒՆ - Խխունջ
- ԱՆԸՍԸ - Բուրբուխ, ամենկին:
- ԱՌԵՆ - Չեռքին, մտղ:
- ԱՌԵՍ - Չեռքիս, մտս:
- ԱՌԵՏ - Չեռքիդ, մտդ:
- ԱՌՆԸ - Թռռան թռռը, ծոռոռի:
- ԱՌՈՒ -1.Չենց: 2.Բուրբուխ, լրիվ: 3.Ի հեճուկս, ջգրու:
- ԱՍԿԵՔ - Դարբնի երկար ունելի, որով բռնում են շիկացած երկաթը:
- ԱՎՐԱՂ - Փտած, անպետք:
- ԱՍԱԿ - Դժոխք:
- ԱՐԱ -1.Տղամարդուն դիմելու կոչական բառ: 2.Առնչություն, հարաբերություն: 3.Տրամադրություն:
- ԱՐԱԿԸ ՓՈՆԵԼ - Տրամադրության բարձր պահը որսալ:
- ԱՐԱԿՈՒՄԸ ԻՆԻԼ - Տրամադրված լինել:
- ԱՐՄԱԿ - Չարմանք:
- ԱՐՑ - 1.Գուլպայի գործվածքի սկիզբը: 2.Չամբյուղի, կողովի բուրբուխ ամուր հյուսվածքը:
- ԲԻՉԼԻԳՅ - Սրածայր:
- ԳՈԳՈԼ - Գուլթ:
- ԳՈԴԱԼ - 1.Կարճահասակ: 2.Պղչատ:
- ԳՅՈՒՓՈՒԼ - Մեծ մուրճ:
- ԴՈԻ - Կիսապի լոբի, սիսեռ և այլն:
- ԵՇՆԸ - Բորբոս:
- ԵՇՆԻԼ - Բորբոսներ:
- ՉԱԽՈՒՍ - Արտաքնոց, զուգարան:
- ՉՈՒՉԻ - Փողային գործիքին նվագակցող:
- ԷԼՀԱ - Դարձյալ, նորից, կրկին:
- ԸԺՄԱԺԵՆՅՅ - Իրիկնաղեն:
- ԸԼՈՒՆԵՅԳ - Թարախապալար:
- ԸՄԲՈ - Չարմանքի բացականչություն:
- ԸՆԴԵՏԱՆԸ - Դրանից հետո, այնուհետև:
- ԸՆԴԵՏԱՆԸՍ - Այսուհետև, սրանից հետո:
- ԸՈՒՅՈՒՆԻ - Իրականում, արթմնի:
- ԸՈՒՈՒ - Անտեր, բուրբուն մատչելի:
- ԸՍԿԻ - Ամենկին, բուրբուխ:
- ԸՐԸՎԱԶՈՒՆԵ - Մայրամուտ:
- ԸՐԶԵԿԱՊ - Հնձվորի, դարբնի կաշվե գոգնոց:
- ԹՇԱԾԱԿ - 1.Սրնգի վերին մեծ ծակը: 2.Հրացանի մետաղյա պտուկը, որի վրա ամրացվում է հրապատիճը և որի ծակով կապսուլից առաջացած կայծը հաղորդվում է հրացանի լիցքին:
- ԹՈՒՈՒՇ - Էշը կանգնեցնելու ձայնարկություն:
- ԺԱԽՈ - Մուխխտ:
- ԺԺԺ - 1.Խակ: 2.Տիաս: 3.Չիասած, չիասունացած:
- ԻՉԵՆ - Նա ինքը:
- ԻՉԵՍ - Սա, այս:
- ԻՉԵՏ - Դա, այդ:
- ԻԼ - 1.Եղի: 2.Հեռացիր:
- ԻՄԱԿ - Հասկացողություն:
- ԼԱՓՈՒ - Ալիք, կոհակ:
- ԼԱՓՈՒԵ - Կիսած մրգի մասերից մեկը:
- ԼԵՍ - 1.Ծոռոռների լրծաթաղանթ, որ պատում է առամների արմատները բերանի անդամների և նրա բուն խոռոչի կողմից: 2.(խիլք) Որև բանի առամների հիմքին ազդեցվող պատյան:
- ԼԵՄՈՒՅԳ - Առամները թափված:
- ԼՈԼԱԿ - 1.Ուղի խողովակաձև ոսկորը: 2.Օրորոցի մեջ դրվող փայտե խողովակ, որով երեխայի մեզը թափվում է օրորոցի տակ ամրացված միզամանր:
- ԼՈՒՆ - Ամենը, ամենքը, բոլորը, ամբողջը:
- ԼՈՒՆԵՆԻՔ - Ամենքը, բոլորը:
- ԼՈԿ - Լորտու:
- ԼՈՔ ՏԱԼ - Ցատկել:
- ԼՔՉԱՆ - Չրալի, սայթաքում ցեխ:
- ԽԱՍԻԼ - Խոտի ճիլից, եղեգնից կամ արմավենու տերևներից հյուսվածք՝ հողե հատակին փռելու համար:
- ԽԵԼՔ - 1.Մաղի, խախալի, թըրուկի, դափնի շրջանակ: 2.Օրորոցի, ֆուրգոնի վրայով անցնող ծածկույթի կամարած ձողերը:
- ԽՉՈՒՉՈՒՆ - 1.Արտը հնձելուց հետո մնացած ցողունները, բույսերի չոր ցողունները: 2.Ճարպի չիլված մասը:
- ԽՆԴՈՒՈՒՉԻ ՏԱԼ - Անփորձ քուռակը հեծվորին վայր գցելու համար հետևի մասը թափով բարձրացնել:
- ԽՆՉԱՂԱ - Չնճաղիկ:
- ԽԻԵԻՇ - 1.Հեշտ կոտրվող ընկույզ: 2.Հաճախ արյունոտվող քիթ:
- ԽԻԽՁԻ - 1.Ստահակ, անհնազանդ: 2.Խաղի մեջ խարդախություն:
- ԽԵԼԴ - Արխալուդ:
- ԽԵԼԼՈԿ - Աղամախնձոր:
- ԽԵԼԼՈԿ ՉՕՆԵ - Անգաղտնապահ է:
- ԽՇԸՊՏՈԿ - Փոքրիկ թարախակալած բշտիկ:
- ԽՈՒՄԱ - Երեխա:
- ԽՈՐԱ - Ինքնին աճած կուլտուրական բույս:
- ԽՈՐԹՆԸ - Հնձած, կապած խորձ:
- ԽՏՈՒՐՈՒ - 1.Անպետք: 2.Հիմար: 3.Աննպատակ, իզուր:
- ԽՏԵՅ - Քիչ:
- ԽՏԸՓՈՒՄ - Հարբուխ:
- ԽՏԸՉՈՒԿ - Փոքր վարունգ, դրում և այլն ծաղիկը դեռ վրա:
- ԽՏԼ - 1.Ոստ: 2.Ուռուցքի պալար:
- ԽՏԸՈՒՄ - Գանգուլ(մազ):
- ԽՏԸՎԱՅ - Բավականություն, գոհունակություն, արտահայտող բացականչություն:

(Շարունակելի)

Գուրգեն ԲԱՂԱՍԱՐՅԱՆ
Արցախի պետական արտաստեղծարարի պրոֆեսոր

ՈՍՏԱՆ

ԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐԿԻ ԵՐԳՈ (Ակնարկ)

Նոր Ղարաչինար գյուղը գտնվում է Շահունյանի շրջանի հյուսիս-սային կողմում, Վարդենիս տանող ճանապարհի վրա՝ անտառածածկ սարերի գրկում: Բնությունը կախարհող է. առողջարար լեռնային օդը, բնական աղբյուրների սառնորակ ու վճիտ ջուրը, շրջապատի խեղճացնող ծառ ու ծաղկունքը, ուղղաձիգ լանջերն ի վեր բարձրացող անտառն իր զարմանահրաշ բնակիչներով բավական են, որ մարդն իրեն զգա բնության զավակն ու տերը:

Գյուղի միջով հոսում է մի լեռնային ոչ այնքան ջրառատ գետ, որն իր մեծ շատ գետերի պես գարնանը դառնում է հորդառատ, աղմկոտ ու մի քիչ էլ վտանգավոր, քանի որ նրա հունը լի է արմատախիլ արված հսկա ծառերով, մեծ ու փոքր քարերով: Ամռանն այնքան էլ ջրառատ չի լինում, բայց չի դադարում նրա ուրախ քչջրոցը, մանավանդ գիշերվա լռության մեջ:

Գիշերային խաղաղության մեջ, երբ աստղազարդ երկնքում լիալուսինն է իր գբոսանքն անում, անտառապատ ծորակում լսվում է նրա գրույցն իր քրքրված ափերի հետ: Ով գիտի ուր է թողել իր ակունքը, որ լեռան տակ կամ որ աղբյուրի գանգակ ջրերին պահ տվել: Ճիշտ այնպես, ինչպես նոր Ղարաչինարցիները: Նա էլ անպառ գրույցի աղբյուր է, քանի որ լեռնային գետի պես ինքն էլ հոսելով, հասել է այս անտառապատ ծորը, ծվարել, իր ակունքն ու անցած ճանապարհը, օրրանից դուրս ապրած օրերն ու տարիները սրտում անթելելով դարձել շատախոս, խճճվել հիշողությունների գրկում:

Մի քանի տարի առաջ, երբ շունչ ու հոգի էին ստանում Շահունյանի գյուղերը, երբ Ռոբերտ Այդինյանի ջանքերով շունչ ու հոգի ստացավ հերթական գյուղը և անվանվեց Նոր Ղարաչինար, դաժան ոտիսից մազապուրծ նախկին Ղարաչինարցիներ եկան և շենացրին ու սկսեցին ապրել: Վատ տարիներ էին, ոչ լույս կար, ոչ նորմալ ճանապարհ, ոչ խանութ: Հավաքվեցին և գյուղը շենացրին նաև Հայաստանից եկած բնակիչներ: Գյուղն սկսեց կանաց-կանաց կայանալ՝ անկախ առաջացած դժվարություններից:

- Է՛հ, բա մեր Ղարաչինարում այսպե՛ս էր: Ճիշտ է, տեղանքը մի քիչ նման է, բայց նա ուրիշ էր,- ավտոտանքով, ծայրին կարոտակեզ ետնազ տալով՝ ասում է հին Ղարաչինարցի Գրաչիկ Ազարյանը, որ գյուղի տարեց մարդն էր, ազատամարտիկ:

- Ի՞նչն է այստեղ պակաս,- ասում է վերջերս Նոր Ղարաչինար եկած Սուրեն պապը՝ մոտ նստելով նրան:

- Ամեն մարդու ծննդավայրն իր համար ուրիշ է, ու ինչքան էլ լավ տեղ ապրի, էլի նրան չի հասնի: Հիշողությունից չի կարող ջնջել սրբություն դարձած մասունքները,- ասում է Գրաչիկ Ազարյանը:

- Ճիշտ ես ասում, Գրաչիկ, մեր պապերն իզուր չէին կռվում ու հենց իրենց շենին նահատակվում: Հիմա ի՞նչ կարող ես անել,- խորհմաստ ասում է Սուրեն պապը: Նրա ծնողներն էլ Մեծ եղեռնից մազապուրծ, հասել էին Հայաստան:

- Ոչ մի բան չեն կարող անել, բայց այ, այստեղ մի բան անընդհատ ծակում է,- ծեռքը ծախ կողմը՝ սրտին դնելով, ասում է հին Ղարաչինարցի:

- Հլա մի քիչ պատմիր հին Ղարաչինարի մասին,- ասում է Սուրեն

պապը:

Հրաչիկը լռում է երկար, ապա դեմքը խոժոռում, ասես ծեռք տվին չսպիացող վերքին, որ ուզում էր իր մեջ խորն անթելել, միայն ինքը դրանով զբաղվել: Նա ուզում էր սեփական հուշերը թանկ պահել, բայց ահա ուրիշն ուզում էր իր հետ կիսել: Նա դանդաղորեն մի ծխախոտ դրեց բերանը, վառեց և դառը ծուխն ազահորեն ներս քաշեց: Մի քանի անգամ այդպես ներս քաշեց, և հայտնի չէ ինչ ապրումներ ունեցավ այդ պա-



պապը: Գլուխը բարձրացրեց, անթառ ճայեց գրուցակցին, խոր շունչ քաշեց:

- Հին Ղարաչինարի մասին պատմելիս,- ասում է Գրաչիկը,- պիտի աչքերս փակեմ, ակնքներս՝ նույնպես, որ ոչ մի ծայն ինձ չընդհատի ու չխանգարի, ինձ պատկերացնեմ մեր նախկին տանը, չինարի ծառի տակ նստած, երզը շուրթերիս, մայրիկիս տաք, շոյող ծեռքը գլխիս: Հինարի ծառին անթված-անհամար նախշուն հավքերը ծվվում են ու թռչկոտում, գյուղի եղնիկ աղջիկները օրոր-շորոր ջրի են գնում: Հին Ղարաչինարի մասին խոսելիս մարդ պետք է պողպատից լինի, որ դիմանա այն բոլոր կորցումները, որ պատերազմը խլեց ու հավերժ թաղեց:

Նա աչքերը փակ խոսում էր ինքն իր հետ ու չէր նկատում, որ գրուցակցի ունի: Ընկել էր քաղցր ցավի մեջ: Նա էլ լեռնային գետի մեծ ասես հոսում էր ու կարկաչում, քրքրում իր ափերը, խոսում իր ակունքի, անցած ճանապարհի, երկաթ-երկար ճանապարհի, քարքարոտ հունի աջ ու ձախ ափերի հետ, ափերից սկսվող ու սարն ի վեր բարձրացող անտառի ու նրա վայրի բնակիչների հետ, անամպ ու ջինջ երկնքի հետ: Ու հանկարծ սթափվելով՝ նկատում է Սուրեն պապին, ներողամիտ ժպտում, ապա սրտի անհուն կարոտով ասում.

- Անտառում մի չինարի ծառ եմ տեսել, երիտասարդ ծառ: Գարնանը դու էլ կօգնես, կհանենք արմատներով, կբերենք դպրոցի բակում ազատամարտուն գոհված էրիկ Խաչատրյանի հուշակոթողի մոտ կտնկենք: Թող սոսափի հերոսի գլխավերևում ու մեղմիկ գրուցի նրա անմահ հոգու հետ:- Նա մտազբաղ նայում է հեռուն, ապա շրջվելով դեպի Սուրեն պապը, մեծ ոգևորությամբ ասում,- այ այդ ժամանակ Ղարաչինարը կդառնա իսկական Ղարաչինար: Թե՛ չէ, առանց չինարի ծառի ի՞նչ Ղարաչինար,- և ծանր հոգոց է հանում, ապա շարունակում,- միասին կբերենք, դա մի հոգու բան չէ:

Սուրեն պապը, որ առանց ընդհատելու լսում էր նրան, միաժամանակ հասկանում նրա ներքին ապրումներն ու կարոտախոսից տառապող հոգին, ասում է.

- Ես պատրաստ եմ քեզ օգնել: Երկուսով կկարողանա՞ք բերել, չվնասվեն արմատները, հետո էլ շատ ծանր չի՞ լինի:

- Կբերենք: Ես մենակ էլ կբերեմ, միայն երկուսով անտառ գնանք:

- Թող օրը գա, բարին հետը, կբերենք: Մենք միասին անտառ կգնանք, միասին էլ կբերենք,- ասում է Սուրեն պապը:

Հրաչիկը ծանր-ծանր բարձրանում է նստած տեղից, ապա նորից նստում, խորհրդավոր նայում գրու-

ցակցին ու ասում.

- Սուրեն պապ, քեզ Աստված է ուղարկել մեր գյուղը, դու լավ մարդ ես, ասում եմ՝ քեզ նման մարդիկ քիչ են լինում,- ու արագ-արագ հեռանում: Այդ կարճահասակ, բայց կոճղի նման ամուր մարդը հոգնել չունի, սակայն լինում են պահեր, երբ մնում է մենակ, ինքն իր հետ, նման պահերին նա կոտրվում է: Կոտրվում է մի անբուժելի ցավի առաջ, որ ախտորոշված է՝ «կարոտախոտ»:

Ղարաչինարցին կարոտում է իր թողած մասունքներին, որոնք կյանքում երբեք չեն կրկնվում, բայց մտնում է արյան մեջ ու արյան հետ է մեկ սրտից դուրս է հորդում, մեկ էլ կրկին վերադառնում դեպի սիրտը: Նա ամեն ինչ կտար, որ կրկին հայտնվեր իր տանը, Ղարաչինարի տանը, հարազատ մոր մոտ, նրա ջերմացնող ու անոթող ծայրը լսեր, նրա հոգատար ու տաք շունչն զգար իր վրա: Նայեր իր մանկության արասներին, փնտրեր այնտեղ ուրիշ ոտնահետքեր, ու սիրտը տրոփեր թաքնված երջանկությունից: Ղարաչինարցին կարոտում է Շահունյանի սարերի շնկչնկան օդին, պարզ ու անամպ երկնքին, բնության ազատ ու անկախ ճախրող բնակիչներին: Այդ, ծանր է ապրել մի հիվանդությանը, որի անունն անգամ չկա գրված ոչ մի դեղատոմսի վրա:

Կաղնու ամուր կոճղ է դարաչինարցի Գրաչիկ Ազարյանը: Նա Ազատամարտի ակտիվ մասնակից է ու երեք անգամ ճաշակել է մահը, երեք անգամ էլ նորից կյանք առել: Ու հիմա, երբ խոսք է բացվում Ազատամարտի ու նրա մասնակիցների մասին, նա միշտ իր մասին լռում է, սակայն ընկերների ու համագյուղացիների մասին պատմում է հիացմունքով ու երկար: Նա շա՛տ-շատ ծանր է ապրում Մոռվ սարի կորուստը:

- Հարստություն էր, է՛,- ասում էր Գրաչիկը ծանր հոգոցներով, ապա շարունակում,- ողջ երկրագնդում մի հատ էր: Ապրում էինք, է՛, ոչ մեկի առաջ գլուխ չէինք խոնարհում, ոչ մեկի մեքե ենթակա չէինք: Մոռվ մեզ պահում էր, ասում էին, որ մեր՝ հայերիս վաղեմի թշնամին չէր հանդուրժում այդպիսի և շատ ուրիշ բնական հարստություններ ու դրա համար էլ

անցավ արյունալի գործողությունների:

Կաղնու նման ամուր այդ մարդը՝ կարճահասակ, մորթե գլխարկով ու մորթե բաճկոնով, չէր թերանում ոչ մի աշխատանքում ու թե տեսներ որևէ մեկը թերանում է կամ դժգոհում, թե երեխաները կոշիկ չունեն, կամ տանը այրուր չկա, նա անզուսպ բարկանում էր ու շարտում.

- Գնա՛ գլուխդ քարովը տուր, երեսդ պատովը, երեխիդ կոշիկ հագցուր, էլ ի՞նչ հայր ես: Հայրը երբեք չի ասի՝ երեխան կոշիկ չունի, շոր չունի կամ ուտելու բան չկա: Բա դու ինչարած ես, ուրեմն հայր կոշվելու իրավունք չունես:

Հրաչիկը նաև լավ հայր էր: Նա անընդհատ մտածում էր իր տունուտեղը վերակազմի, մասնեցնի հին տունուտեղին: Երբեմնի հարուստ շեն տնից ոչինչ չէր մնացել: Ամեն ինչ թողել ու հեռացել էին, թողել պապերի վաղեմի թշնամիներին: Նա մեկ-մեկ բարձրաձայն արտահայտում էր հոգու դժգոհությունը. «Ա՛խ, պապերիս գերեզմանները մնացին...»: Նման պահերին բարձր թառանջ քաշելով, բռնցքը թափով իջեցնում էր սեղանին: Այդպիսի պահերին տնեցիները նրան չէին խանգարում, քանզի գիտեին, որ ողջ կորցրածը հառնում էր նրա աչքի առաջ, տանում իր օրրանը, իր ակունքը:

Լեռնային գետի մեծ շառաչում ու ինքն իր հետ խոսում էր Գրաչիկը: Աշխատանքում խեղդում էր կարոտախոտը, աշխատանքում էր գտնում հոգու հանգստությունն ու խաղաղությունը:

Ղարաչինար... Շահունյանի ծաղկած պուրակ...

Ո՛ւր մնացիր, ո՛վ է հիմա քո գովարար օդը շնչում, քո այգիները մշակում, դրախտային համ ունեցող մրգերը ճաշակում, անմահական ջուրը խմում, խիտ անտառներում որս անում: Ո՛վ կարող է իրենը դարձնել, տեր ու տիրական լինել: Երանգում կամ արթմնի, Հրաչիկը թևառած սավառնում է՝ մտքերի ոսկի մտույզը հեծած՝ իր Ղարաչինար գյուղի, իր ծննդավայրի դալարագեղ սարերում...

Գյուղի միջով հոսում է լեռնային ոչ այնքան ջրառատ, սակայն կարկաչափ ու մաքուր գետը: Հոսում է՝ իր հետ բերելով անցած-գնացած ու շահունյանցիների հոգուն անթելած անմոռանալի հեքիաթներ:

Քթի տակ դնդնալով հարազատ մեղեդիներ, հոգուն փայփայելով ապագայի հույսեր, Հրաչիկը շենացնում ու ծաղկեցնում է Նոր Ղարաչինարը, դողում նրա ամեն ծաղկի քար ու քիփ վրա: Նա անընդհատ հիշատակում է Ռոբերտ Այդինյանի անունը, շնորհակալ լինում, որ կրկին շենացրեց ու վերաբնակեցրեց իր Ղարաչինարը, հոգու խորքում զգում իր տանը, չնայած...

Գյուղապետ Հայկ Ջաքարյանը մի երիտասարդ, վայելչակազմ ու գեղեցիկ մարդ, նախկին՝ հին ու նոր շահունյանցի, նոր Ղարաչինարցի, հաճելի ժպիտը դեմքին, նայում է այսօրվա շահունյանցուն ու հպարտություն զգում: Նա զգում է, որ ոչ մի շահունյանցի և ընդհանրապես, տեղահանված ոչ մի հայ չի կորչի, քանի որ ունի ուժեղ ու անկոտորում կամք՝ հայի կամք:

Իսկ գյուղի միջով հոսող գետն իր երգն է երգում՝ ակունքի ու ճանապարհի երգը...

Հրանուշ ՄԱՍՐԻՅԱՆ
Նոր Ղարաչինարի դպրոցի
նաուցչուհի

Շնորհավորանք

ԻՐ ԳՈՐԾԻՆ ՆՎԻՐՎԱԾ

Ազգանվեր և սուրբ առաքելություն է լավ մանկավարժ լինելը. առանց այդպիսի առաքյալների անհնար է տոնել մատաղ սերնդի լիարժեք կրթության ու համակողմանի դաստիարակության ազգապահպան գործի հաղթանակը:

Եվ խիստ բնութագրական է մեր հարգարժան տնօրեն ու սիրելի գործընկեր Լյուդմիլա Հայրապետյանի համար այս դիպուկ դատո-



ղությունը՝ ուսուցիչ չեն դառնում, ծնվում են...

Վկրումով աշխատող, իր մասնագիտությանն ու դպրոցին սիրահարված այս բարեհամբույր ուսուցիչ-տնօրենը վերջերս բուրեց իր կյանքի 50-րդ գարունը:

Վկրվածությունն ու անսպառ սեր դեպի իր սաները, հարգանք ու կարգապահություն, խստապահանջություն ու օրինակալություն, հոգատար վերաբերմունք կոլեկտիվի անդամների ու դպրոցի նկատմամբ. ահա նրա էության ճշգրիտ արտացոլանքը...

Որպես տնօրեն՝ Լ. Հայրապետյանը լավ է տիրապետում դպրոցավարությանը, վստահված գործի նկատմամբ ունի պատասխանատվության մեծ զգացում: Նա մարդկանց հետ աշխատելու յուրօրինակ հմտություն ունի. իր գեղեցիկ խոսքով, բարձր կուլտուրայով նրան հաջողվել է դպրոցում ստեղծել մանկավարժական ու աշակերտական համերաշխ կոլեկտիվներ:

Նրբագեղ, համեստ, լավատես, կարգապահ ու մարդասեր-մարդամոտ այս տիկնոջ կերպարը չի ամբողջանա, եթե չհավելվեն նրա պատմելու արվեստը, նուրբ հումորը և առարկային տիրապետելու բացառիկ ձիրքը: Թվերի մոզական աշխարհը նրա տարերքն է. նա ուրակվում է որպես մաթեմատիկա առարկայի խոր գիտակ: Չոր ու ցամաք որակվող այս առարկան նրա դասավանդմամբ դառնում է հյուսիս, գրավիչ ու ձգող...

Եվ սիրում է հաճախակի հաստատել Գաուսի «Մաթեմատիկան գիտությունների թագուհին է» թևավոր միտքը: Նրան հաջողվում է առարկայի նկատմամբ իր այդ սիրով վարակել նաև իր սաներին, տանել նրանց մաթեմատիկայի բարդ ու հետաքրքիր աշխարհը: Ահա թե ինչու նա արժանանում է ամենաբարձր գնահատականին՝ իր սաների սիրուն ու հարգանքին...

Մեզ մնում է միայն ասել.

- Սիրելի՛ տնօրեն, շնորհավոր 50-ամյակդ, քեզ երջանկություն, բարեկեցիկ կյանք, անսպառ, եռանդ, ամուր առողջություն, և թող 50 գարուններիդ գունավորի և 50-ը:

Ի խորոց սրտի՝ Կադարծու միջև. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԼՐԱՑՈՒՑԻՉ

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՐԴԱ, ԻՄԱՑԻՐ

Պաշտոնակազմի շրջաններում (ու՝ ոչ միայն) այսօր հավասարապես գործածվում են «ընկեր» և «պարոն» բառերը: Որի՞նք տալ նախապատվությունը. կարծում եմ՝ ոչ ոք կոնկրետ պատասխանել չի կարող: Բանն այն է, որ մեր փոքրիկահույզ ժամանակներից շվարած՝ առանձին պատգամավորներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, անգամ՝ հասարակ շինականներ «պարոնը» համարում են օտարոտի, «ընկեր»-ն էլ՝ իր դերը, անելիքն ավարտած բառ: Ու բոլորը մի տեսակ փնտրտուքի մեջ են: Վարանում են, տատանվում, չգիտեն՝ որն է ճիշտը, հարմարը. «ընկեր Մարկոսյանը», թե՛ «պարոն Սանթրոնյանը», «դեպուտատը», թե՛ «պատգամավորը»: Ի դեպ, ավելի քան մեկ դար առաջ արևելահայերն օգտագործում էին «ծայնավոր» բառը, այսինքն՝ պառլամենտում ծայն ունեցող: Հիշեցնենք, որ «պարոնի» և «ընկերի» կողքին մեկ-մեկ հայտնվում է նաև «տիարը», որը շատերի համոզմամբ հնացած է և այլևս առաջվա բոլորը, առաջվա գույնը չունի: Ինչևէ:

Բոլոր դեպքերում միշտ պիտի հիշել, որ բառերն էլ իրենց կենսագրությունն ունեն:

«Ընկերը» հայերենի բնիկ բառերից է և նշանակում է՝ բարեկամ, մտերիմ, գործակից: Ինչպես Հրաչյա Աճառյանն է հավաստում, ընկերը կազմված է ընդ(ո) նախորդից ու կեր արմատից և նախնական իմաստով նշանակել է միասին ուտող, հացակից, ճաշակից: Այդ բառն ավելի քան երկու հազար տարեկան է: Մ.թ.ա. առաջին դարում Հայաստան հասած հռոմեացի գորականները միմյանց անվանում էին կոմսակահո, որ նշանակում է՝ միասին ճաշող: Հայերը փոխ չառան այդ օտար բա-

ռը, թարգմանեցին այն և ստեղծեցին նույնիմաստ, սեփական բառը՝ ընկեր: Մտերիմ, բարեկամ, գործակից իմաստով ընկերը իրաշալի է կատարում իր դերը, և չեն կասկածում, որ գալիք հարյուրամյակներում ու հազարամյակներում էլ այն կմնա մեր ուսանիկ լեզվի ընտիր բառերից մեկը: Բայց ահա, գրեթե հարյուր տարի առաջ ընկեր բառի ուսերին դրվեց մի նոր պարտականություն, այն դարձավ նաև հարգական մակերի: Այդ իմաստով ընկերն սկզբում կիրառեցին քաղաքական կուսակցությունները: Լույս կուսակցության անդամներն իրար անվանեցին ընկեր, որ նշանակում է՝ զաղափարակից, համախոհ, կողմնակից: Տվյալ կուսակցության անդամները միմյանց ընկեր էին կոչում, իսկ մյուս կուսակցությունների անդամներին՝ պարոն:

Ուստի կարելի է ասել, որ ընկեր բառը որպես հարգական մակերի, կուսակցական ծագում ունի: Խորհրդային իշխանության հաղթանակից հետո մեր երկրի բոլոր բնակիչների համար ընկերը դարձավ ընդհանրական հարգական բառ, բայց ամբողջովին չկորցրեց իր «կուսակցական դիմագիծը», արտասահմանի որոշ կուսակցությունների անդամների դիմում էին ընկեր բառով:

Ընկեր բառից ավելի տարեց է հայերենի մեկ ուրիշ բնիկ բառ՝ տյարը (տիարը), որը կազմված է տի (մեծ) և արը(մարդ) բառերից, այսինքն՝ մեծ այր: Հետագայում տիարը սեղմվել է և դարձել տեր, որ նշանակում է՝ մեծ, իշխան, ունեցվածքի տեր մարդ, տերտեր (մեր բարբառում՝ դեր), թագավոր աստված: Հավանաբար, տյարը (տիարը) կամ տերը հայերենի ամենահին հարգական կոչական բառն է, որով մեր հին-

րը դիմել են աստծուն (տեր աստված), թագավորին (տեր արքա), իշխանին կամ գորավարին (տեր Մամիկոնեցի), քահանային (տեր Կիրակոս) և այլն: Տյար (տեր) հարգական մակերից պահպանել է ընդհանրական դառնալու իր կենսունակությունը: Իգական սեռի ներկայացուցիչներին անվանել են տիրուհի: Տյարը հայերենի տոհմիկ բառերից է, որով կարելի է դիմել բարձր տարիքի արական սեռի բոլոր ներկայացուցիչներին: Եզակին՝ տյար, հոգնակին՝ տյարք: Իր կազմությամբ տյարի (տիարը) նման է տիկինը, որ բառացի նշանակում է մեծ կին՝ ամուսնացած կին, գերդաստանի ավագ կին: Տիկինը (հոգնակին՝ տիկնայք կամ տիկնաներ) հայերիս մեջ ընդհանրական է դարձել (առանց դասական խտրականության):

Կիլիկյան Հայաստանում է (11-14-րդ դարեր) ծնունդ առել նաև պարոն փոխառյալ բառը: Այն ֆրանսերեն բառն է, որն իշխանական պատվանուն է և նշանակում է՝ իշխան, մեծավոր: Արևմտահայերենի արտասանության օրինաչափություններով բառակազմի բ-ն հնչել է պ, և բարոն բառը դարձել է պարոն: Եվրոպայում այդ բառը մինչև այժմ էլ մնացել է որպես բարձրաստիճան անձանց տիտղոս, իսկ հայերիս մեջ 19-րդ դարից սկսած, դարձել է նաև հարգական մակերի, որը գրեթե նույն իմաստն ունի, ինչ տյարը:

1920-ից մինչև 1988 թվականը ամբողջ Խորհրդային Միության մեջ պարոնը դուրս մղվեց որպես «բուրժուական» հարգական մակերի (խեղճ Հ. Պարոնյան. եթե ողջ լինեք ու իմանար, որ իր ազգանվան արմատի հետ այդպիսի խաղ են խառնում, կբացակայեցեք. «Մեռելներ կան, որ նորեն պիտո է սպանանել»):

Ափյուռքահայությունը շարունակեց պահել ու գործածել պարոն բառը՝ որպես հարգական մակերի՝ առանց դասական խտրականության: Պարոն բառը «ձեռք չմեկնեց» իգական սեռի ներկայացուցիչներին, պարոնուհի չդարձավ, բայց փորձեց աղջիկ բառի օգնությամբ ծառայել կանանց (օրինակ՝ «աղջիկ պարոնը տա՞նն է»): Հովի. Թումանյան: Ոչ ոք իրավունք չունի հատուկ կոնդակով (որոշում չեն ասում, որովհետև մեր դարաշրջանը ողողվել է թիվ ու համար չունեցող, մարդկությանը չօգնող որոշումներով և քիչ է մնում այդ բառը կորցնի իր իմաստը) առաջնություն տալ և գործածության իրավունք շնորհել տյարին կամ պարոնին: Թող երկու բառերն էլ մրցեն և գծեն իրենց գործածության սահմանները: Ինչ-որ չափով տյարի և պարոնի «մրցակիցն» է քաղաքացի բառը, որ նշանակում է՝ քաղաքի բնակիչ, նաև՝ տվյալ պետության կամ երկրի բնակիչ (այս դեպքում նշանակություն չունի, թե նա որտեղ է ապրում՝ քաղաքում, թե գյուղում): Այս բառն ունի գործածության իր սեղմ շրջանակը (օրինակ, դատարանում դատավորին անվանում են ոչ թե ընկեր դատավոր, այլ՝ քաղաքացի դատավոր): Սահմանափակ շրջանակներում գործածվող հայերենի հարգական բառերից են վեհափառը (այսպես են դիմում կաթողիկոսին կամ հայրապետին), սրբազանը (եպիսկոպոսին) և այլն:

Հայերենի հնաբուն բառերից է օրիորդը: Որոշ ուսումնասիրողների կարծիքով, օրիորդ բառը կազմված է հետևյալ բաղադրամասերից. օրի (ուրիհի)+որդի=օրիորդ, այսինքն՝ աղջիկ զավակ: Միջնադարյան Հայաստանում օրիորդ՝ նշանակել է ազնվագարմ աղջիկ: Օրիորդ էին

անվանում արքայական կամ իշխանական ծագում ունեցող իգական սեռի ներկայացուցիչներին: Եթե 5-րդ դարում որևէ մեկը գյուղացու աղջկան օրիորդ անվաներ (թեկուզև նա չնաշխարհիկ արտաքին ունենար), ապա նրան կպատժեին որպես օրինազանցի: 19-րդ դարից դասական այդ խտրականությունը վերացավ, սկսեցին օրիորդ կոչել չանունացած բոլոր աղջիկներին: Այդ բառն, իհարկե, գերազանցություն ունի երիտասարդուհի բառի հանդեպ:

Նվագ կամ առավել չափով հարգական մակերիներ են պարման կամ պարմանի (հոգնակին՝ պարմաններ կամ պարմանիներ), պարմանուհի (հոգնակին՝ պարմանուհիներ):

Պարման նշանակում է արբունքի հասած երիտասարդ տղա, պարմանուհի՝ արբունքի հասած, դեռատի աղջիկ:

Հարգական մակերիներ են դուստր կամ դաստրիկ, տղեկ (հոգնակին՝ տղաներ): Ժողովրդական խոսքի մեջ կենսունակ են եղբայր և քույրիկ (երբեմն՝ քույր) կոչական բառերը, որոնց մեջ ոչ միայն ազգային ավիշ կա, այլև մտերմության (նաև՝ մտերմանալու) խորք: Բայց ահա Հայաստանում պատանիներից ոմանք իրար անվանում են ապերո, որը տիպարություն է պատճառում լսողին:

Հետևություն. Հարգական բառերի հանդեպ պետք է հարգական վերաբերմունք ունենալ:

Հավաքեց եւ կազմեց Միքայել ԲԱՆԱՆԸ Թոշակառու ուսուցիչ գ. Մեծ Թաղեր

ՄՏԱՆՈՒԳՎԱԾ ԵՔ՝ ԻՆՉ ԵՔ ՆՎԻՐՈՒՄ

Որքան ուրախալի իրադարձություններ կան մեր կյանքում՝ տոներ, ավանդական տարեթվեր, կյանքի ուղեգիր, մասնագետի դիպլոմ, հարսանիքներ ու ծնունդ, հոբելյաններ, բոլորը թվել հնարավոր չէ: Սովորել ենք մեր ուրախությունը բաժանել մտերիմների հետ և, հետևելով հիսնամյա սովորությանը, միմյանց նվերներ ենք տալիս: Պատահական չէ, երբ մեկն ասում է՝ ես ձեզ համար նվեր եմ պատրաստել, զգացում եք ապրում, ուրախանում եք, որովհետև զգում եք ինչ-որ մեկի ուշադրությունը ձեր նկատմամբ, ձեզ ուրախացնելու ցանկությունը: Նվերը միշտ անկաշառ է, այն սիրո, բարեկամության, բարի զգացումների արտահայտություն է և հաստատում է մարդկանց մտերմությունը: Երբ դուք նվերն ընտրում եք հենց այդպիսի համոզմունքներից էլ ենելով, դուք էլ եք դրանից հաճույք ստանում, իսկ եթե դա արել եք սոսկ ձևականորեն, ապա նվերն անտարբեր կթողնի և՛ ձեզ, և՛ նրան, ում համար նախատեսված է:

Նվերի օգտակարությունը չափազանց լայն հասկացություն է, քանի որ օգտակարության տակ չպետք է հասկանանք սոսկ առարկայի կիրառական օգտակարությունը: Օգտակար են և՛ ձեռնոցները, և՛ զավակը, և՛ նկարը, և՛ ծաղիկները, և՛ գինին, օգտակար են, որովհետև այդ առարկաներից յուրաքանչյուրը ծառայում է նպատակին, եթե նա իր տեսակի մեջ վատը չէ: Նվերի օգտակարությունն առանձնապես ակն-

հայտ է, երբ այն նախատեսվում է երեխայի համար:

Երբ թանկարժեք նվերը տրվում է մեկ մարդու կողմից, դա շատ է պարտավորեցնում: Բայց լինում է և այնպես, որ մի քանի մարդ միանում և համատեղ գնում են թանկարժեք նվեր՝ հեռուստացույց կամ սառնարան, փոշեծծիչ, գորգ կամ մեկ այլ գեղարվեստական գործ կամ թե չէ՝ տան կամ էլ մեքենայի բանալիներ: Այդպիսի կուլեկտիվ նվեր կարելի է տալ մտերիմ մարդկանց նոր բնակարան ստանալիս, հարսանիքին, հոբելյանական օրվա առթիվ և այլն:

Սակայն ընկերական հարաբերությունների դուստրման այս բնական ձևը երբեմն ընդունում է միանգամայն աղավաղված բնույթ: Պատկերացրեք հիմնարկի աշխատողները փող են հավաքում, որ թանկարժեք նվեր գնեն բարձրաստիճան պետի համար՝ նրա ծննդյան տոնի առթիվ կամ էլ նոր տարվա համար: Մինչդեռ այդ մարդը հարգանք չի վայելում իր ընկերների մոտ, նրան չեն սիրում, վախենում են, շատերը նույնիսկ հրաժարվում են մասնակցել, բայց վախենում են, որ դա որևէ կերպ ազդի իրենց ծառայության ճակատագրի վրա, իսկ մյուսները՝ հակառակը, ավելի մեծ հույսեր են կապում նվերի հետ՝ դեկավարությունը նրանց նկատմամբ ողորմած կլինի: Եվ ահա նվերի բարոյական իմաստը ավաղվում է ու անկաշառության և բարեկամության փոխարեն ձեռք է բերում երեսպաշտության ու հաճույակատարու-

թյան գծեր:

Շատ մարդիկ ունեն ստեղծագործական հատկություններ և ցանկության դեպքում կարող են իրենք ստեղծել հատուկ, ինքնատիպ նվեր ու ոչ թե փնտրել այն խանութում: Դա կարող է լինել բանաստեղծություն, նկար կամ պատկեր, երաժշտական պիես կամ երգ, կիրառական արվեստի որևէ առարկա, եզակի, ոչ մեկի կողմից չկրկնված, ուղղված միայն նրան, ում համար պատրաստված է:

Պատահական չէ, որ երեխան, դեռևս որևէ «հարստության տեք» չլինելով և չծանրաբեռնվելով այն մտքով, թե ինչպես կգնահատեն իր ուշադրությունը, թաքնվելով մեծերից, մոր ծննդյան օրվա առթիվ պատրաստում է իր անակնկալը: Նրա մտքով չի էլ անցնում, որ նվերը կարելի է գնել, նրա համար ավելի բնական է նվերը ստեղծել իր ձեռքերով, և մանկական այդ միամտության մեջ մեծ, չափահասի իմաստություն կա:

Ուստի նվեր ընտրելիս պետք է հատուկ նրբանկատություն դրսևորել, որ այն դուր գա և՛ քեզ, և՛ համապատասխանի ստացողի ճաշակին: Պետք է մտածել նաև մարդկանց տարիքի մասին: Հատուկ արժեք ունեն այն նվերները, որոնք մարդուն հարստացնում են հոգեպես, գարգացնում մեր անհատականությունը, ծառայում են էսթետիկական դաստիարակությանը: Այսպիսի նվերների մեջ ամենալավը գիրքն է, այն կարելի է նվիրել ցանկացած

մարդու և ամեն մի առիթով: Ի դեպ, գիրքը, ինչպես և ծաղիկները, ընդունված է ստանալ և որպես նվեր, առանց ինչ-որ առիթի: Ծաղիկներն ուրախացնում են բոլորին, և դա կախված չէ ոչ նրանց քանակից և ոչ էլ գնից: Ամեն մի ծաղիկ ունի իրեն յուրահատուկ հմայուք, ուստի դժվար է ասել, թե որն է ավելի գեղեցիկ՝ փարթևած խրիզանթեմներով լի զամբյուղը, երեք վա՞րդը՝ զավաթի մեջ, թե՞ դաշտային ուրախ երիցուկները: Դա ճաշակի հարց է: Թերևս, ամենար է գտնել այնքան անկաշառ նվեր, ինչպիսին ծաղիկներն են, և չնայած նրանց կյանքը շատ կարճ է, բայց ուրախացնում են մեզ, քանի դեռ թարմ են: Ծաղիկներ կարելի է նվիրել և՛ ամենահանդիսավոր դեպքերում, և ընտանեկան համեստ տոներին, և՛ պարզապես առանց որևէ առիթի բարեկամներին աջելելիս և այլն: Թե երբ պետք է ծաղիկների զամբյուղ ուղարկել, երբ հյուր գնալ մեծ ծաղկեփնջերով և երբ պետք է նվիրել հովտաշուշանի կամ միմուզայի մի փոքր փունջ, այդ մասին մեզ կհուշի ձեր սեփական տակտը:

Տարվա ամեն մի եղանակ իր ծաղիկներն է առաջարկում մեզ: Դեռ չորս կողմը ծյուն է, իսկ մեքք արդեն շտապում ենք ընկերների մոտ ձեռնաղիկների փնջով և ուռնու ճյուղերով: Ամենուրեք մեզ շրջապատում են ծաղիկները, ուստի դժվարություն չի ներկայացնում այսպիսի նվերներով մտերիմներին ուրախացնելը: Տարվա այս եղանակին մտքե ծաղիկի խանութները, այնտեղ

դուք նվերի համար կտեսնեք ծաղկանմաններում աճած գնարբուկ, ալպյան մանուշակ, հիացիմտ, մոխրախոտ, փշոտ կակտուսներ, որոնց յուրօրինակ դեկորատիվությունը հիանալի ներդաշնակում է ժամանակակից ինտերյերներին:

Ավարտվել են տոնական նախապատրաստությունները, սեղանը բացված է, դուք հագնվել եք և սպասում եք ձեր բարեկամներին: Հնչում է դռան զանգը, դուք դիմավորում եք հյուրին, համբույրներ, շնորհավորանքներ, և ձեր ձեռքումն է խորհրդավոր փաթեթը: Հետաքրքիր է իմանալ, թե ինչ կա նրա մեջ: Ոմանք գտնում են, թե պետք է փաթեթն անկատելիորեն մի կողմ դնել, և երբ հյուրերը ցրվեն, նոր միայն նայել, թե ինչ են նվիրել: Մյուսները, հակառակը, կարծում են, թե պետք է իսկույն նայել և իրենց վերաբերմունքը հայտնել այդ առթիվ: Ես վերջինի կողմնակից եմ, քանի որ նախապես համոզված եմ, որ հյուրը քիչ ժամանակ և ջանք չի գործադրել ձեզ ուրախություն պատճառելու համար: Ինչո՞ւ վիրավորել նրան ձեր անուշադրությամբ: Նա ուզում է շուտ տեսնել, անպայման նայել, թե իրեն ինչ եք նվիրել:

Ո. ՂԱՅՐԱՍՆԱՆՍԱՆ Գրող-բանահավաք, ԼՂՀ մշակույթի վաստակավոր գործիչ

ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՅԻ ԽՆԴԻՐԸ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայերը փիլիսոփայական հին մշակույթ ունեցող ժողովուրդներից են: Այդ են վկայում Մ. Մաշտոցի անվան մատենադարանում պահպանված փիլիսոփայական ձեռագրերը: Հայ իմաստասերները ճանաչում են ունեցել նաև իրենց երկրից դուրս: Օրինակ՝ Պարոյր Հայկազունը՝ 4-րդ դարում Հռոմի կայսրության մեջ, Դավիթ Անհաղթը՝ 5-6-րդ դարերում Հունաստանում և Անդրկովկասում, Լևոն Հայկազունը՝ 9-րդ դարում, իսկ Գրիգոր Մագիստրոսը՝ 11-րդ դարում, Բյուզանդական կայսրությունում: Մեր ժամանակներում՝ Վիկտոր Համբարձումյանը (հիշենք նրա «Տիեզերագիտության փիլիսոփայական խնդիրները» աշխատությունը), Ս. Ավետիսյանը («Տարածությունը և ժամանակը հարաբերականության տեսության լույսի ներքո») և այլոք: Անցած դարի 70-ական թվականներին ՀՀ-ում աշխատում էին գիտական կոչումներ ունեցող 200-ից ավելի փիլիսոփաներ, որոնք «ջանասիրաբար» պաշտպանում էին կոմունիստական գաղափարախոսության հիմքերը՝ պատմական և դիալեկտիկական մատերիալիզմը ամեն տեսակ «շեղումներից» ու այլ «իզմներից»:

Իմաստասիրությունը՝ որպես հասարակական գիտակցության ձև, ուսումնասիրում է ընդհանրականը, համընդհանուրը՝ բազմազան ու բազմաձև երևույթների: Պատկերավոր ասած, իմաստասիրությունը գիտություն է գիտությունների համար և մասին: Այն գիտական աշխարհայացքի վերնաշենքն է, ուստի պատահական չէ և ոչ էլ տարօրինակ, որ ականավոր գիտնականները հասուն տարիքում այս կամ այն կերպ անդրադարձել են իմաստասիրության խնդիրներին:

Անցել են դարեր, հազարամյակներ, առանձին գիտություններ հսկայական քայլեր են կատարել և կատարում, որոնց վրա հենվելով՝ զարգանում է նաև իմաստասիրությունը և՛ խորությամբ, և՛ լայնությամբ, առաջացել են բազմաթիվ վարդապետություններ, իրարամերժ ուղղություններ: Եվ բոլոր այդ իմաստասիրական տեսությունների պատմիտման կետ է հանդիսանում, այսպես կոչված, փիլիսոփայության հիմնական՝ գոյ-մատերիայի և գիտակցության փոխհարաբերության հարցը:

Խնդիրը, բնականաբար, քննվել է տվյալ դարաշրջանում մատերիայի և գիտակցության մասին ունեցած պատկերացումների հիման վրա:

Մատերիա՝ այսինքն այն ամենը, ինչ գոյություն ունի մեր գիտակցությունից անկախ և ազդում է կամ հատուկ սարքերի միջոցով կարող է ազդել մեր զգայարանների, հետևաբար և՛ գիտակցության վրա:

Բոլոր այն փիլիսոփաները, ովքեր առաջնային են համարում մատերիա-գոյը, իսկ գիտակցությունը՝ ածանցյալ, կազմում են մատերիալիստական ուղղությունը, հակառակ պնդողները՝ իդեալիստականը: Ահա այս երկու հիմնական հակադիր ուղղությունների պայքարով է ընթացել փիլիսոփայության զարգացումը, կրելով իր վրա ժամանակների կրոնական, քաղաքական, բնագիտական նվաճումների ազդեցությունը:

Մեր համոզմամբ, փիլիսոփայության հիմնական հարցի դրվածքը թեև իմացության զարգացման համար օգտակար է եղել, որպես հակադրություններ, կորցրել է իր իմաստը. այն խաթարում է բնության՝ մատերիայի տարբեր դրսևորումների միասնական ընկալումը: Փորձենք սույն ձևաչափի հնարավորության սահմաններում

հիմնավորել վերոհիշյալը և մանրամասնել տիեզերքի ժամանակակից ֆիզիկական պատկերի հիման վրա՝ մշտապես չմոռանալով, որ առայսօր պատկերացումները տիեզերքի վերաբերյալ ավարտուն չեն:

Բայց նախ անհրաժեշտ է հետադարձ հայացք ձգել ֆիզիկայի տարեզրույթանը, մատերիայի մասին պատկերացումների, գիտական հայացքների զարգացման պատմությանը, որը լուսաբանում է փիլիսոփայության հիմնական հարցի ծագման պատմական անխուսափելիությունը՝ որպես մատերիա-գոյի և գիտակցության մասին մեր մարդկային իմացության սահմանափակության արդյունք և իմացության զարգացման հիման վրա տալ հարցի ոչ թե դուալիստական, այլ մոնիստական կողմը, որով պետք է ընթանա դիալեկտիկական կատեգորիաների կուռ և ներդաշնակ համակարգը:

Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը բնագիտության մեջ ձևավորվել էր այն խորին համոզումը, որ բնության բոլոր երևույթները պետք է դիտարկել որպես մեխանիկական երևույթների դրսևորում, քանզի հայտնի էր մատերիայի գոյության մեկ ձև՝ նյութը: Այս մոտեցումը ֆիզիկայում անվանում ենք աշխարհի մեխանիկական պատկեր, որի կերտմանն անսահման պաստեց Ի. Նյուտոնի մեծ հեղինակությունը:

Նյութի կառուցվածքի մասին խնդիրը դրվել է դեռևս Հին աշխարհում՝ աշխարհաստեղծման խնդրի ն գուգահեռ: Ըստ Հերակլիտի (մ.թ.ա. 6-5-րդ դարեր), «Այս տիեզերքը նույնն է բոլոր գոյավորների համար, չի ստեղծել ոչ մի աստված. այն միշտ եղել է, կա և կլինի որպես հավերժ կենդանի կրակ, որը որոշակի չափերով բոցավառվում է ու որոշակի չափերով մաքրում»:

Հայտնի է, որ հին հունական փիլիսոփայությունը ծագեց ոչ որպես հատուկ փիլիսոփայական հետազոտությունների բնագավառ, այլ գիտական՝ մաթեմատիկական, բնագիտական գիտելիքների հետ քաղաքական հասկացությունների սողմների, ինչպես նաև դիցաբանության և արվեստի հետ անխազելի կապի մեջ: Սկսած մ.թ.ա. 3-րդ դարից, որոշ գիտություններ, ամենից առաջ՝ մաթեմատիկական և բժշկագիտությունը, առանձնանում են որպես հետազոտությունների հատուկ բնագավառներ: Մի փոքր ավելի ուշ՝ 5-րդ դարի երկրորդ կեսին, ըստ Դիոգենես Լաերտացու վկայության. «Մոգերի գիտությունը հին Մարաստանից, այդ թվում՝ Հայաստանից տարածվում է Հունաստան, իսկ ըստ մոգերի՝ քրմերի ուսմունքի, մատերիան մանրագույն, տեսողության համար անմատչելի մասնիկներից է կազմված, այն ամենը, ինչ տեղի է ունենում, բացատրվում է դրանց, այսինքն՝ առումների միավորմամբ, բաժանմամբ ու շարժմամբ:

Բայց վերադառնանք մեզ համեմատաբար ավելի մոտ ժամանակներին:

Այսպիսով՝ մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը բնագիտությունը և փիլիսոփայությունը հայտնի էր մատերիայի միակ ձևը՝ նյութը:

19-րդ դարի երկրորդ կեսին, շնորհիվ Էռստեդի, Ֆարադեյի փորձարարական հետազոտությունների և Մաքսվելի տեսական աշխատանքների, ձևավորվեց աշխարհի էլեկտրամագնիսական պատկերը, համաձայն որի, գոյություն ունի մատերիայի երկու տեսակ՝ նյութը և դաշտը: Ըստ այդ պատկերացումների՝ էլեկտրա-

մագնիսական դաշտը չի կարող փոխակերպվել նյութի և հակառակը, բայց դարի վերջին Բեկկերեյը հայտնագործեց ռադիոակտիվության կամ, ինչպես այժմ ընդունված է ասել, ճառագայթակալիվության երևույթը, երբ նյութը ճառագայթում է էլեկտրամագնիսական դաշտ ու էլի բաճեր (ալֆա, բետա, գամմա ճառագայթներ):

Փիլիսոփայության տեսակետից տիեզերքի մեխանիկական և էլեկտրամագնիսական պատկերը բացառում է զարգացումը. եթե իրական աշխարհը լիներ այդպիսին, ապա այն փոփոխված չի եղել ոչ անցյալում և ոչ էլ կփոփոխվի ապագայում:

Բայց բնագիտական հետազոտությունները, հատկապես ֆիզիկայի բնագավառում, 20-րդ դարը մեզ տվեցին տիեզերքի, այսպես կոչված, ժամանակակից պատկերը, ըստ որի՝

1. Գոյություն ունեն փոխազդեցության 4 տեսակներ՝ գրավիտացիոն, էլեկտրամագնիսական, ուժեղ և թույլ, և նրանք այս կամ այն ձևով փոխազդում են նյութի հետ:
2. Դաշտի և նյութի միջև անանցանելի սահմաններ գոյություն չունեն:
3. Տարրական են համարվում քվարկները:
4. Նյութը, դաշտը, վակուումը, ժամանակը, տարածությունը ունեն քվանտային՝ «հատիկային» բնույթ:
5. Բնության ֆիզիկական օրենքները ունեն վիճակագրական բնույթ:

Այսպիսով, դետերմինիստական, լապլասյան աշխարհայացքը դուրս է մղվել ոչ միայն հասարակական օրինաչափությունների գնահատման ու կանխատեսման բնագավառից, այլև ֆիզիկայից:

Ինչ վերաբերում է չորս տիպի փոխազդեցություններին, ապա ի սկզբանե շատերի սրտով չէ, այն կարծես խաթարում է տիեզերքի միասնականության նկատմամբ մեր հավատը: Համաձայն ընդունված կարծիքի՝ տիեզերքն առաջացել է, այսպես կոչված, «մեծ պայթյունի» հետևանքով: Ենթադրվում է, որ սկզբում ամեն ինչ սեղմված էր, գերխիտ էր ու զբաղեցնում էր շատ փոքր ծավալ: Այն մասնիկները, որոնցից, ըստ գիտության տվյալների, կազմված է նյութը, դեռևս պետք է ձևավորվեին: Միայն 15 միլիարդ տարվա ընթացքում տիեզերքը դարձավ այնպիսին, ինչպիսին կա: Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ ատոմի միջուկը կազմված է նուկլոններից՝ նեյտրոններից ու պրոտոններից: Նուկլոններն իրենց հերթին կազմված են քվարկներից: Սակայն բաժանել նուկլոններն իրենց «բաղադրիչ» քվարկների, չի կարելի, որն էլ, սակայն, չի նշանակում, թե քվարկները «տարրական են»:

Մեր ժամանակներում հարցերն ավելի են շատացել, քան պատասխանները, մասնավորապես, ճի՞շտ է արդյոք, որ բնության մեջ գործող բոլոր ուժերն, ըստ էության, միևնույն ուժի տարբեր դրսևորում են: Ֆիզիկոսները փորձում են ամենատարբեր բնույթի ուժերը միավորել մի տեսությամբ մեջ: Այդ առումով կան որոշակի հաջողություններ: Ստեղծվել է «էլեկտրաթույլ տեսությունը», և այդ տեսության միավորումն ուժեղ փոխազդեցության տեսության հետ («ստանդարտ մոդել»)՝ «Հիգսի մեխանիզմ» անվամբ: Ֆիզիկոսները ենթադրում են, որ թույլ փոխազդեցության համաչափության խախտման Հիգսի մեխանիզմի հետազոտումը կարող է էականորեն փոխել տիեզերքի և

մատերիայի մասին մեր պատկերացումները:

Այսօր՝ ֆիզիկոսների, բնագետների, իմաստասերների ուշադրությունը և հետաքրքրությունը սևեռված է եվրոպական միջուկային հետազոտությունների կենտրոնում՝ CERN- կառուցված և գործող աշխարհի ամենահզոր արագարարի՝ մեծ հագրոնային կոլայդերի վրա, որը գիտության մեջ ինտեգրացիոն և համագործակցային մոտեցման եզակի օրինակ է: Մեծ կոլայդերի աշխատանքի առաջին արդյունքները հայտնի են՝ գրանցվել են, այսպես կոչված «W-բոզոն», բայց սպասելիքները շատ ավելի մեծ են. զուր չէ, որ այն անվանում են դարի գլխավոր գիտափորձ: Կհաստատվի՞, արդյոք, վերոհիշյալ տեսությունը, ի՞նչ ճշտումներ կմտցնի այն, թե՞ փորձնական այնպիսի հայտնագործություններ կկատարվեն, որոնք դեռ տեսականորեն կանխագուշակված կան հիմնավորված չեն:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում մարդկային գիտակցությունը ֆիզիկական մատերիայի, նյութի և նախանյութի գոյության կտրվածքում:

Ընդունելով գիտակցության գոյության օբյեկտիվ ռեալությունը, որը մատերիայի միակ հատկանիշն է, այն դնում ենք հակադրության մեջ մատերիայի հետ՝ գիտակցությունը համարելով մատերիայի զարգացած ձևի՝ ուղեղի հետադարձ կապերով օժտված ֆունկցիա, գործառույթ: Շատ իմաստասերներ այս խնդրի դրվածքի կնճռոտությունը փորձում են հաղթահարել՝ հայտարարելով, թե մատերիայի և գիտակցության հակադրությունը հարաբերական է, այն գոյություն ունի այնքանով, որքանով անհրաժեշտ է տալ իմացաբանական այն հարցի պատասխանը, թե ինչը պետք է ընդունել առաջնային և ինչը՝ երկրորդային:

Բանականությունը հատուկ է ոչ միայն մարդ տեսակին կամ մարդկային հասարակությանը՝ իր հասարակական գիտակցության դրսևորմամբ: Ընթերցողին հետաքրքիր կլինի իմանալ, որ դեռևս Տիգրան 2-րդի օրոք Հայաստան հրավիրված փիլիսոփա-պատմաբան Մետրոդորոս Սկեպսացին գրել է փիլիսոփայական մի երկ՝ կենդանիների բանականության մասին: Կենդանաբանների հետազոտությունները մեր օրերում էլ ավելի են մեզ համոզում դրանում:

Ամփոփելով շեշտենք՝ գիտակցությունը լինելով մատերիական՝ կազմում է տիեզերքի մասը, զարգանում է մատերիայի մյուս տեսակներին հատուկ զարգացման դիալեկտիկական օրենքներով և փոխազդելով է նրանց հետ: Վերջինիս համար մեզ հիմք են հանդիսանում բնագետների ուսումնասիրությունները հեռագագողության, հեռագաղեցության երևույթների բնագավառում:

Ժամանակի առումով գիտակցության և մատերիայի մյուս տեսակների առաջնայնության խնդիրը մետազալակտիկայի սահմաններում գիտական, կրոնական մտքի համար լինելով անկյունաքարային, այնուամենայնիվ, ակտուալ չէ, խնդիր է, որը լուծում չունի:

Սարգիս ԱՐԱՋԱՆՅԱՆ
Շուշիի Դ. Ղազարյանի անվան
դպրոցի փոխպնօրեն

ԶԱՆԱԶԱՆ

Ծնողների համար

ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԶԱՓԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Վնաս են, արդյոք, համակարգչային խաղերը: Այսօր նման խնդիր կա շատ ընտանիքներում, որտեղ երեխաներն, աշխարհում ամեն ինչի մասին մոռանալով, ժամերով նստում են համակարգչի առաջ և խաղում: Մի շարք հոգեբաններ այն կարծիքին են, որ այս հարցը չունի միանշանակ պատասխան, և ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչքան ժամանակ է երեխան անցկացնում համակարգչի առաջ և ինչ խաղեր է խաղում: Ըստ հոգեբանների, համակարգչային խաղերը կարող են նպաստել երեխայի մտավոր զարգացմանը, հաղորդակից դարձնել նրան նոր տեխնոլոգիաներին: 21-րդ դարի երեխան պետք է համակարգչի հետ «դու»-ով խոսի, սակայն չի կարելի թույլ տալ, որ համակարգչային խաղերը դառնան նրա կյանքի իմաստը: Պետք է, որ երեխան ապրի միայն վիրտուալ աշխարհում, քանի որ նրա անձը պիտի ձևավորվի այլ երեխաների և մեծահասակների հետ շփվելով: Երբ երեխան մերժում է իրական շփումը, իր ժամանակի մեծ մասն անցկացնելով մոնիտորի առջև, նրան կլանում է վիրտուալ աշխարհը, և նա սկսում է հեռանալ իրականությունից, կորցնում է իր կոմունիկատիվ կարողությունները, դժվարությամբ է ընկերանում այլ երեխաների հետ: Շատ կարևոր է, թե ինչ խաղեր է խաղում երեխան: Կան խաղեր, որոնք զարգացնում են տրամաբանությունը, վերլուծական միտքը, օգնում նրա ինտելեկտուալ զարգացմանը: Սակայն շփվելով համացանցով հետաքրքրվող երեխաների հետ, ավելի հաճախ տեսնում ենք մոնիտորների վրա ոչ թե ստրատեգիաներ կամ տրամաբանական խաղեր, այլ դաժան ու պարզունակ «կրակելու» տեսարաններ: Նման խաղերից կարող են ազդեցիկ վարք ստանալ: Տարածված համակարգչային խաղերում հիմնականում կրակում են, ջարդում, սպանում, վերացնում են ինչ-որ տարածքներ, մարդկանց: Այդպիսի խաղերը երեխային հեռացնում են իրականությունից, ջնջում հասարակական նորմերի, ճիշտ վարքի հասկացությունները: Շրջապա-

տը ձևավորում է երեխայի մտածելակերպն ու աշխարհայացքը, և եթե նրա «շրջապատը» դաժան խաղեր են, նա կարող է այդ խաղերում տեսած վարվելակերպի մոդելն իր հետ իրական կյանք բերել և փորձել այնտեղ կիրառել: Այսպիսի խաղերը չեն սովորեցնում երեխաներին տարբերել լավը վատից ու չեն հասցնում նրան այն գաղափարը, որ վատ արարքի համար պետք է պատասխանատու լինել և պատասխան տալ: Դաժան խաղերը երեխայի մոտ ստեղծում են անպատժելիության զգացում: Նա սկսում է սխալ ընկալել հասարակության կողմից իր արարքներին տրվող պատասխանները, քանի որ խաղերում նրա արարքներին ոչ մի պատասխան չի հաջորդում: Համակարգչի մոտ շատ ժամանակ անցկացնող երեխաների մոտ հաճախ է նկատվում անքնություն, և նրանք ունենում են մղձավանջային երազներ: Համակարգչային խաղեր խաղալիս մարդու մոտ լարվում է ամբողջ նյարդային համակարգը, նա չի հասցնում քնելուց առաջ լիցքաթափվել, ինչի հետևանքով ստացած տպավորությունները հաճախ վերածվում են սարսափելի երազների, երբեմն էլ առաջ են բերում անքնություն: Մեծահասակները նույնպես շատ ժամանակ են անցկացնում համակարգչային խաղեր խաղալով, սակայն նրանք արդեն ձևավորված անձնավորություն լինելով, կարողանում են տարբերել խաղն իրականությունից, և նրանց համար խաղն իրականությունից որոշ ժամանակ հեռանալու, հանգստանալու մի ձև է: Երեխաները, լինելով դեռ ձևավորման շրջանում, շատ ավելի «սրտին մոտ» են ընկալում խաղերը: Խաղը հաճախ դառնում է երեխայի ինքնահաստատման և ինքնադրսևորման հնարավորություն, և խաղի մեջ նա փնտրում է այն ամենը, ինչ իրական կյանքում չի կարողանում ստանալ այդպես հեշտությամբ: Խաղում երեխայի համար գրավիչ են հեշտ հաղթանակը, հեշտ լիդերություն-

ը: Խաղում ամեն ինչը խաղացողի ձեռքերում է, և սա շատ հրապուրիչ է երեխաների համար. չէ՞ որ խաղը մենախոսություն է, որտեղ ամեն ինչը քելադրում է իր կանոնները, իսկ իրական կյանքը միշտ երկխոսություն է, որտեղ պետք է հաշվի առնել ուրիշների կարծիքը: Ծնողները պետք է ուշադիր լինեն, թե ինչքան ժամանակ են իրենց երեխաներն անցկացնում համակարգչի մոտ և ինչ խաղեր են խաղում, քանի որ նույնիսկ ինտելեկտուալ խաղերը չպիտի դառնան երեխայի միակ ընկերը և փոխարինեն իրական շփմանը: Շատերին հուզում է այն հարցը, թե ինչ անել, ինչպես վարվել, եթե երեխան, ամեն ինչի մասին մոռանալով, ամբողջ օրը համակարգչային խաղեր է խաղում: Նման դեպքերում պետք է ոչ թե արգելել նրան խաղալ, այլ նրա համար ավելի հետաքրքիր զբաղմունք գտնել: Ցանկալի է, որ ծնողներն ավելի շատ ժամանակ տրամադրեն իրենց երեխաներին, գտնեն նրանց համար հետաքրքիր այլ զբաղմունք, ապահովեն նրանց շփումը թե՛ հասակակիցների, թե՛ մեծահասակների հետ, հետաքրքրեն երեխային սպորտով: Որպես կանոն՝ սպորտով զբաղվող երեխաները լինում են ավելի առողջ, առույգ, հեշտ են ընկերանում ուրիշ երեխաների հետ և հարմարվում դժվար պայմաններին: Նրանք լինում են ավելի ինքնուրույն և պատասխանատու, և իրական աշխարհը նրանց համար դառնում է ոչ պակաս հրապուրիչ, քան վիրտուալ աշխարհը: Սպորտում անպայման չէ, որ երեխան լավ մարզիկ կամ սպորտի վարպետ դառնա, սպորտում զարգանում է բնավորությունը, կամքի ուժը, իսկ դա անհրաժեշտ է ցանկացած երեխայի: Այս ամենը և համակարգչի չափավոր օգտագործումը կապահովի երեխայի ներդաշնակ և համակողմանի զարգացումը:

Լենա ԱՎԱԳՅԱՆ
ԿԱԻ ԳԱՐՐԱԿԱՆԻ ՄԱՆԱԳԵՄ

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ

Գյուղը՝ խերխան, թիկունքում՝ լեռը Ծմաբար: Գլխավերևում լոկ տունն է Աստծո՝ աստղոտ երկնքով: Անզուգական նման դիրքը խերխանցիների հարստությունն է: Բայց առավել շատ՝ նրա անկողողպտելի հպարտությունը...
...Երբեմնի շեն գյուղն այսօր մեզ ներկայանում է փոքր-ինչ ուժասպառ: Ահա ինչու նորածին թե ճիչն է ինչու՞ն՝ ցնծում են գյուղովի, իսկ թե մեկը կյանքին հրաժեշտ է տալիս, սուզը դառնում է համատարած:
Այդ օրն արդեն Ամանորի շունչն էր թրթռում յուրաքանչյուր հարկի տակ: Գուցե թե առավել շատ Մավրիկ որդին էր պատրաստուքի մեջ: Մտադիր էր ոչ միայն Ամանորը մշել, այլև՝ իր կողմից սրբացված Քնար մայրիկի 90-ամյակը:




Բայց... եղավ անսպասելին: Միայն այս անգամ մայրը չկարվեց որդու սիրտն ուզածի պես: Նա մարեց, հանգչեց մոմի նման՝ անաղմուկ, հանգիստ ու խաղաղ...

Գյուղում բոքը տարածվեց ակնթարթորեն: Վախճանվել էր ոչ միայն մայրը, այլև գյուղի ավագագույն ուսուցչուհին... Ու գյուղովի միաբանվեցին, հենակվեցին...
Քնարիկ Մակիչի Մարտիրոսյանը ծնվել է 1922թ. դեկտեմբերի 7-ին, Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի յոթնամյա դպրոցում, ապա ուսումը շարունակել Շուշի քաղաքում: 1946-ին, ավարտելով Շուշիի մանկավարժական տեխնիկումը, որպես դասվար՝ նախ աշխատանքի է անցել Ծովատեղի յոթնամյա դպրոցում, իսկ 1948-ին ամուսնանալով, մանկավարժական գործունեությունը շարունակել խերխանում:

Ավելի քան չորս տասնամյակ Ք. Մարտիրոսյանն իրեն նվիրաբերել է մատաղ սերնդի կրթության և դաստիարակության սուրբ գործին: Նրան մշտապես բնորոշ էին արտակարգ հոգատարությունը, անսահման սերն ու հարգանքը սաների, շրջապատի հանդեպ:
Ընկեր Մարտիրոսյանը միաժամանակ սիրող մայր էր: Նա ծնել և դաստիարակել է 6 զավակ՝ 3 աղջիկ, 3 տղա:
Քնար Մարտիրոսյանի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում:

Խերխանի հիմն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԾԱՂԿԱԾ ԶՄԵՐ



Լուսանկարները՝ Զ. ԸՆԹՈՅԱՆԻ

ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻ

Դու լեզուն ես մեր նախնյաց,
Մեր առիճնոց մայրենի,
Դու մեր բերկրանք, դու մեր լաց,
Մեր հին ու նոր մայրենի:

Երբ Վարդանը քեզանով
Ձինվորներին է դիմել,
Ազատության փափագով՝
Քեզ արյունով են փրկել:

Մերք գոչել ես բանդիռով,

Մերք տավիղն է օրորել,
Մերք քյամանջին Սայաթի
Սիրո արբունք ես դարձել:

Մեր սրբասուրբ մայրենի,
Դու պատվար ես ու բարձունք,
Մեր փառապանօ աշխարհի՝
Դու անաղարտ սուրբ մասունք:

Տոնյա ՕՅՆԵԱՆ
Սյունի. թիվ 3 միջն. դպրոցի ուսուցչուհի

ՎՈՒԽՎՈՏՐՈՒԿՆԵՐ

Տառերը փոխարինել թվերով այնպես, որպեսզի ստացվեն ճշգրիտ մաթեմատիկական արտահայտություններ: Յուրաքանչյուր տառ փոխարինում է մեկ թվի: Որոշ գլուխկոտրուկներ ունեն մեկից ավելի լուծումներ:

I.	II.	III.	IV.
ՄԵԿ	ԵՐԿՈՒ	ԵՐԿՈՒ	ՍՈՎՈՐԵԼ
+	+	+	+
ՄԵԿ	ԵՐԿՈՒ	ԵՐԵԶ	ՍՈՎՈՐԵԼ
ԵՐԿՈՒ	ՉՈՐՍ	ՉԻՆԳ	ԳԻՏԵԼԻՔ
V.	VI.	VII.	VIII.
ՊԱՐՏԶ	ԴՐԱՍ	ՄԱՐԴ	ԳԻՆԻ
+	+	-	+
ՊԱՐՏԶ	ԴՐԱՍ	ԴՐԱՍ	ՕՂԻ
ՏՈԿՈՍ	ԱՐԺԵՔ	ՍՈՍ	ՎԹԱՐ

Առաջարկեց Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆԸ Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼՈՒՍԱՐԱՐ | Գլխավոր՝ **«Լուսարար» ՓԲԸ** | Մտեփանակերտ, Զ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru | Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոտ» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3115: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: | Ստորագրված է տպագրության՝ 18.02.2012թ.: